«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
«Էլեկտրաէներգետիկական
Համակարգի օպերատոր» ՓԲԸ
գլխավոր տնօրեն
_____ Մ. ՄԱՆԱՍԱԿԱՆՅԱՆ
« 30 » դեկտեմբերի 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ 2020-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1.	Հապավումներ.....	4
2.	Ներածություն.....	5
3.	Երկարաժամկետ ծրագրի իրականացման պլան.....	11
4.	ՀՀ ԷԷՀ-ի 2020-2024թթ. երկարաժամկետ պլանավորման ծրագրի իրականացման գրաֆիկական արտապատկերումը.....	17
5.	ՀՀ ԷԷՀ-ի ներքին սպառման բազային և լավատեսական սցենարների մշակման մեթոդաբանությունը.....	22
6.	2020-2024թթ. ՀՀ էլեկտրական էներգիայի ներքին սպառման կանխատեսման արդյունքները.....	32
7.	ՀՀ ԷԷՀ-ում գործող և շահագործումից դուրս բերված էլեկտրական կայանների ագրեգատների դրվածքային հզորությունների վերաբերյալ տեղեկատվություն.....	36
8.	2020-2024թթ. ՀՀ ԷԷՀ-ում գործող և պլանավորվող էլեկտրական կայանների գործող և պլանավորվող դրվածքային հզորությունները և կանխատեսվող էլեկտրաէներգիայի արտադրանքը ըստ տարիների.....	38
9.	2020-2024թթ-ի ՀՀ ԷԷՀ-ի հզորության և էլեկտրաէներգիայի հաշվեկշիռների կազմում և գնահատում.....	41
10.	Հաշվեկշիռները Սցենար1 սցենարի բազային դեպքի համար.....	42
10.1	2020թ-ի հզորության հաշվեկշիռ ըստ տարվա սեզոնների առավելագույն, կիսապիկային և նվազագույն ռեժիմների համար.....	42
10.2	2021թ-ի հզորության հաշվեկշիռ ըստ տարվա սեզոնների առավելագույն, կիսապիկային և նվազագույն ռեժիմների համար.....	43
10.3	2022թ-ի հզորության հաշվեկշիռ ըստ տարվա սեզոնների առավելագույն, կիսապիկային և նվազագույն ռեժիմների համար.....	44
10.4	2023թ-ի հզորության հաշվեկշիռ ըստ տարվա սեզոնների առավելագույն, կիսապիկային և նվազագույն ռեժիմների համար.....	45

10.5 2024թ-ի հզորության հաշվեկշիռ ըստ տարվա սեզոնների առավելագույն, կիսապիկային և նվազագույն ռեժիմների համար..... 46

11. Հաշվեկշիռները Սցենար1 սցենարի լավատեսական դեպքի համար.. 47

12. Հաշվեկշիռները Սցենար2 սցենարի բազային դեպքի համար..... 48

13. Պլանավորվող նոր էլեկտրական կայանների ԷԷՀ-ին միացման կետերը և էլեկտրական փոխարինման սխեմաները..... 49

14. Հաղորդման ցանցի ռեժիմների գնահատում ռեժիմային հաշվարկների իրականացման միջոցով ըստ 2020-2024թթ-ի կանխատեսվող հզորությունների հաշվեկշիռների 51

15. Հաշվարկային ռեժիմների վերլուծություն՝ ԷԷՀ-ի տարրերով հոսքերի և թողունակության վերստուգում, հաղորդման ցանցի լարման ռեժիմների վերստուգում, խնդիրների բացահայտում և ճշգրտում..... 53

16. ԷԷՀ-ի Բնականոն և Վթարային ռեժիմների հաշվարկ (N-1 հաշվարկ): ԷԷՀ-ի տարրերի փոխանջատումներով տարբեր ռեժիմների դիտարկում, հաշվարկ, վերլուծություն և խնդիրների բացահայտում..... 58

17. Հաղորդման ցանցի զարգացման և ուժեղացման միջոցառումների մշակում՝ հոսքաբաշխման, լարման ռեժիմների և ըստ տարրերի թողունակության ապահովման համար..... 78

18. Կանխատեսվող նոր հզորությունների տեղանքի և հետևաբար ԷԷՀ-ին միացման կետի որոշմանն ուղղված հաշվարկների իրականացում մինիմալ ծախսումների պայմանից ելնելով՝ հաշվի առնելով ԷԷՀ-ի հուսալիության և անվտանգության ցուցանիշները..... 80

19. Կանխատեսվող նոր զարգացումներից հնարավոր շեղումների դեպքում ԷԷՀ-ի վրա ազդեցության գնահատում..... 86

20. Հաղորդման ցանցի կարճ միացման ռեժիմների հաշվարկային մոդելի նախապատրաստում: Հաշվարկների իրականացում, արդյունքների վերլուծություն և խնդիրների բացահայտում 91

21. Արտադրող կայաններում հզորության անհրաժեշտ պահուստի ծավալների հաշվարկ «ԷԷՀ-ի Հուսալիության և անվտանգության ցուցանիշներ»-ում բերված պահանջներին համապատասխան..... 128

22. ԷԷՀ-ի ստատիկ կայունության հաշվարկների իրականացում, արդյունքների վերլուծություն, խնդիրների բացահայտում և բարե-

լավմանն ուղղված միջոցառումների մշակում..... 137

23. ԷԷՀ-ի դինամիկ կայունության հաշվարկների իրականացում՝ հաղորդող համակարգի տարբեր խոտորումներին դիմակայելու ընդունակությունը վերստուգելու համար..... 143

24. Ռելեական պաշտպանության և հակավթարային ավտոմատիկայի նախադրվածքների երկարաժամկետ ծրագրով նախատեսված ռեժիմներին համապատասխանության ստուգում..... 164

25. Հայաստանի Հանրապետության Էլեկտրաէներգետիկական համակարգի հաղորդման ցանցի 2020-2024թթ-ի զարգացման ծրագիր..... 166

Հավելված 1

Հավելված 2

Հավելված 3

Հավելված 4

Հավելված 5

Հավելված 6

Հավելված 7

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ- Հայաստանի Հանրապետություն,
ԷԳՀԻ- Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ,
ԷԷՀՕ- Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր,
ՀԾԿՀ- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով,
ՀՎԷԷՀ- Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ,
ՀԲ- Համաշխարհային բանկ,
ՀՆԱ- համախառն ներքին արդունք,
ԷՀ- էներգահամակարգ,
ԷԷՀ- էլեկտրաէներգետիկական համակարգ,
ԷԿ- Էլեկտրական կայան,
ԷՀԳ- Էլեկտրահաղորդման գիծ,
ՕԳ- օդային գիծ,
ՓՀԷԿ- Փոքր հիդրոէլեկտրակայան,
ՄԷԳ- Միջազգային էներգետիկ գործակալություն,
ՀԱԷԿ- Հայկական ատոմային էլեկտրակայան,
Բն.պ.- բնականոն պատահար,
Բաց.պ.- բացառիկ պատահար,
Արտ.պ- արտակարգ պատահար,
Կ.Մ.- կարճ միացում,
ԿՄ(3)- սիմետրիկ եռաֆազ կարճ միացում,
N_k կամ N- ԷԷՀ-ի որևէ բնականոն իրավիճակ (N_0, N_1, N_2, ... N_k, որտեղ k -ն ԷԷՀ-ի նորոգվող տարրերի քանակն է),
N_k -1 կամ N-1- ԷԷՀ-ի իրավիճակ՝ առաջացած որևէ պատահարի հետևանքով,
ԱՀՊՍ- անջատիչի հրաժարման պահուստավորման սարքվածք,
ԱԿՄ- ավտոմատ կրկնակի միացում,
ԿԽԿԱ- կայունության խախտման կանխման ավտոմատիկա,
ՌՊ- ռելեական պաշտպանություն,
ՌՊԱ- ռելեական պաշտպանություն և ավտոմատիկա,
ՄՊ- միկրոպրոցեսոր,
ԵԿ, ե/կ- ենթակայան,
ԱԿ- արևային կայան:

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԷԷՀ-ի երկարաժամկետ պլանավորման և զարգացման ծրագիրը առաջին անգամ մշակվում է հնգամյա ժամանակահատվածի համար՝ 2020-2024թթ.-ի համար:

Երկարաժամկետ պլանավորման ծրագրի նպատակը ԷԷՀ-ի զարգացման ծրագրի մշակումն է՝ ԷԷՀ-ի հուսալի և անվտանգ աշխատանքի ապահովման համար:

Երկարաժամկետ պլանավորումն իրականացվում է հիմք ընդունելով Ցանցային կանոնները, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի սույն բաժնի, տեխնիկական կանոնակարգերի պահանջները և ԷԷՀ-ի հուսալիության և անվտանգության ցուցանիշները:

Երկարաժամկետ պլանավորման ընթացքում պետք է դիտարկվի ԷԷՀ-ում հետևյալ միջոցառումների և գործառույթների իրականացումը.

- նոր տեղակայանքների կառուցումը և գործող տեղակայանքների շահագործումից դուրս բերումը,
- գործող տեղակայանքների վերակառուցումը կամ վերազինումը,
- ռելեական պաշտպանության և հակավթարային ավտոմատիկայի նախադրվածքների երկարաժամկետ ծրագրով նախատեսված ռեժիմներին համապատասխանության ստուգում,
- անհրաժեշտության դեպքում հաղորդման ցանցի տոպոլոգիայի փոփոխումը (զարգացում):

Երկարաժամկետ պլանավորման ծրագրի մշակումը իրականացվում է հետևյալ փուլերով՝

1. տեղեկատվության հավաքագրում և մշակում՝ «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի կողմից տրամադրած տեղեկատվության հիման վրա, մասնավորապես՝

- Որակավորված արտադրողներից, Հաղորդողից, Բաշխողից և Որակավորված սպառողներից անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում և տրամադրում,

- հարևան երկրների ԷԷՀ-երի հետ միջհամակարգային փոխհոսքերի իրականացման հնարավորությունների գնահատում, համակարգային փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և տրամադրում,
- շահագործման մեջ գտնվող արտադրող տեղակայանքների շահագործումից դուրս բերման, վերազինման կամ փոխարինման վերաբերյալ ծավալների և ժամկետների մասով,
- նոր տեղակայանքների ծավալների (հզորությունների), միացման կետի և շահագործման հանձնման ժամկետների մասով,
- արտադրող կայանների ագրեգատների նորոգումների ընթացքի վերաբերյալ և ժամանակացույցի մասով,
- հաղորդող համակարգում սխեմայի տոպոլոգիայի և առանձին տարրերի՝ նոր կամ շահագործման մեջ գտնվով ԷՀԳ-ի, ուժային տրանսֆորմատոր-ների և այլն, կանխատեսվող փոփոխությունների մասով, (հարաչափերի և միացման սխեմայի վերաբերյալ տեղեկատվություն),
- 2020-2024թթ-ի ռեժիմային կանխատեսումների մասով տեղեկատվության գնահատում, այն է՝ հզորության հաշվեկշռի գնահատում ըստ առավելագույն, կիսապիկային և մինիմալ ռեժիմների, և էլեկտրաէներգիա-յի հաշվեկշռի գնահատում ըստ ամիսների, սեզոնների և տարիների,
- հաղորդող համակարգի զարգացումներով պայմանավորված նոր կարևորագույն հանգույցների ռելեական պաշտպանության և հակավթարային ավտոմատիկայի նախադրվածքների վերստուգման նպատակով տեղեկատվության գնահատում,

2. երկարաժամկետ պլանավորման համար անհրաժեշտ ուսումնասիրությունների իրականացում,
3. կանխատեսվող ռեժիմների և գործընթացների մոդելավորում,
4. երկարաժամկետ ծրագրի մշակում:

ԷԷՀ-ի զարգացման պլանավորումը պետք է իրականացվի այնպես, որ.

1. ապահովվի ԷԷՀ-ի արտադրության և սպառման կանխատեսվող ռեժիմների համար ԷԷՀ-ի հուսալիության և անվտանգության ցուցանիշներով սահմանված հարաչափերը,
2. ապահովվի էլեկտրաէներգիայի կայուն մատակարարումը՝ համաձայն ԷԷՀ-ի հուսալիության անվտանգության սահմանված ցուցանիշների,
3. ԷԷՀ-ի որևէ տարրի (գեներատոր, էլեկտրահաղորդման գիծ, տրանսֆորմատոր և այլն) Հաշվարկային վթարի դեպքում ապահովվի ԷԷՀ-ի հուսալիության և անվտանգության ցուցանիշներով սահմանված ԷԷՀ-ի վթարային ռեժիմի հարաչափերը:

Պլանավորման ժամանակ հաշվի է առնվում էլեկտրաէներգիայի արտադրությունը, հաղորդումը, բաշխումը և հարևան երկրների ԷԷՀ-ի հետ միջհամակարգային էլեկտրահաղորդման գծերով իրականացվող էլեկտրաէներգիայի փոխհոսքերի ծավալները,

Պլանավորման գործընթացը ներառում է ԷԷՀ-ի աշխատանքային ռեժիմների գնահատականները ըստ առանձին տարիների բնութագրիչ ռեժիմների:

Պլանավորման գործընթացում դիտարկվում են ԷԷՀ-ի Բնականոն աշխատանքի խախտման հնարավոր դեպքերը և մշակվում են առաջարկություններ՝ ուղղված դրանց ազդեցությունների բացասական հետևանքների նվազեցմանը:

Երկարաժամկետ ծրագրում առաջարկվող միջոցառումների համար ներկայացվում է տեղակայանքների կառուցման կամ վերականգնման աշխատանքների իրականացման ժամանակացույցի գնահատականը, որը ներառում է այդ նախագծերի պլանավորման, նախագծման պետական և տեղական ինքնակառավարման, ինչպես նաև կարգավորող մարմիններից թույլտվությունների ստացման և կառուցման ժամկետները:

2020-2024թթ-ի ԷԷՀ-ի երկարաժամկետ պլանավորման համար անհրաժեշտ ուսումնասիրությունը ներառում են՝

1. ներքին պահանջարկի, ներմուծման, արտահանման և փոխհոսքերի դինամիկայի պատմական տվյալների գնահատում,
2. հաղորդման ցանցի աշխատանքի ռեժիմների գնահատում,
3. նոր կամ վերակառուցվող տեղակայանքների ԷԷՀ-ի միացման դեպքում՝ ԷԷՀ-ի վրա դրա ազդեցության գնահատում,
4. էլեկտրական էներգիայի և հզորության պահանջարկի կանխատեսվող փոփոխությունների և ազդեցության գնահատում, ինչպես նաև նոր տեղակայանքների շահագործման պատրաստ լինելու ժամկետի և առկա տեղակայանքներում թերությունների վերացման համար անհրաժեշտ գործողությունների գնահատում,
5. հոսքաբաշխման, կարճ միացման, ԷԷՀ-ի ստատիտ և դինամիկ կայունության, և տարբեր ռեժիմային իրավիճակների ուսումնասիրություններ,
6. ԷԷՀ-ին առնչվող Բնականոն և Վթարային ռեժիմներում ԷԷՀ-ի վարքագծի գնահատում,
7. խոտորումների կամ փոխանջատումների ժամանակ ԷԷՀ-ի վարքագծի գնահատում,
8. ցանկացած այլ ուսումնասիրություն ու գնահատում, որը կարող է պահանջվել՝ տնտեսապես հիմնավորված նվազագույն ծախսումներով ԷԷՀ-ի հետագա հուսալի և անվտանգ աշխատանքը երաշխավորելու համար:

ԷԷՀ-ի պլանավորման համար անհրաժեշտ ուսումնասիրություններն իրականացվում են մոդելավորման միջոցով:

ԷԷՀ-ի զարգացման կանխատեսումներն իրականացվում են զարգացման վրա ազդող իրական օբյեկտների, գործընթացների և երևույթների մոդելավորմամբ: ԷԷՀ-ի զարգացման մոդելները մշակվում են տնտեսության ոլորտներում և բնակչության կողմից էլեկտրաէներգիայի կանխատեսվող պահանջարկի ներքին աղբյուրներից բավարարման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտահանման և ներմուծման հնարավորությունների գնահատման համար:

ԷԷՀ-ի զարգացման մոդելավորման ընթացքում ընդունվում են հետևյալ հիմնական պայմանները՝

1. էլեկտրական հզորության պահանջարկը (կանխատեսումը) ներկայացվում է ըստ տարիների պիկային և նվազագույն բեռնվածքով ռեժիմների համար, ինչպես նաև կիսապիկային ռեժիմների համար՝ արևային կայանների առկայության դեպքում:
2. էլեկտրական էներգիայի և հզորության պահանջարկները մոդելավորվում են ներքին սպառման և արտահանման ու ներմուծման կանխատեսվող ռեժիմների համար,
3. իրականացվում են ուսումնասիրություններ՝ ԷԷՀ-ի ռեժիմների վրա կանխատեսվող բեռնվածքից շեղումների ազդեցությունը գնահատելու համար,
4. հաշվի են առնվում ԷԷՀ-ի տեղակայանքների նորոգման նպատակով պլանավորված աշխատանքից դուրս բերումը, ինչպես նաև ռեժիմների ճշգրտման համար անհրաժեշտ այլ սահմանափակումները,
5. հաղորդման տեղակայանքները մոդելավորվում են՝ տեխնիկական սպասարկման և շինարարության հետ կապված աշխատանքից դուրս բերումը, ինչպես նաև երկարաժամկետ հարկադրված աշխատանքից դուրս բերումը, հաշվի առնելու նպատակով,
6. իրականացվում է միջհամակարգային փոխհոսքերի մոդելավորում՝ ԷԷՀ-ի վրա դրանց ազդեցությունը ուսումնասիրելու համար,

Մոդելավորումն իրականացվում է ԷԷՀ-ի զարգացման բազային և լավատեսական սցենարների համար:

Մոդելավորման ընթացքում ԷԷՀ-ի բնութագրերը պետք է բավարարեն ԷԷՀ-ի անվտանգության և հուսալիության ցուցանիշներին:

Երկարաժամկետ ծրագրում սահմանվում են յուրաքանչյուր տարում ԷԷՀ-ի ակնկալվող միջոցառումները և բացահայտվում են ԷԷՀ-ի այն հատվածները, որտեղ պահանջվում է նոր տեղակայանքների կառուցում, ինչպես նաև ԷԷՀ-ի վերազինում՝ տնտեսապես հիմնավորված նվազագույն ծախսումներով ԷԷՀ-ի հետագա հուսալի և անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով:

Երկարաժամկետ ծրագիրը պարունակում է պլանավորման ժամանակահատվածի հինգ տարիներից յուրաքանչյուրի համար կանխատեսվող հզորությունների զարգացումը, ամփոփելով՝

1. էլեկտրական էներգիայի և հզորության պահանջարկի և արտադրության կանխատեսումը,
2. արտադրող կայաններում հզորությունների պահուստի անհրաժեշտ ծավալը հուսալիության և անվտանգության ցուցանիշների ապահովման համար,
3. առկա արտադրող տեղակայանքների տեխնիկական հարաչափերը՝ ներառ-յալ շահագործումից դուրս բերման և վերականգնման ծրագրերը,
4. նախատեսված նոր արտադրող տեղակայանքների նկարագրությունը,
5. հաղորդման ցանցի զարգացման և ուժեղացման միջոցառումների նկարագրությունը,
6. էլեկտրաէներգիայի պլանավորված ներմուծման ու արտահանման ծավալները,
7. էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման հաշվեկշիռը,
8. արտադրվող հզորության և էլեկտրաէներգիայի ավելցուկի կամ պակասորդի ծավալները, ինչպես նաև պահուստի պահանջարկը:

Երկարաժամկետ ծրագրի իրականացման պլան

Երկարաժամկետ ծրագիրը մշակվելու է հինգ փուլերով և ներառելու է իր մեջ հետևյալ գործընթացները՝

փուլ	Անվանում	Համառոտ նկարագրություն
1	Տվյալների հավաքագրում	Շահագործման մեջ գտնվող կամ պլանավորվող արտադրող հզորությունների, ներքին սպառման, միջհամակարգային կապը ապահովվող տարրերի և հոսքերի վերաբերյալ, հաղորդման ցանցի պլանավորվող փոփոխությունների վերաբերյալ և ծրագրի մշակման համար անհրաժեշտ այլ տեղեկատվության հավաքագրում:
2	Տվյալների մշակում	Հաշվարկային մոդելի նախապատրաստում ըստ 2020-2024թթ. պլանավորվող փոփոխությունների՝ հաղորդման ցանցի սխեմայի, միջհամակարգային կապերի, ինչպես նաև շահագործվող և պլանավորվող հզորությունների մասով: Հզորության հաշվեկշիռների նախապատրաստում ըստ 2020-2024թթ.-ի ամիսների առավելագույն, նվազագույն և կիսապիկային ռեժիմների: Երկարաժամկետ ծրագրի շրջանակներում դի-տարկվելիք սցենարների նկարագրության և ընդ-հանուր կառուցվածքի նախապատրաստում:
3	Հաշվարկների իրականացում	2020-2024թթ-ի երկարաժամկետ ծրագրով պլանավորված սցենարների համար հետևյալ հաշվարկների իրականացում՝ • Կայունացված ռեժիմների հաշվարկ, • N-1 հաշվարկներ, • Կարճ միացման ռեժիմների հաշվարկներ (3-ֆազ կ.մ. ռեժիմում հաշվարկներ), • Ստատիկ կայունության սահմանի որոշման հաշվարկներ,

		• Դինամիկ կայունության հաշվարկներ, • Էլեկտրական կայանների հզորության պահուստի ծավալների որոշման հաշվարկներ:
4	Զարգացման և հզորացման միջոցառումների մշակում	Հաշվարկային արդյունքների վերլուծության իրականացում, ոչ թույլատրելի ռեժիմների բացահայտում, պլանավորվող ԷԷՀ-ի թույլ (խնդրահարույց) ցանցային հատվածների բացահայտում: Անհրաժեշտության դեպքում բարելավմանն ուղված ԷԷՀ-ի զարգացման և հզորացման միջոցառումների և առաջարկություն-ների մշակում:
5	Երկարաժամկետ ծրագրի մշակում	Հաշվարկային գործընթացի ընթացքում ստացված արդյունքների վերջնական վերլուծություն, առաջարկությունների մշակում և երկարաժամկետ ծրագրի ավարտական հաշվետվության մշակում:

Երկարաժամկետ ծրագրի հիմնական գործընթացները ներկայացված են ստորև՝


1. 2020-2024թթ-ի երկարաժամկետ ծրագրի մշակման համար անհրաժեշտ «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի կողմից տրամադրած տեղեկատվության գնահատում:
2. 2020-2024թթ-ի ներքին պահանջարկի, ներկրման, արտահանման դինամիկայի գնահատում:
3. Ելակետային տեղեկատվության հիման վրա հաղորդման ցանցի մոդելի ճշգրտում և նախապատրաստում 2020-2024թթ-ի կանխատեսումային զարգացումների կիրառմամբ:
4. Հաղորդման ցանցի ռեժիմների գնահատում ռեժիմային հաշվարկների իրականացման միջոցով ըստ 2020-2024թթ-ի կանխատեսվող հզորություն-ների հաշվեկշիռների: Հաշվարկային ռեժիմների վերլուծութուն՝ ԷԷՀ-ի տարրերով հոսքերի և թողունակության վերստուգում, հաղորդման ցանցի լարման ռեժիմների վերստուգում, խնդիրների բացահայտում և ճշգրտում:



5. ԷԷՀ-ի Բնականոն և Վթարային ռեժիմների հաշվարկ (N - 1 հաշվարկ): ԷԷՀ-ի ԷՀԳ-ի և կայանների փոխանջատումներով տարբեր ռեժիմների դիտարկում, հաշվարկ, վերլուծություն և խնդիրների բացահայտում:
6. Հաղորդման ցանցի զարգացման և ուժեղացման միջոցառումների մշակում՝ հոսքաբաշխման, լարման ռեժիմների և ըստ տարրերի թողունակության ապահովման համար (անհրաժեշտության դեպքում):
7. Նոր կամ վերակառուցվող տեղակայանքների առկայության դեպքում վերջիններիս ԷԷՀ-ի վրա ազդեցության գնահատում՝ ԷԷՀ-ի պահվածքի ուսումնասիրություն:
8. Կանխատեսվող բեռնվածքներից հնարավոր շեղումների դեպքում ԷԷՀ-ի վրա ազդեցության գնահատում:
9. Կանխատեսվող նոր հզորությունների տեղանքի և հետևաբար ԷԷՀ-ին միացման կետի որոշմանն ուղղված հաշվարկների իրականացում մինիմալ ծախսումների պայմանից ելնելով հաշվի առնելով ԷԷՀ-ի հուսալիության և անվտանգության ցուցանիշները:
10. Պլանավորվող նոր կայանների սահմանված ժամկետում չապահովման և հին հզորությունների հավանական շահագործումից դուրս բերման կամ շահագործման երկարացման պայմաններում վատատեսական սցենարների դիտարկում:
11. Արտադրող կայաններում հզորության անհրաժեշտ պահուստի ծավալների հաշվարկ «ԷԷՀ-ի Հուսալիության և անվտանգության ցուցանիշներ»-ում բերված պահանջներին համապատասխան:
12. Հաղորդման ցանցի կարճ միացման ռեժիմների հաշվարկային մոդելի նախապատրաստում: Հաշվարկների իրականացում, արդյունքների վերլուծություն և խնդիրների բացահայտում: Կարճ միացման ռեժիմների դիմակայմանն ուղղված միջոցառումների մշակում (անհրաժեշտության դեպքում):
13. ԷԷՀ-ի ստատիկ կայունության հաշվարկների իրականացում, արդյունքների վերլուծություն, խնդիրների բացահայտում և բարելավմանն ուղղված միջոցառումների մշակում (անհրաժեշտության դեպքում):
14. ԷԷՀ-ի դինամիկ կայունության հաշվարկների իրականացում՝ հաղորդման

համակարգի տարբեր խոտորումներին դիմակայելու ընդունակությունը վերստուգելու համար:

15. Ռելեական պաշտպանության և հակավթարային ավտոմատիկայի նախադրվածքների երկարաժամկետ ծրագրով նախատեսված ռեժիմներին համապատասխանության ստուգում:
16. ԷԷՀ-ի 2020-2024թթ-ի երկարաժամկետ ծրագրի մշակում:


ՀՀ ԷԷՀ-ի 2020-2024թթ. երկարաժամկետ պլանավորման ծրագրի մշակման շրջանակներում դիտարկվելու է ՀՀ ԷԷՀ-ի զարգացման երկու հիմնական սցենարներ՝ Սցենար 1 և Սցենար 2: Ստորև բերված աղյուսակում բերվում է սցենարների նկարագրությունը:

Սցենար No	Տարի	Հաստատուն հոսանքի սարք (HVDC), ՄՎտ	Հայաստանի ԷԷՀ-ի աշխատանքը հարևան ԷԷՀ-ի հետ	Դիտարկվող ռեժիմներ		Հայաստանի ԷԷՀ-ի ներքին սպառման կանխատեսում
1	2020 2021 2022 2023 2024	-	Հայաստան-Իրան 	Ամառ	Առավելագույն Կիսապիկային Նվազագույն	Բազային
				Աշուն	Առավելագույն Կիսապիկային Նվազագույն	
				Ձմեռ	Առավելագույն Կիսապիկային Նվազագույն	
				Գարուն	Առավելագույն Կիսապիկային Նվազագույն	

1	2020 2021 2022 2023 2024	-	Հայաստան-Իրան 	Ձմեռ (առավելագույն)	Լավատեսական
2*	2022 2023 2024	350	Վրաստան-Հայաստան-Իրան 	Գարուն (առավելագույն)	Բազային

*-Սցենար 2-ի հաշվարկները իրականացվում են 2022թ-ից ներառյալ, քանի որ համաձայն կանխատեսումային պլանի Հայաստան-Վրաստան նոր կապը (HVDC) պլանավորվում է 2022թ-ից սկսած:

ՀՀ ԷԷՀ-ի 2020-2024թթ. երկարաժամկետ պլանավորման ծրագրի իրականացման գրաֆիկական արտապատկերումը



ՀՀ ԷԷՀ-ի 2020-2024թթ. երկարաժամկետ պլանավորման ծրագրի մանրակրկիտ կառուցվածքը ներկայացված է ստորև՝

Սցենար 1-ի շրջանակներում հաշվարկները և ուսումնասիրությունները կիրականացվեն ՀՀ ԷԷՀ-ի ներքին սպառման երկու սցենարների համար՝ բազային և լավատեսական: Ներքին սպառման բազային և լավատեսական սցենարների ընտրության հիմնավորումը և մանրակրկիտ նկարագրությունը բերվում է սույն հաշվետվությունում:

Սցենար 1-ի շրջանակներում ներքին սպառման (բազային) սցենարով կիրականացվեն հետևյալ հաշվարկները՝

- ԿՌ (կայունացված ռեժիմի) հաշվարկ Ձմռան, Գարնան, Ամռան, Աշնան (առավելագույն, կիսապիկային, նվազագույն) ռեժիմների համար:
- Հաշվարկային ռեժիմների վերլուծություն՝ ԷԷՀ-ի տարրերով հոսքերի և թողունակության վերստուգում, հաղորդման ցանցի լարման ռեժիմների վերստուգում, խնդիրների բացահայտում և ճշգրտում:
- ԷԷՀ-ի Բնականոն և Վթարային ռեժիմների հաշվարկ (N - 1 հաշվարկ): ԷԷՀ-ի ԷՀԳ-ի և կայանների փոխանջատումներով տարբեր ռեժիմների դիտարկում, հաշվարկ, վերլուծություն և խնդիրների բացահայտում:
- Հաղորդման ցանցի զարգացման և ուժեղացման միջոցառումների մշակում՝ հոսքաբաշխման, լարման ռեժիմների և ըստ տարրերի թողունակության ապահովման համար (անհրաժեշտության դեպքում):
- Նոր կամ վերակառուցվող տեղակայանքների առկայության դեպքում վերջիններիս ԷԷՀ-ի վրա ազդեցության գնահատում՝ ԷԷՀ-ի պահվածքի ուսումնասիրություն:
- Պլանավորվող նոր կայանների սահմանված ժամկետում չապահովման և հին հզորությունների հավանական շահագործումից դուրս բերման կամ շահագործման երկարացման պայմաններում ԷԷՀ-ի վրա ազդեցության գնահատում:
- ԷԷՀ-ի ստատիկ կայունության սահմանի որոշման հաշվարկներ, արդյունքների վերլուծություն, խնդիրների բացահայտում և բարելավմանն ուղղված միջոցառումների մշակում (անհրաժեշտության դեպքում):

- Արտադրող կայաններում հզորության անհրաժեշտ պահուստի ծավալների հաշվարկ «ԷԷՀ-ի Հուսալիության և անվտանգության ցուցանիշներ»-ում բերված պահանջներին համապատասխան:
- Ձմռան, Գարնան, Ամռան, Աշնան (առավելագույն) ռեժիմներում հաղորդման ցանցի 3-ֆ ԿՄ (կարճ միացման) հոսանքների հաշվարկ, արդյունքների վերլուծություն և խնդիրների բացահայտում: Կարճ միացման ռեժիմների դիմակայմանն ուղղված միջոցառումների մշակում անհրաժեշտության դեպքում:
- ԷԷՀ-ի ԴԿ (դինամիկ կայունության) հաշվարկներ՝ հաղորդող համակարգի տարբեր խոտորումներին դիմակայելու ընդունակությունը վերստուգելու համար: Կկատարվի ԷԷՀ-ի կայունության գնահատում, կհետազոտվեն ակտիվ հզորության, ռոտորի անկյան, հաճախականության և այլ ռեժիմային հարաչափեր:
- Կանխատեսվող նոր հզորությունների ԷԷՀ-ին միացման օպտիմալ կետի որոշմանն ուղղված հաշվարկների իրականացում մինիմալ ծախսումների պայմանից ելնելով հաշվի առնելով ԷԷՀ-ի հուսալիության և անվտանգության ցուցանիշները:

Սցենար 1-ի շրջանակներում ներքին սպառման (լավատեսական) սցենարով կիրականացվեն հետևյալ հաշվարկները՝

- ԿՌ-ի հաշվարկ Ձմռան (առավելագույն) ռեժիմի համար:
- Հաշվարկային ռեժիմների վերլուծություն՝ ԷԷՀ-ի տարրերով հոսքերի և թողունակության վերստուգում, հաղորդման ցանցի լարման ռեժիմների վերստուգում, խնդիրների բացահայտում և ճշգրտում:
- ԷԷՀ-ի Բնականոն և Վթարային ռեժիմների հաշվարկ (N - 1 հաշվարկ): ԷԷՀ-ի ԷՀԳ-ի և կայանների փոխանջատումներով տարբեր ռեժիմների դիտարկում, հաշվարկ, վերլուծություն և խնդիրների բացահայտում:
- Հաղորդման ցանցի զարգացման և ուժեղացման միջոցառումների մշակում՝ հոսքաբաշխման, լարման ռեժիմների և ըստ տարրերի թողունակության ապահովման համար (անհրաժեշտության դեպքում):

- Նոր կամ վերակառուցվող տեղակայանքների առկայության դեպքում վերջիններիս ԷԷՀ-ի վրա ազդեցության գնահատում՝ ԷԷՀ-ի պահվածքի ուսումնասիրություն:
- Արտադրող կայաններում հզորության անհրաժեշտ պահուստի ծավալների հաշվարկ «ԷԷՀ-ի Հուսալիության և անվտանգության ցուցանիշներ»-ում բերված պահանջներին համապատասխան:

Սցենար 2-ի շրջանակներում հաշվարկները և ուսումնասիրությունները կիրականացվեն ՀՀ ԷԷՀ-ի ներքին սպառման (բազայիս) սցենարի համար: Ստորև բերվում է սցենար 2-ի շրջանակներում պլանավորվող հաշվարկների և ուսումնասիրությունների ցանկը՝

- ԿՌ-ի հաշվարկ Գարնան (առավելագույն) ռեժիմների համար:
- Հաշվարկային ռեժիմների վերլուծություն՝ ԷԷՀ-ի տարրերով հոսքերի և թողունակության վերստուգում, հաղորդման ցանցի լարման ռեժիմների վերստուգում, խնդիրների բացահայտում և ճշգրտում:
- ԷԷՀ-ի Բնականոն և Վթարային ռեժիմների հաշվարկ (N - 1 հաշվարկ): ԷԷՀ-ի ԷՀԳ-ի և կայանների փոխանջատումներով տարբեր ռեժիմների դիտարկում, հաշվարկ, վերլուծություն և խնդիրների բացահայտում:
- Հաղորդման ցանցի զարգացման և ուժեղացման միջոցառումների մշակում՝ հոսքաբաշխման, լարման ռեժիմների և ըստ տարրերի թողունակության ապահովման համար անհրաժեշտության դեպքում:
- Նոր կամ վերակառուցվող տեղակայանքների առկայության դեպքում վերջիններիս ԷԷՀ-ի վրա ազդեցության գնահատում՝ ԷԷՀ-ի պահվածքի ուսումնասիրություն:
- ԷԷՀ-ի ստատիկ կայունության հաշվարկներ, արդյունքների վերլուծություն, խնդիրների բացահայտում և բարելավմանն ուղղված միջոցառումների մշակում անհրաժեշտության դեպքում:
- Արտադրող կայաններում հզորության անհրաժեշտ պահուստի ծավալների հաշվարկ «ԷԷՀ-ի Հուսալիության և անվտանգության ցուցանիշներ»-ում բերված պահանջներին համապատասխան:

- ԷԷՀ-ի դինամիկ կայունության հաշվարկներ գարնան (առավելագուն)՝ հաղորդող համակարգի տարբեր խոտորումներին դիմակայելու ընդունակությունը վերստուգելու համար: Կկատարվի ԷԷՀ-ի կայունության գնահատում, կհետազոտվեն ակտիվ հզորության, ռոտորի անկյան, հաճախականության և այլ ռեժիմային հարաչափեր:

ՀՀ ԷԷՀ-ի ներքին սպառման բազային և լավատեսական սցենարների մշակման մեթոդաբանությունը

2020-2024 թվականներին ՀՀ էլեկտրական էներգիայի ներքին սպառման կանխատեսումը

Էլեկտրական էներգիայի ներքին սպառման կանխատեսումն ԷԷՀ-ի զարգացման պլանավորման առանցքային խնդիրներից մեկն է: Էլեկտրաէներգիայի պահանջարկի կանխատեսման նպատակով լայն կիրառություն են ստացել ռազմավարական կառավարման [1, 2] և ռեգրեսիոն վերլուծության [3, 4, 5, 6] տեսությունների մեթոդները:

Տնտեսության ոլորտներում (արդյունաբերություն, ծառայություններ և գյուղատնտեսություն) էլեկտրաէներգիայի պահանջարկի գնահատում

Տնտեսության ոլորտներում էլեկտրաէներգիայի պահանջարկի կանխատեսման նպատակով, վերը նշված մեթոդների հետ մեկտեղ, կիրառվել է նաև ազդող գործոնների դեկոմպոզիցիայի [7] սկզբունքը, որը ներկայացվում է հետևյալ բանաձևով.

$$W_{\Sigma} = A\sum_{j} S_j \cdot e_j \,, \qquad (1)$$

որտեղ՝

W_{Σ}. էլեկտրաէներգիայի գումարային պահանջարկն է, մլն կՎտ·ժ,

A – համախառն ներքին արդյունքն է (ՀՆԱ), մլն USD;

j – տնտեսության ոլորտի ինդեքսն է,

S_j– տնտեսության կառուցվածքն է, որը ցույց է տալիս ՀՆԱ-ում տնտեսության j-րդ ոլորտի մասնաբաժինը,

e_j– տնտեսության j-րդ ոլորտի տեսակարար էլեկտրատարողությունն է, մլն կՎտ·ժ/USD:

Նման մոտեցումը թույլ է տալիս իրականացնել էլեկտրաէներգիայի պահանջարկի կանխատեսում՝ հաշվի առած ինչպես ՀՆԱ-ի, այնպես էլ

տնտեսության կառուցվածքի և տարբեր ոլորտների էլեկտրատարության փոփոխության միտումները:

ՀԲ-ի և ՄԷԳ-ի տարբեր երկրների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՆԱ-ի աճը բերում է տնտեսության կառուցվածքի փոփոխության (ավելանում է ծառայությունների մասնաբաժինը և նվազում գյուղատնտեսության մասնաբաժինը), ինչպես նաև տնտեսության ոլորտների էլեկտրատարությունների նվազմանը:

Այնուամենայնիվ, էլեկտրաէներգիայի պահանջարկի կանխատեսումը, հատկապես զարգացող երկների համար, որոնց դասվում է նաև ՀՀ, մնում է բարդ խնդիր՝ հղի բարձր մակարդակի անորոշություններով:

Դրված խնդրի լուծման համար կիրառվել են հետևյալ մոտեցումները.

- ՀՀ զարգացումները բնորոշող մակրոտնտեսական ցուցանիշների պատմական մեծությունների հավաքագրում (ՀՆԱ, բնակչության քանակ, ՀՆԱ-ում տնտեսության ոլորտների մասնաբաժին և այլ),
- էլեկտրաէներգիայի սպառման պատմական տվյալների հավաքագրում ըստ ՀՀ տնտեսության ոլորտների (*աղբյուրը՝ ՀՀ ՀԾԿՀ*) և դրանց էլեկտրատարությունների հաշվարկ,
- հավաքագրված տեղեկատվության համեմատական վերլուծություն և էլեկտրաէներգիայի պահանջարկի վրա դրանց ազդեցության աստիճանի որոշում:

Համեմատական վերլուծության հիման վրա (1) բանաձևի կիրառմամբ հաշվարկվում է էլեկտրաէներգիայի կանխատեսվող մեծությունը:

Այլ ոլորտներում (բնակելի, տրասպորտ, այլ սպառողներ) էլեկտրաէներգիայի պահանջարկի գնահատում

Դրված խնդրի լուծման համար կիրառվել են հետևյալ մոտեցումները.

- էլեկտրաէներգիայի սպառման պատմական տվյալների հավաքագրում ըստ ոլորտների (*աղբյուրը՝ ՀՀ ՀԾԿՀ*),

- հավաքագրված տեղեկատվության համեմատական վերլուծություն և էլեկտրաէներգիայի պահանջարկի վրա դրանց ազդեցության աստիճանի որոշում:

Պատմական վիճակագրական մակրոտնտեսական տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն

Վիճակագրական մակրոտնտեսական տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀԲ-ի, ՄԷԳ-ի և ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքերը:

Նկ. 1-ում բերված է ՀՀ ՀՆԱ-ի փոփոխությունը 2003-2017թթ.:



Նկ. 1. ՀՀ ՀՆԱ-ի (2010թ. բերված) փոփոխությունն ըստ տարիների:

Նկար 1-ում անընդհատ գծով բերված են ՀՆԱ-ի փոփոխության վիճակագրական տվյալներն, իսկ կետավոր գծով՝ փոփոխման միտումը: ՀՆԱ-ի փոփոխման միտումը ներկայացվում է հետևյալ բանաձևով.

$$ՀՆԱ = 6030.8 \cdot (x - 2002)^{0.24}, \quad (2)$$

որտեղ՝ x - հերթական տարվա համարն է:


Բանաձև (2)-ում ներկայացված միտումը և պատմական վիճակագրական տվյալների կորելացիայի գործակիցը հավասար է R=0.95, որը համարվում է բավականին բարձր:

Դիտարկվել են ՀՆԱ-ի փոփոխման կանխատեսման երկու սցենարներ, այսպես կոչված դեպքեր.

- **բազիսային՝** ՀՆԱ-ի փոփոխությունը պահպանում է բանաձև (2)-ով ներկայացված պատմական միտումը,
- **լավատեսական՝** ՀՆԱ-ի փոփոխությունը պահպանում է ՀԲ-ի կողմից մինչև 2020թ. կանխատեսվող տարեկան 4% մակարդակը:

ՀՆԱ-ի կառուցվածքի փոփոխությունը տարիների ընթացքում պահպանում է զարգացող երկրների միտումները, այսինքն, ՀՆԱ-ի աճի հետ ավելանում է ծառայությունների մասնաբաժինը և նվազում գյուղատնտեսության մասնաբաժինը: ՀՆԱ-ի և ծառայությունների մասնաբաժնի կորելացիայի գործակիցը հավասար է R=0.77, գյուղատնտեսությանը՝ R=-0.85 և արդյունաբերությանը՝ R=-0.69:

Նկ.2-ում բերված են ՀՀ ՀՆԱ-ի կառուվածքի փոփոխության միտումները 2003-2017թթ.:



Նկ.2. ՀՆԱ-ի կառուցվածքի փոփոխության միտումներն ըստ տարիների:

Նկարում պատկերված կետավոր գիծը ցույց է տալիս տնտեսության ոլորտների փոփոխման միտումները: Այդ միտումները ներկայացվում են հետևյալ բանաձևերով.

$$S_{\text{ծառ.}} = 28.13 \cdot (x - 2002)^{0.26}, \quad (3)$$

$$S_{\text{արդ.}} = 53.22 \cdot (x - 2002)^{-0.25}, \quad (4)$$

$$S_{\text{գյուղ.}} = 25.01 \cdot (x - 2002)^{-0.15}, \quad (5)$$

որտեղ՝

$S_{\text{ծառ.}}, S_{\text{արդ.}}$ և $S_{\text{գյուղ.}}$ – համապատասխանաբար ծառայությունների ոլորտի, արդյունաբերության և գյուղատնտեսության մասնաբաժիններն են ՀՆԱ-ում, %:


Տնտեսության ոլորտների փոփոխության պատմական տվյալների և միտումների կորելացիայի գործակիցները հավասար են.

- ծառայությունների ոլորտի համար՝ 0.82,
- արդյունաբերության համար՝ 0.89,
- գյուղատնտեսության համար՝ 0.87:

Քանի որ արտադրության և գյուղատնտեսության մասնաբաժինների կորելացիայի գործակիցներն ավելի բարձր են, քան ծառայությունների ոլորտինը, ապա դրանց մասնաբաժինները բնութագրող (4) և (5) բանաձևերն ընդունվել են որպես հիմնական, իսկ ծառայությունների ոլորտի մասնաբաժինը՝ օժանդակ և որոշվում է հետևյալ բանաձևով.

$$S_{\text{ծառ.}} = 100 - S_{\text{գյուղ.}} - S_{\text{արդ.}}, \quad (6)$$

Նկ.3-ում բերված են 2003-2017թթ. բնակչության թվաքանակի տվյալները և դրանց փոփոխման միտումները՝ կառուցված ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալների:



Նկ.3. Բնակչության թվաքանակի տվյալները և դրանց փոփոխման միտումները

Նկարում պատկերված կետավոր գիծը ցույց է տալիս բնակչության թվաքանակի փոփոխման միտումները:

Թեև նկարից երևում է, որ 2003-2017 թթ. ընթացքում նկատվում է բնակչության թվաքանակի նվազում, սակայն կանխատեսումային հաշվարկներում ընդունվել է տարեկան 0.5% աճ:

Տնտեսության ոլորտներում (արդյունաբերություն, ծառայություններ և գյուղատնտեսություն) էլեկտրաէներգիայի պահանջարկի գնահատում

Տնտեսական ոլորտների էլեկտրատարությունը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$e_j = \frac{W_j}{A*(S_j/100)}, \qquad (7)$$

որտեղ՝

A – համախառն ներքին արդունքն է (ՀՆԱ), մլն USD;


j – տնտեսության ոլորտի ինդեքսն է,

W_j- տնտեսության j-րդ ոլորտում սպառված էլեկտրաէներգիան է, մլն կՎտ·ժ,

S_j– տնտեսության կառուցվածքն է, որը ցույց է տալիս է ՀՆԱ-ում տնտեսության j-րդ ոլորտի մասնաբաժինը, %,

e_j– տնտեսության j-րդ ոլորտի տեսակարար էլեկտրատարությունն է, մլն կՎտ·ժ/USD:

Նկ.4-ում բերված են 2003-2017թթ. տնտեսության ոլորտների էլեկտրատարությունները՝ կառուցված ըստ տնտեսության ոլորտներում սպառված էլեկտրաէներգիայի վերաբերյալ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական տվյալների [9]:



Նկ 4. Տնտեսության ոլորտների էլեկտրատարություններն ըստ տարիների:

Բերված կորերից երևում է, որ արդյունաբերական ոլորտի էլեկտրատարությունը 2003-2017թթ. ուներ աճի միտում, իսկ գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտները՝ նվազման:


Հաշվի առնելով ՀՀ իրականացվող Էներգախնայողության գործողությունների ծրագիրը, կանխատեսումային հաշվարկներում ընդունված է,

որ տնտեսության բոլոր ոլորտներում տեղի կունենա էլեկտրատարության տարեկան 0.5% նվազում:

Էլեկտրատարությունից դեպի էլեկտրական էներգիայի կանխատեսվող սպառումն իրականացվում է (1) բանաձևով:

Այլ ոլորտներում (բնակելի, տրանսպորտ, այլ սպառողներ) էլեկտրաէներգիայի պահանջարկի գնահատում

Բնակչության կողմից 2003-2017թթ. սպառված էլեկտրաէներգիայի տվյալները բերված են նկար 5-ում:



Նկար 5. Բնակչության կողմից սպառված էլեկտրաէներգիան ըստ տարիների:

Նկարում պատկերված կետավոր գիծը ցույց է տալիս բնակչության կողմից էլեկտրաէներգիայի սպառման փոփոխման միտումները, որոնք կարող են նկարագրվել հետևյալ բանաձևով.


$$W_{բնակ.} = 1286 * (x - 2002)^{0.144}\,, \qquad (8)$$

որտեղ՝

$W_{բնակ.}$ – բնակչության կողմից սպառված էլեկրաէներգիայի քանակն է:

Բնակչության կողմից էլեկտրաէներգիայի պատմական սպառման և (8) բանաձևով հաշվարկված միտման միջև կորելացիայի գործակիցը հավասար է R=0.92:

Տրանսպորտի ոլորտում 2003-2017թթ. սպառված էլեկտրաէներգիայի տվյալները բերված են նկար 6-ում:



Նկար 6. Տրանսպորտի ոլորտում սպառված էլեկտրաէներգիան ըստ տարիների:


Նկարում պատկերված կետավոր գիծը ցույց է տալիս տրանսպորտի ոլորտում էլեկտրաէներգիայի սպառման փոփոխման միտումները:

Տրանսպորտի ոլորտում էլեկտրաէներգիայի սպառման պատմական տվյալների և միտման միջև կորելացիոն կապը շատ ցածր է, ինչը միտման բանաձևի կիրառումը դարձնում է անընդունելի:

Թեև տրանսպորտի ոլորտում դիտվում է էլեկտրաէներգիայի սպառման որոշակի նվազում, սակայն, ինչպես երևում է նկարից, սպառման ծավալներն ունեն տատանողական բնույթ: Ուստի կանխատեսում կատարելիս ընդունվել է, որ

2018-2019թթ. տեղի կունենա շուրջ 2% աճ, 2020-2021թթ.՝ շուրջ 0.3% աճ և 2022-2024թթ.՝ շուրջ 0.2% աճ:

Այլ ոլորտներում 2003-2017թթ. սպառված էլեկտրաէներգիայի տվյալները բերված են նկար 7-ում:



Նկար 7. Այլ ոլորտներում սպառված էլեկտրաէներգիան ըստ տարիների:

Նկարում պատկերված կետավոր գիծը ցույց է տալիս այլ ոլորտներում էլեկտրաէներգիայի սպառման փոփոխման միտումները, որոնք կարող են նկարագրվել հետևյալ բանաձևով.

$$W_{այլ} = 80.5 * ln(x - 2002) \quad + 136.2\,, \tag{9}$$

որտեղ՝

$W_{այլ}$ – այլ ոլորտների կողմից սպառված էլեկրաէներգիայի քանակն է:

Այլ ոլորտների կողմից էլեկտրաէներգիայի պատմական սպառման և (9) բանաձևով հաշվարկված միտման միջև կորելացիայի գործակիցը հավասար է R=0.97:

Կորուստներն էլեկտրաէներգիայի բաշխման համակարգում

Ընդունվել է, որ բաշխման համակարգում կորուստները կպահպանվեն 2015-2017թթ. շուրջ 600 մլն կՎտ·ժ մակարդակի վրա: Քանի որ

էլեկտրաէներգիայի կանխատեսվող սպառումն աճելու է, ապա կորուստների հարաբերական մեծությունը կնվազի:

2020-2024 թվականներին ՀՀ էլեկտրական էներգիայի ներքին սպառման կանխատեսումը

2020-2024 թվականներին ՀՀ էլեկտրական էներգիայի ներքին սպառման կանխատեսման համար կիրառվել է հետևյալ բանաձևը .

$$W = A\sum S_j \cdot e_j + W_{բնակ.} + W_{տրանս.} + W_{այլ} \quad (10)$$

Մշակված մոդելի ստուգում

Մշակված մոդելի ստուգման նպատակով ստացված բանաձևերով իրականացվել են էլեկտրաէներգիայի պահանջարկի հաշվարկներ ըստ պատմական մակրոտնտեսական տվյալների, որոնք համեմատվել են էլեկտրաէներգիայի սպառման պատմական տվյալների հետ: Արդյունքները բերված են աղյուսակ 1-ում:

Մշակված մոդելի ստուգման արդյունքները

Աղյուսակ 1

Ելեկտրաէներգիայի սպառումը, մլն կՎտ·ժ	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Փաստացի	3654	3992	4374	4528	4764	4903	4488	4667	5120	5120	5267	5352	5367	5328	5621
Հաշվարկային	3,546	4,048	4,448	4,642	4,887	5,046	4,741	4,886	5,137	5,114	5,237	5,368	5,481	5,505	5,734
այդ թվում															
Գյուղատնտեսություն	*223*	*261*	*229*	*227*	*181*	*223*	*124*	*126*	*121*	*138*	*151*	*172*	*162*	*117*	*158*
Արդյունաբերություն	*1,051*	*1,211*	*1,413*	*1,471*	*1,652*	*1,654*	*1,467*	*1,544*	*1,660*	*1,690*	*1,743*	*1,797*	*1,895*	*1,940*	*2,040*
Սպասարկման ոլորտ	*769*	*793*	*896*	*936*	*970*	*1,021*	*963*	*984*	*1,081*	*971*	*993*	*1,017*	*1,012*	*1,010*	*1,072*
Բնակչություն	*1,286*	*1,506*	*1,596*	*1,665*	*1,720*	*1,766*	*1,798*	*1,832*	*1,864*	*1,892*	*1,919*	*1,942*	*1,965*	*1,985*	*2,004*
Տրանսպորտի ոլորտ	*81*	*85*	*89*	*95*	*98*	*102*	*96*	*97*	*99*	*101*	*102*	*103*	*104*	*105*	*105*
Այլ ոլորտներ	*136*	*192*	*225*	*248*	*266*	*280*	*293*	*304*	*313*	*322*	*329*	*336*	*343*	*349*	*354*
Տարբերությունը, %	3.0	-1.4	-1.7	-2.5	-2.6	-2.9	-5.6	-4.7	-0.3	0.1	0.6	-0.3	-2.1%	-3.3	-2.0

Ինչպես երևում է, աղյուսակ 2-ում բերված տվյալների մոդելով հաշվարկված էլեկտրաէներգիայի սպառումը տարբերվում է պատմականից ոչ ավել, քան 5.6%-ով:

2020-2024 թվականներին ՀՀ էլեկտրական էներգիայի ներքին սպառման կանխատեսման արդյունքները

Աղյուսակ 2-ում բերված են 2020-2024թթ. ՀՀ էլեկտրական էներգիայի ներքին սպառման կանխատեսման արդյունքները:

2020-2024թթ. ՀՀ էլեկտրաէներգիայի ներքին սպառման կանխատեսման արդյունքները

Աղյուսակ 2

W, մլն կՎտ·ժ	2020	2021	2022	2023	2024
1-ին սցենար (բազային)	6,426.3	6,452.9	6,477.5	6,500.3	6,521.4
2-րդ սցենար (լավատեսական)	6,674.6	6,799.7	6,928.1	7,060.1	7,195.8

Գրականություն

1. **Забелин П.В., Моисеева Н.К.** Основы стратегического управления: Учебное пособие. –М.: Информационно-внедренческий центр “Маркетинг”, 1998. -195с.
2. **Kathryn M. Bartol, David C. Martin.** Management. -New York: International Edition, 1994. -684p.
3. **Веников В.А.** Теория подобия и моделирования применительно к задачам электроэнергетики: Учебное пособие для вузов. –М.: Высшая школа, 1984. -439 с.
4. **Кремер Н.Ш.** Теория вероятностей и математическая статистика: Учебник для вузов. –М.: ЮНИТИ-ДАНА, 2003. -543с.
5. **Глинский В.В., Ионин В.Г.** Статистический анализ. –М.: ИНФОРА-М: Новосибирск. Сибирское соглашение. 2002. -241 с.
6. **Dimson E.** The Discount Rate for a Power Station // Energy Economics. – 1989. – Vol. 11, № 3. – P. 175–180.

7. **Energy Indicators for Sustainable Development: Guidelines and Methodologies**. International Atomic Energy Agency United Nations Department for Economic and Social Affairs, International Energy Agency, Eurostat, European Environment Agency. –Austria: IAEA STI/PUB/1222, April 2005. -161p.
8. http://databank.worldbank.org/ddp/home.do?Step=3&id=4
9. http://psrc.am/am/?nid=372
10. http://ru.wikipedia.org/wiki/Ереван#.
11. Charged Decisions: Difficult Choices in Armenia's Energy Sector // World Bank. Sustainable Development Department Europe and Central Asia Region. - October 2011.
12. Black Sea Regional Transmission Planning Project Phase II // THE BLACK SEA REGIONAL TRANSMISSION PLANNING PROJECT: Load flow and Dynamic Modeling Report for 2015 and 2020 // USAID/EKC. February 16, 2010.

ՀՀ ԷԷՀ-ում գործող և շահագործումից դուրս բերված էլեկտրական կայանների ագրեգատների դրվածքային հզորությունների վերաբերյալ տեղեկատվություն

	Կայանի անվանումը		Ագրեգատների քանակը և հզորությունը (ՄՎտ)		Շահագործման տարի
1	ՀԱԷԿ		2x220	440	1979
2	Հրազդան ՋԷԿ		3x200, 1x210	1130	1970,1972, 1973,1974
			2x100,* 2x60*		1969,1969, 1966,1967
3	Հրազդան-5 էներգաբլոկ		1x320, 1x165	485	2011
4	Երևան ՋԷԿ ՀԸԳՑԷ		1x174, 1x63.5	237.5	2010
	Երևան ՋԷԿ*		2x150, 4x60, 1x50	590	1665,1968 1963,1965, 1963
5	Վանաձոր ՋԷԿ*		2x12, 1x25, 1x47	96	1963, 1966, 1976
6	ՄԷԿ	Սեվան ՀԷԿ	2x17	34	1949
		Հրազդան ՀԷԿ	2x40.8	81.6	1959
		Արգել ՀԷԿ	4x56	224	1953
		Արզնի ՀԷԿ	3x23.5	70.5	1956,1957
		Քանաքեռ ՀԷԿ	4x12.5, 2x26.0	102	1937, 1940,1944
		Եր.ՀԷԿ-1	2x22	44	1962
		Եր.ՀԷԿ-3	1x5	5	1955
7	Քոնտուր Գլոբալ	Սպանդարյան ՀԷԿ	2x38	76	1989
		Շամբ ՀԷԿ	2x85.5	171	1977
		Տաթև ՀԷԿ	3x52.4	157.2	1971
8	Այլընտրան քային կայաններ	Հողմնային	4x0.66,1x0. 25	2.89	
		Արևային	5x1	5	
		Փոքր ՀԷԿ-եր	(186 հատ)	375.19	
		Փոքր ՋԷԿ-եր	(3 հատ)	14	
		Բիոգազային էլեկտրակայան	(1 հատ)	0.8	

*-շահագործումից դուրս բերված էլեկտրական կայանները կամ ագրեգատները

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի 2020-2024թթ. զարգացման երկարաժամկետ ծրագրի շրջանակներում իրականացվել է հավաքագրում և տեղեկատվության մշակում «ՀԱԷԿ», «Երևան» ՋԷԿ, «ՄԷԿ», «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ», «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ների, «Հրազդան ՋԷԿ» ԲԲԸ-ի և «Հրազդան-5» կազմակերպությունների կողմից ներկայացված հզորությունների հաշվեկշիռների, էլեկտրաէներգիայի արտադրության, առաքման կանխատեսումները յուրաքանչյուր տարվա համար՝ ըստ ամիսների, տուրբոգեներատորների և հիդրոգեներատորների նորոգումների ժամանակացույցների, 220, 110կՎ միացությունների և գեներատորների ՌՊԱ սարքվածքների նոր թվային ՄՊ սարքվածքներով փոխարինման ժամանակացույցները՝ ըստ տարիների, նոր տեղադրվող կամ փոխարինվող տրանսֆորմատորների (ավտոտրանսֆորմատորների), տուրբինների, գեներատորների և գրգռման համակարգերի հարաչափերը: ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից տրամադրվել է տեղեկատվություն 2020-2024թթ. ՀՀ ԷԷՀ-ում գործող և պլանավորվող Փոքր ՀԷԿ, արևային ֆոտովոլտային և հողմային կայանների և այլ կանխատեսվող դրվածքային հզորությունները և էլեկտրաէներգիայի արտադրանքը ըստ տարիների և շահագործման մեջ մտնելու ժամանակացույցը:

Վերը նշված տեղեկատվությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակներում:

ՀՀ ԷԷՀ-ում գործող և 2020-2024թթ.-ին պլանավորվող էլեկտրակայանների դրվածքային հզորությունները և կանխատեսվող էլեկտրաէներգիայի արտադրանքը ըստ տարիների

Համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրական կայան (Ռենկո)

2020		2021		2022		2023		2024	
ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ
-	-	-	-	250	2120	250	2120	250	2120

Փոքր ՀԷԿ

2020		2021		2022		2023		2024	
ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ
396	1000	404	1050	411	1100	417	1120	423	1170

Արևային ֆոտովոլտային կայաններ

Տարի	հզորություն/ մլն կՎտ.ժ	Մինչև 1 ՄՎտ	Մինչև 5 ՄՎտ	ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ ՓԲԸ/ Մասրիկ-1	Թալին	Մասրիկ-2	Գագարին	Դաշտադեմ	Մերձավան
2020	հզորություն ՄՎտ	10	100	-	-	-	-	-	-
	էլ. Էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	17	170	-	-	-	-	-	-
2021	հզորություն ՄՎտ	10	100	55	-	-	-	-	-
	էլ. Էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	17	170	120	-	-	-	-	-
2022	հզորություն ՄՎտ	10	100	55	10	15	17	10	7
	էլ. Էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	17	170	120	22	30	25	13	11
2023	հզորություն կՎտ	10	100	55	10	15	17	10	7

	էլ. Էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	17	170	120	22	30	25	13	11
2024	հզորություն ՄՎտ	10	100	55	10	15	17	10	7
	էլ. Էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	17	170	120	22	30	25	13	11

Հողմային էլեկտրական կայաններ

Տարի	հզորություն/ մլն կՎտ.ժ	ԲԷՑ ՓԲԸ/ Լոռի-1	էներգոտեխնիկա ՓԲԸ/ էներգոտեխնիկա-1	ՍՈԼԱՐՍԻՍ ՓԲԸ/ Արգեստ	ԶՈԴ ՈՒԻՆԴ ՓԲԸ/ Զոդ Ուինդ	Արաց ՓԲԸ/ Քաջարան	Աքսիոնա Էներգիա Գլոբալ Էս.Էլ
2020	հզորություն ՄՎտ	2,64	0.02	4	1,3	0,25	-
	էլ. Էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	3	0.02	9,9	3,5	0,06	-
2021	հզորություն ՄՎտ	2,64	0.02	4	1,3	0,25	-
	էլ. Էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	3	0.02	9,9	3,5	0,06	-
2022	հզորություն ՄՎտ	2,64	0.02	4	1,3	0,25	200
	էլ. Էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	3	0.02	9,9	3,5	0,06	600
2023	հզորություն կՎտ	2,64	0.02	4	1,3	0,25	200
	էլ. Էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	3	0.02	9,9	3,5	0,06	600
2024	հզորություն ՄՎտ	2,64	0.02	4	1,3	0,25	200
	էլ. Էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	3	0.02	9,9	3,5	0,06	600

«ՀԱԷԿ», «Երևան» ՋԷԿ, «ՄԷԿ», «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ», «Հրազդան ՋԷԿ» ԲԲԸ-ի, «Հրազդան-5» և այլ կազմակերպությունների կողմից ներկայացված հզորությունների հաշվեկշիռների (հայտերի), էլեկտրաէներգիայի արտադրության, առաքման կանխատեսումները յուրաքանչյուր տարվա համար՝ ըստ ամիսների, տուրբոգեներատորների և հիդրոգեներատորների նորոգումների ժամանակացույցների և երկարաժամկետ պլանավորման համար անհրաժեշտ այլ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 1-ում:

2020-2024թթ-ի ՀՀ ԷԷՀ-ի հզորության և էլեկտրաէներգիայի հաշվեկշիռների կազմում և գնահատում

ԷՀ ընկերությունների կողմից տրամադրած կանխատեսումային ելակետային տվյալների հիման վրա՝ գործող էլեկտրական կայանների կողմից ներկայացված հզորության և էլեկտրաէներգիայի հայտերի (տես Հավելված 1-ում), պլանավորվող նոր հզորությունների ԷԷՀ մուտքի, պլանային վերանորոգումների ժամանակացույցի և այլ անհրաժեշտ տեղեկատվության կիրառմամբ, իրականացվել է հզորության և էլեկտրաէներգիայի հաշվեկշիռների կազմում **Սցենար1** և **Սցենար2** դիտարկվող սցենարների բազային և լավատեսական դեպքերի համար՝ ըստ համապատասխան տարիների սեզոնների առավելագույն, կիսապիկային և նվազագույն ռեժիմների:

2020-2024թթ-ի ՀՀ ԷԷՀ-ի երկարաժամկետ ծրագրի շրջանակներում հզորության հաշվեկշիռները կազմվել են ըստ դիտարկվող ժամանակահատվածի սեզոնների ամիսների օրական ժամային ռեժիմների: Վերջիններիս գնահատման և վերլուծության արդյունքում ընտրվել են ԷԷՀ-ի վրա առավել ազդեցության տեսանկյունից ռեժիմները (հզորության հաշվեկշիռները): Ի դեպ ընտրությունը իրականացվել է ըստ դիտարկվող ժամանակահատվածի տարիների սեզոնների ամիսների առավելագույն, կիսապիկային և նվազագույն ռեժիմներին համապատասխանող ժամերի՝ հաշվի առնելով նաև ամսական կտրվածքով էլեկտրակայանների կողմից ներկայացված պլանային վերանորոգման ժամանակացույցները:

Էլեկտրաէներգիայի հաշվեկշիռները կազմվել են միայն տարեկան կտրվածքով ըստ տարիների, քանի որ վերջինս իրենից ներկայացնում է ինտեգրալ (գումարային) ցուցանիշ և որևիցե ռեժիմային գործոն չի պարունակում (տես Հավելված 2): **Սցենար 1**-ի բազային դեպքի 2020-2024թթ-ի ըստ ամիսների կազմած հզորության հաշվեկշռի գնահատման և վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ յուրաքանչյուր տարվա սեզոնի համար կարելի է ընտրել մեկ հաշվեկշիռ, որը ճշգրիտ կբնութագրի յուրաքանչյուր համապատասխան սեզոնի ռեժիմային առանձնահատկությունները: Ուստի ստորև ներկայացված են յուրաքանչյուր տարվա սեզոնի համար ընտրված հզորության հաշվեկշիռները:

2020թ-ի հզորության հաշվեկշիռ ըստ տարվա սեզոնների առավելագույն, կիսապիկային և նվազագույն ռեժիմների համար

N	Կայանի Անվանում		Հզորություն, ՄՎտ											
			Ձմեռ			Գարուն			Ամառ			Աշուն		
			Առավել ագույն	Կիսապ իկային	Նվազա գույն	Առավել ագույն	Կիսապ իկային	Նվազա գույն	Առավել ագույն	Կիսապ իկային	Նվազագ ույն	Առավել ագույն	Կիսապ իկային	Նվազա գույն
1	ՀԱԷԿ		420	420	415	410	410	0	0	0	0	415	415	410
2	Հրազդան ՋԷԿ	5-բլոկ	380	380	0	0	0	280	300	300	300	320	350	0
		2X200	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
3	ՋԷԿ	Երևան ՋԷԿ	225	225	225	220	220	180	195	195	200	210	210	210
		ՀՇԳՅԷ (Ռենկո)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
4	ՄԷԿ	Սևան ՀԷԿ	0	0	0	0	0	0	15	15	0	0	0	0
		Հրազդան ՀԷԿ	0	0	0	0	0	0	36	36	0	0	0	0
		Արգել ՀԷԿ	55	0	0	90	0	7	65	65	0	55	0	0
		Արզնի ՀԷԿ	22	0	0	37	10	10	15	15	7	22	0	0
		Քանաքեռ ՀԷԿ	23	0	5	37	10	5	24	24	10	23	0	0
		Եր ՀԷԿ	25	0	5	22	5	2.5	15	22	5	25	0	0
5	Քոնթուր Գլոբալ Հիդրո	Սպանդարյան ՀԷԿ	38	38	0	38	0	0	76	76	0	38	38	0
		Շամբ ՀԷԿ	80	0	0	80	0	0	160	160	0	80	0	0
		Տաթև ՀԷԿ	40	89	4	80	81	0	115	69	51	30	90	66
6	Փոքր ՀԷԿ-եր		70	70	80	130	130	240	120	120	220	85	85	80
7	Արևային Կ-ր	Մասրիկ ԱԿ-ն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
		Այլ ԱԿ-ր	0	7.6	0	0	84.6	0	72	84.6	0	0	32.4	0
8	Հողմային Կ-ր	Աքսիոնա ՀԿ-ն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
		Այլ ՀԿ-ր	7.3	32.4	5.6	6.3	6.7	2.8	2.6	1.5	2.8	6.3	5.4	3
9	Կայանների գումար, Σ		1385	1262	740	1150	957	722	1211	1183	745	1309	1226	769
10	Սեփական սպառումը՝ ներառյալ սեփական կարիքը և կորուստները		1060	970	560	890	830	450	1005	1000	510	1005	950	500
11	Փոխհոսք դեպի*	Իրան	-301	-281	-190	-293	-158	-298	-247	-223	-284	-297	-276	-255
		ԼՂՀ	-24	-11	10	33	31	26	41	40	49	-7	0	-14
		Վրաստան	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0

2021թ-ի հզորության հաշվեկշիռ ըստ տարվա սեզոնների առավելագույն, կիսապիկային և նվազագույն ռեժիմների համար

N	Կայանի Անվանում		Հզորություն, ՄՎտ											
			Ձմեռ			Գարուն			Ամառ			Աշուն		
			Առավել ագույն	Կիսապ իկային	Նվազ ագույն	Առավել ագույն	Կիսապ իկային	Նվազ ագույն	Առավել ագույն	Կիսապ իկային	Նվազ ագույն	Առավել ագույն	Կիսապ իկային	Նվազ ագույն
1	ՀԱԷԿ		420	420	415	410	410	0	385	385	390	415	400	400
2	Հրազդան ՋԷԿ	5-բլոկ	420	420	280	410	410	300	360	360	300	420	420	280
		2X200	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
3	ՋԷԿ	Երևան ՋԷԿ	225	225	225	220	220	200	195	195	200	220	200	210
		ՀՇԳՅԷ (Ռենկո)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
4	ՄԷԿ	Սեվան ՀԷԿ	0	0	0	0	0	0	15	15	0	0	0	0
		Հրազդան ՀԷԿ	0	0	0	0	0	0	36	36	0	0	0	0
		Արզել ՀԷԿ	55	0	0	90	0	0	65	65	0	55	0	0
		Արզնի ՀԷԿ	22	0	0	37	10	7	15	15	7	22	10	0
		Քանաքեռ ՀԷԿ	23	0	5	37	10	10	24	24	10	23	13	0
		Եր ՀԷԿ	25	0	5	22	5	7.5	15	22	5	25	5	0
5	Քոնթուր Գլոբալ Հիդրո	Սպանդարյան ՀԷԿ	38	38	0	67	0	0	76	76	0	38	75	0
		Շամբ ՀԷԿ	160	0	0	160	0	0	160	160	0	160	160	0
		Տաթև ՀԷԿ	113	89	4	123	86	52	110	69	51	113	96	66
6	Փոքր ՀԷԿ-եր		75	75	85	130	130	250	125	125	225	85	75	85
7	Արևային Կ-ր	Մասրիկ ԱԿ-ն	0	19.8	0	0	51.7	0	44	51.7	0	0	19.8	0
		Այլ ԱԿ-ր	0	32.4	0	0	84.6	0	72	84.6	0	0	32.4	0
8	Հողմային Կ-ր	Աքսիոնա ՀԿ-ն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
		Այլ ՀԿ-ր	7.3	7.6	5.6	6.3	6.7	2.8	2.6	1.5	2.8	6.3	2.4	3
9	Կայանների գումար, ∑		1583	1327	1025	1712	1424	829	1700	1685	1191	1582	1509	1044
10	Սեփական սպառումը՝ ներառյալ սեփական կարիքը և կորուստները		1070	980	560	890	830	460	1035	1020	520	1010	960	500
11	Փոխհոսք դեպի*	Իրան	-489	-336	-475	-855	-625	-395	-706	-705	-720	-565	-590	-530
		ԼՂՀ	-24	-11	10	33	31	26	41	40	49	-7	41	-14
		Վրաստան	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0

2022թ-ի հզորության հաշվեկշիռ ըստ տարվա սեզոնների առավելագույն, կիսապիկային և նվազագույն ռեժիմների համար

N	Կայանի Անվանում		Հզորություն, ՄՎտ											
			Ձմեռ			Գարուն			Ամառ			Աշուն		
			Առավել ագույն	Կիսապ իկային	Նվազ ագույն	Առավել ագույն	Կիսապ իկային	Նվազ ագույն	Առավել ագույն	Կիսապի կային	Նվազ ագույն	Առավել ագույն	Կիսապ իկային	Նվազ ագույն
1	ՀԱԷԿ		420	420	415	410	410	400	385	385	390	415	415	400
2	Հրազդան ՋԷԿ	5-բլոկ	420	420	280	410	410	300	360	360	300	420	420	280
		2X200	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
3	ՋԷԿ	Երևան ՋԷԿ	225	225	225	220	220	210	195	195	200	220	220	210
		ՀՇԳՑԷ (Ռենկո)	240	240	240	235	235	225	210	210	215	235	235	220
4	ՄԷԿ	Սեվան ՀԷԿ	0	0	0	0	0	0	15	15	0	0	0	0
		Հրազդան ՀԷԿ	0	0	0	0	0	0	36	36	0	0	0	0
		Արգել ՀԷԿ	55	0	0	90	0	0	65	65	0	55	0	0
		Արզնի ՀԷԿ	22	0	0	37	10	0	15	15	7	22	0	0
		Քանաքեռ ՀԷԿ	23	0	5	37	10	5	24	24	10	23	0	0
		Եր ՀԷԿ	25	0	5	22	5	5	15	22	5	25	0	0
5	Քոնթուր Գլոբալ Հիդրո	Սպանդարյան ՀԷԿ	38	38	0	67	0	0	76	76	0	38	38	0
		Շամբ ՀԷԿ	160	0	0	160	0	0	160	160	0	160	0	0
		Տաթև ՀԷԿ	111	87	4	105	83	64	116	86	51	111	88	66
6	Փոքր ՀԷԿ-եր		80	80	90	130	130	205	130	130	225	85	85	90
7	Արևային Կ-ր	Մասրիկ ԱԿ-ն	0	19.8	0	0	51.7	0	44	51.7	0	0	19.8	0
		Այլ ԱԿ-ր	0	54	0	0	141	0	120	141	0	0	54	0
8	Հողմային Կ-ր	Աքսիոնա ՀԿ-ն	183	190	140	158	168	80	65	37.5	70	158	135	75
		Այլ ՀԿ-ր	7.3	7.6	5.6	6.3	6.7	3.2	2.6	1.5	2.8	6.3	5.4	3
9	Կայանների գումար, ∑		2009	1781	1410	2087	1880	1497	2034	2011	1476	1973	1715	1344
10	Սեփական սպառումը՝ ներառյալ սեփական կարիքը և կորուստները		1070	980	530	870	810	470	1035	1020	480	980	935	470
11	Փոխհոսք դեպի*	Իրան	-915	-790	-890	-1250	-1101	-1055	-1040	-1031	-1045	-986	-780	-860
		ԼՂՀ	-24	-11	10	33	31	28	41	40	49	-7	0	-14
		Վրաստան	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0

2023թ-ի հզորության հաշվեկշիռ ըստ տարվա սեզոնների առավելագույն, կիսապիկային և նվազագույն ռեժիմների համար

N	Կայանի Անվանում		Հզորություն, ՄՎտ											
			Ձմեռ			Գարուն			Ամառ			Աշուն		
			Առավել ագույն	Կիսապ իկային	Նվազ ագույն	Առավել ագույն	Կիսապ իկային	Նվազ ագույն	Առավել ագույն	Կիսապ իկային	Նվազ ագույն	Առավել ագույն	Կիսապ իկային	Նվազ ագույն
1	ՀԱԷԿ		420	420	415	410	410	400	385	385	390	415	400	400
2	Հրազդան ՋԷԿ	5-բլոկ	420	420	280	410	410	300	360	360	300	420	420	280
		2X200	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
3	ՋԷԿ	Երևան ՋԷԿ	225	225	225	220	220	210	195	195	200	220	200	210
		ՀՇԳՑԷ (Ռենկո)	240	240	240	235	235	225	210	210	215	235	210	220
4	ՄԷԿ	Սեվան ՀԷԿ	0	0	0	0	0	0	15	15	0	0	0	0
		Հրազդան ՀԷԿ	0	0	0	0	0	0	36	36	0	0	0	0
		Արգել ՀԷԿ	55	0	0	90	0	0	65	65	0	55	0	0
		Արզնի ՀԷԿ	22	0	0	37	10	0	15	15	7	22	10	0
		Քանաքեռ ՀԷԿ	23	0	5	37	10	5	24	24	10	23	13	0
		Եր ՀԷԿ	25	0	5	22	5	5	15	22	5	25	5	0
5	Քոնթուր Գլոբալ Հիդրո	Սպանդարյան ՀԷԿ	38	38	0	67	0	0	76	76	0	38	75	0
		Շամբ ՀԷԿ	160	0	0	160	0	0	160	160	0	160	160	0
		Տաթև ՀԷԿ	111	87	4	105	83	64	116	86	51	111	90	66
Հաշվարկ №1-ում դիտարկվել է Բնականոն ռեժիմային իրավիճակ Հայաստան-Իրան միջհամակարգային կապի կտրվածքի բոլոր 220 կՎ և 400 կՎ կապերի մասնակցությամբ, որի համար հաշվարկվել է ստատիկ ապերիոդիկ կայունության առավելագույն արժեքը և առավելագույն թույլատրելի ակտիվ հզորությունը երկարատև թույլատրելի ռեժիմի համար, որը կազմում է 1,924 ՄՎտ, և կարճատև թույլատրելի ռեժիմի համար՝ 2,217 ՄՎտ՝ մասնավորապես Իրանի ԷԷՀ-ում խնդիրների առկայության պարագայում ակտիվ հզորության կարգավորման գործընթացին նպաստելու համար:

Հաշվարկ №2÷№8-ում ներկայացված են Հայաստան-Իրան միջհամակարգային կապի կտրվածքում առանձին կապերի Նորոգման կամ Վթարային անջատման հետևանքով ռեժիմային իրավիճակներում ստատիկ ապերիոդիկ կայունության առավելագույն արժեքները և առավելագույն հզորության արժեքները ըստ երկարատև և կարճատև թույլատրելի ռեժիմների:

Հաշվարկ №7-ում, որի համաձայն միջհամակարգային կապի առանձին ԷՀԳ-ների Նորոգման կամ Վթարային անջատման հետևանքով միացված է մնում միայն երկշղթա 2x220 կՎ ԷՀԳ-ներից բաղկացած միջհամակարգային կապի կտրվածքը, ստատիկ ապերիոդիկ կայունության սահմանային արժեքը կազմում է 821 ՄՎտ, մինչդեռ համապատասխան սցենարի հզորության հաշվեկշռի համաձայն միջհամակարգային կապով հոսքը կազմում է 1055 ՄՎտ: Հետևաբար Նորոգման կամ Վթարային անջատման դեպքում անհրաժեշտ է Հայաստան-Իրան միջհամակարգային կապով հոսքը իջեցնել մինչև երկարատև թույլատրելի արժեքը՝ 632 ՄՎտ, այսինքն նվազեցնել հաշվեկշռով սահմանված 1055 ՄՎտ միջհամակարգային հոսքի արժեքը 423 ՄՎտ-ով: Կարճատև թույլատրելի հոսքի արժեքը նվազեցնել 324 ՄՎտ-ով, այսինքն՝ ապահովել ոչ ավել քան 731 ՄՎտ հոսքի արժեք: Սակայն տվյալ ռեժիմային իրավիճակում առաջանում է նաև ջերմային կայունության պայմանով սահմանափակում «Շինուհայր» ե/կ և «Ագարակ» ե/կ 220 կՎ ԷՀԳ-ների մասով: Այսպիսով, «Շինուհայր» ե/կ և «Ագարակ» ե/կ 220 կՎ ԷՀԳ-ների ջերմային կայունության պայմանի ապահովման նկատառումներից ելնելով Հայաստան-Իրան միջհամակարգային կապով երկարատև թույլատրելի հոսքը պետք է նվազեցվի մինչև 443 ՄՎտ արժեքը (տես Հաշվ. № 7′): Ինչ վերաբերում է կարճատև թույլատրելի ռեժիմին, ապա համա-

ձայն Հուսալիության և անվտանգության ցուցանիշների կարճատև թույլատրելի հոսքը պետք է որոշվի երկարատև թույլատրելի հոսքի նկատմամբ ամրագրված տոկոսաչափով և սահմանափակ տևողությամբ՝ հաշվի առնելով ԷՀԳ-ների կախվածքը կամ յուրաքանչյուր տրանսֆորմատորի (ավտոտրանսֆորմատորի) արտադրողի կողմից երաշխավորված տեխնիկական տվյալները, ինչպես նաև հաշվի առնելով տարվա եղանակները:

Հաշվարկ №8-ում, որի համաձայն միջհամակարգային կապի առանձին ԷՀԳ-ների Նորոգման կամ Վթարային անջատման հետևանքով միացված է մնում միայն մեկ 220 կՎ ԷՀԳ-ից բաղկացած կտրվածքը, ստատիկ ապերիոդիկ կայունության սահմանային արժեքը կազմում է 584 ՄՎտ, իսկ երկարատև թույլատրելի հոսքի մեծությունը՝ 443 ՄՎտ: Սակայն այս արժեքը սահմանափակվում է 220 կՎ միջհամակարգային կապի ԷՀԳ-ի ջերմային կայունության պայմանով, որի համաձայն ԷՀԳ-ով ակտիվ հզորության հոսքը չպետք է գերազանցի 330 ՄՎտ արժեքը (տես Հաշվ. № 8′):

Ինչ վերաբերում է **Սցենար 2**-ի մասով Հայաստան-Վրաստան հաստատուն հոսանքի սարքով միջհամակարգային կապին, ապա ստատիկ ապերիոդիկ կայունության առավելագույն արժեքը սահմանափակվում է հաստատուն հոսանքի սարքի հզորությամբ, որը համաձայն **Սցենար 2**-ի կազմում է 350 ՄՎտ:

Սակայն, եթե անտեսվի հաստատուն հոսանքի սարքի ըստ հզորության սահմանափակումը, ապա Հայաստան-Վրաստան հաստատուն հոսանքի սարքով միջհամակարգային կապով ստատիկ ապերիոդիկ կայունության առավելագույն արժեքը կկազմի 1200 ՄՎտ՝ Հայաստանի ԷԷՀ-ից դեպի Վրաստանի ԷԷՀ փոխհոսքի հաղորդման դեպքում, և 1000 ՄՎտ՝ Վրաստանի ԷԷՀ-ից դեպի Հայաստանի ԷԷՀ փոխհոսքի հաղորդման դեպքում, սակայն Հայաստան-Վրաստան առավելագույն փոխհոսքը սահմանափակվում է հաստատուն հոսանքի սարքի հզորությամբ՝ 350 ՄՎտ-ով:

ԷԷՀ-ի դինամիկ կայունության հաշվարկների իրականացում՝ հաղորդող համակարգի տարբեր խոտորումներին դիմակայելու ընդունակությունը վերստուգելու համար

ՀՀ ԷԷՀ-ի դիտարկվող երկարաժամկետ ծրագրի շրջանակներում իրականացվել են ԷԷՀ-ի դինամիկ կայունության հաշվարկներ ԷԷՀ-ի տարբեր խոտորումներին դիմակայելու ընդունակությունը վերստուգելու համար **Սցենար 1** բազային դեպքի և **Սցենար 2**-ի համար: ԷԷՀ-ի զարգացման ներքո դինամիկ կայունության հաշվարկները անհրաժեշտ են ԷԷՀ-ում առաջացող տարբեր խոտորումներին դիմակայելու համակարգի ընդունակությունը վերստուգելու համար: Հարկ է նշել, որ դա անհրաժեշտ է իրականացնել համաձայն ԷԷՀ-ի Հուսալիության և անվտանգության ցուցանիշների: Հաշվարկները իրականացվել են հավաստիացված մոդելի վրա, որի արդյունքները ներկայացվել են «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից պայմանագրային աշխատանքի շրջանակներում իրականացված RFTOP 111-09-005 (ЭИ-05/10) աշխատանքում:

ԷԷՀ-ի դինամիկ կայունության հաշվարկները իրականացվել են **Սցենար 1**-ի բազային դեպքի համար հիմք ընդունելով 2024թ-ի ամառային առավելագույն հաշվեկշռին համապատասխան ռեժիմը: Սա պայմանավորված է նրանով, որ երկարաժամկետ ծրագրով կանխատեսվող բոլոր փոփոխություններով պայմանավորված զարգացումները՝ նոր հզորությունները, հաղորդման ցանցի զարգացումները և այլն, 2024թ-ին արդեն ամբողջությամբ ներառված են, իսկ ՀՀ ԷԷՀ-ի ներքին սպառման մեծությունը առավելագույնն է: Ստորև աղյուսակում ներկայացված են **Սցենար 1**-ի բազային դեպքի համար դինամիկ կայունության հաշվարկային արդյունքները ԷԷՀ-ի տարբեր խոտորումների հետևանքով առաջացած ռեժիմային իրավիճակների համար: Մասնավորապես աղյուսակում ներկայացված են ԷԷՀ-ի նախնական (Բնականոն) ռեժիմային իրավիճակը, դիտարկվող պատահարի տարատեսակը, դինամիկ կայունության ապահովման համար անհրաժեշտ միջոցառումները:

P(t),δ(t),f(t) գրաֆիկական արտապատկերումները բերված են Հավելված 7-ում:

Հաշվ. N	ԷԷՀ-ի իրավիճակը		Դիտարկվող պատահարը N-1			Դինամիկ կայունության ապահովումը		
	Անվ	Բնութագրումը	Տեսակը	կմ(3)-ի տեղը	կմ(3)-ի տևողությունը և անջ. տարրերը	Առանց միջոցառման կիրառման	Միջոցառման կիրառմամբ	Նկար
1	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{\text{Հայ–Իր}} = P^{\text{հա2}}_{\text{Հայ–Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} = 1056 + 24 = 1080$ ՄՎտ	բնական	Նորավան – Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. Նորավան-Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ը	Այո	-	1.1 P(t) 1.2 δ(t) 1.3 f(t)
2	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{\text{Հայ–Իր}} = P^{\text{հա2}}_{\text{Հայ–Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} = 1056 + 24 = 1080$ ՄՎտ	բացառ	Նորավան – Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. Ջուլֆա ե/կ-ում 0.3 վրկ. Նորավան ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են Նորավան-Ջուլֆա, Նորավան-Հրազդան 1 400 կՎ ԷՀԳ-երը, և AS1 400/220	Այո	-	2.1 P(t) 2.2 δ(t) 2.3 f(t)
3	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{\text{Հայ–Իր}} = P^{\text{հա2}}_{\text{Հայ–Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} = 1056 + 24 = 1080$ ՄՎտ	բացառ	Հրազդան-Նորավան 1 400 կՎ ԷՀԳ Հրազդան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. Նորավան ե/կ-ում 0.3 վրկ. Հրազդան ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են Հրազդան-Նորավան 1, Հրազդան-Այրում 1 400 կՎ ԷՀԳ-երը և AS1 400/220	Այո	-	3.1 P(t) 3.2 δ(t) 3.3 f(t)
4	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{\text{Հայ–Իր}} = P^{\text{հա2}}_{\text{Հայ–Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} = 1056 + 24 = 1080$ ՄՎտ	բնական	Հրազդան-Նորավան 1 400 կՎ ԷՀԳ-ի Հրազդան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անհաջող ԱԿՄ $\frac{0.1 \text{ վրկ}}{\text{ԿՄ}} + \frac{2 \text{ վրկ}}{\text{դադար}} + \frac{0.1}{\text{ԿՄ}}$	Այո	-	4.1 P(t) 4.2 δ(t) 4.3 f(t)

5	N_1	Նորոգման մեջ է Հրազդան-Նորավան 1 400 կՎ ԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1048 + 24 = 1072$ ՄՎտ	բնական	Հրազդան-Նորավան 2 400 կՎ ԷՀԳ-ի Հրազդան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անհաջող ԱԿՄ $\frac{0.1 \text{ վրկ}}{\text{ԿՄ}} + \frac{2 \text{ վրկ}}{\text{դադար}} + \frac{0.1}{\text{ԿՄ}}$	Ոչ	Երբ նորոգման մեջ է Հրազդան-Նորավան1 400 կՎ ԷՀԳ-ն, ապա նախապես անհրաժեշտ է նվազեցնել Հայաստան-Իրան փոխհոսքը 250 ՄՎտ-ով (տես հաշ. 5՛)	5.1 P(t) 5.2 δ(t) 5.3 f(t)
5՛	N_1	Նորոգման մեջ է Հրազդան-Նորավան 1 400 կՎ ԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 810 + 24 = 834$ ՄՎտ	բնական	Հրազդան-Նորավան 2 400 կՎ ԷՀԳ-ի Հրազդան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անհաջող ԱԿՄ $\frac{0.1 \text{ վրկ}}{\text{ԿՄ}} + \frac{2 \text{ վրկ}}{\text{դադար}} + \frac{0.1}{\text{ԿՄ}}$	Այո	-	5՛.1 P(t) 5՛.2 δ(t) 5՛.3 f(t)
6	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1056 + 24 = 1080$ ՄՎտ	բնական	Շինուհայր-Ագարակ 1 220 կՎ ԷՀԳ –ի Շինուհայր ե/կ-ի մոտ	0.16 վրկ. անջատվում է Շինուհայր-Ագարակ 1 220 կՎ ԷՀԳ-ը	Այո	-	6.1 P(t) 6.2 δ(t) 6.3 f(t)
7	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1056 + 24 = 1080$ ՄՎտ	բացառ	Շինուհայր-Ագարակ 1 220 կՎ ԷՀԳ-ի Շինուհայր ե/կ-ի մոտ	0.16 վրկ. Ագարակ ե/կ-ում 0.35 վրկ. Շինուայր ե/կ-ում (ԱՀՊՍ) Շինուհայր-Ագարակ 1, Նորավան- Շինուհայր կամ Սպանդարյան-Շինուհայր 220 կՎ ԷՀԳ-ից մեկը և ԱՏ 125 ՄՎԱ 220/110	Այո	-	7.1 P(t) 7.2 δ(t) 7.3 f(t)
8	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1056 + 24 = 1080$ ՄՎտ	բնական	Նորավան –Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անհաջող ԱԿՄ $\frac{0.1 \text{ վրկ}}{\text{ԿՄ}} + \frac{2 \text{ վրկ}}{\text{դադար}} + \frac{0.1}{\text{ԿՄ}}$	Այո	-	8.1 P(t) 8.2 δ(t) 8.3 f(t)

9	N_2	Նորոգման մեջ է Նորավան – Հերիս 400 կՎ ԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1050 + 24 = 1074$ ՄՎտ	բնական	Նորավան -Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անհաջող ԱԿՄ $\frac{0.1 \text{ վրկ}}{\text{ԿՄ}} + \frac{2 \text{ վրկ}}{\text{դադար}} + \frac{0.1}{\text{ԿՄ}}$	Ոչ	Երբ նորոգման մեջ է Նորավան – Հերիս 400 կՎ ԷՀԳ-ը, ապա նախապես պետկ է նվազեցնել Հայաստան-Իրան փոխհոսքը 555 ՄՎտ-ով (տես հաշ. 8՛)	9.1 P(t) 9.2 δ(t) 9.3 f(t)
9՛	N_2	Նորոգման մեջ է Նորավան – Հերիս 400 կՎ ԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 515 + 24 = 539$ ՄՎտ	բնական	Նորավան –Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անհաջող ԱԿՄ $\frac{0.1 \text{ վրկ}}{\text{ԿՄ}} + \frac{2 \text{ վրկ}}{\text{դադար}} + \frac{0.1}{\text{ԿՄ}}$	Այո	-	9՛.1 P(t) 9՛.2 δ(t) 9՛.3 f(t)
10	N_2	Նորոգման մեջ է Նորավան – Հերիս 400 կՎ ԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1050 + 24 = 1074$ ՄՎտ	բնական	Նորավան –Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անջատվում է Նորավան- Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ն	Ոչ	Երբ նորոգման մեջ է Նորավան - Հերիս 400 կՎ ԷՀԳ-ը, ապա նախապես պետկ է նվազեցնել Հայաստան-Իրան փոխհոսքը 555 ՄՎտ-ով (տես հաշ. 10՛)	10.1 P(t) 10.2 δ(t) 10.3 f(t)
10՛	N_2	Նորոգման մեջ է Նորավան – Հերիս 400 կՎ ԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 515 + 24 = 539$ ՄՎտ	բնական	Նորավան –Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անջատվում է Նորավան- Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ն	Այո	-	10՛.1 P(t) 10՛.2 δ(t) 10՛.3 f(t)
11	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1056 + 24 = 1080$ ՄՎտ	բացառ	Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) - Հրազդան ՀԷԿ 220 կՎ ԷՀԳ Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) ե/կ-ի մոտ	0.16 վրկ. Հրազդան ՀԷԿ ե/կ-ում 0.35 վրկ. Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են Հրազդան	Ոչ (Հրազդան ՋԷԿ (5 բլոկ)-ի կայունությունը խախտվում է)	Այո, անհրաժեշտ է ԱՀՊՍ -ի ժամանակը իջեցնել 0.35 –ից 0.25 վրկ.	11.1 P(t) 11.2 δ(t) 11.3 f(t)

					ՋԷԿ (5 բլոկ)-Հրազդան ՀԷԿ, Հրազդան ՋԷԿ (5 բլոկ)-Վանաձոր2 ե/կ, Հրազդան ՋԷԿ(5 բլոկ)-Ջովունի ե/կ 220 կՎ ԷՀԳ-երը, US1 400/220 և ԳՏԳ 165 ՄՎտ		(տես հաշվարկ 11՛)	
11՛	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հա2}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} = 1056 + 24 = 1080$ ՄՎտ	բացառ	Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) - Հրազդան ՀԷԿ 220 կՎ ԷՀԳ Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) ե/կ-ի մոտ	0.16 վրկ. Հրազդան ՀԷԿ ե/կ-ում 0.25 վրկ. Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են Հրազդան ՋԷԿ (5 բլոկ)-Հրազդան ՀԷԿ, Հրազդան ՋԷԿ (5 բլոկ)-Վանաձոր2 ե/կ, Հրազդան ՋԷԿ(5 բլոկ)-Ջովունի ե/կ 220 կՎ ԷՀԳ-երը, US1 400/220 և ԳՏԳ 165 ՄՎտ	Այո	-	11՛.1 P(t) 11՛.2 δ(t) 11՛.3 f(t)
12	N_3	Նորոգման մեջ է Ագարակ-Շինուայր 1 220 կՎԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հա2}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} = 1055 + 24 = 1079$ ՄՎտ	բնական	Նորավան -Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անջատվում է Նորավան- Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ն	Այո	-	12.1 P(t) 12.2 δ(t) 12.3 f(t)
13	N_3	Նորոգման մեջ է Ագարակ-Շինուայր 1 220 կՎԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հա2}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} = 1055 + 24 = 1079$ ՄՎտ	բացառ	Նորավան -Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. Ջուլֆա ե/կ-ում 0.3 վրկ. Նորավան ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են Նորավան-Ջուլֆա, Նորավան-Հրազդան 1 400 կՎ ԷՀԳ-երը, և US1 400/220	Այո	-	13.1 P(t) 13.2 δ(t) 13.3 f(t)

14	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{\text{Հայ–Իր}} = P^{\text{հա2}}_{\text{Հայ–Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} = 1056 + 24 = 1080$ ՄՎտ	բնական	Մարաշ-Երևան ՋԷԿ 220 կՎ ԷՀԳ-ի Երևան ՋԷԿ ԱՏ-ի մոտ	0.16 վրկ. անջատվում է Մարաշ-Երևան ՋԷԿ 220 կՎ ԷՀԳ-ը	Այո	-	14.1 P(t) 14.2 δ(t) 14.3 f(t)
15	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{\text{Հայ–Իր}} = P^{\text{հա2}}_{\text{Հայ–Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} = 1056 + 24 = 1080$ ՄՎտ	բացառ	Մարաշ-Երևան ՋԷԿ ԱՏ 220 կՎ ԷՀԳ-ի Երևան ՋԷԿ ԱՏ-ի մոտ	0.16 վրկ. Մարաշ-ում 0.35 վրկ. Երևան ՋԷԿ ԱՏ-ում (ԱՀՊՍ) անջատվում են Մարաշ-Երևան ՋԷԿ ԱՏ, Երևան ՋԷԿ ԱՏ-Արարատ2 220 կՎ ԷՀԳ-ները և ԱՏ 220/110	Ոչ (ՀՇԳՑԷ Ռենկո-ն դուրս է գալիս)	Այո, ԿԽԿԱ-ի կիրառմամբ	15.1 P(t) 15.2 δ(t) 15.3 f(t)
16	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{\text{Հայ–Իր}} = P^{\text{հա2}}_{\text{Հայ–Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} = 1056 + 24 = 1080$ ՄՎտ	բնական	ՀԱԷԿ - Շահումյան 220 կՎ ԷՀԳ ՀԱԷԿ ե/կ-ի մոտ	0.16 վրկ. անջատվում է ՀԱԷԿ-Շահումյան 220 կՎ ԷՀԳ-ը	Այո	-	16.1 P(t) 16.2 δ(t) 16.3 f(t)
17	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{\text{Հայ–Իր}} = P^{\text{հա2}}_{\text{Հայ–Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} = 1056 + 24 = 1080$ ՄՎտ	բացառ	ՀԱԷԿ - Շահումյան 220 կՎ ԷՀԳ ՀԱԷԿ ե/կ-ի մոտ	0.16 վրկ. Շահումյան ե/կ-ում 0.35 վրկ. ՀԱԷԿ ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են ՀԱԷԿ-Շահումյան, ՀԱԷԿ-Արարատ2, ՀԱԷԿ-Աշնակ 2 220 կՎ ԷՀԳ-երը և ՀԱԷԿ-ի Գ-1-ը	Ոչ (ՀԱԷԿ-ի կայունությունը խախտվում է)	Այո, անհրաժեշտ է ԱՀՊՍ –ի ժամանակը իջեցնել 0.35 –ից 0.3 վրկ. (տես հաշվարկ 17՛)	17.1 P(t) 17.2 δ(t) 17.3 f(t)
17՛	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{\text{Հայ–Իր}} = P^{\text{հա2}}_{\text{Հայ–Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} = 1056 + 24 = 1080$ ՄՎտ	բացառ	ՀԱԷԿ - Շահումյան 220 կՎ ԷՀԳ ՀԱԷԿ ե/կ-ի մոտ	0.16 վրկ. Շահումյան ե/կ-ում 0.30 վրկ. ՀԱԷԿ ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են ՀԱԷԿ-Շահումյան, ՀԱԷԿ-Արարատ2, ՀԱԷԿ-Աշնակ 2 220 կՎ ԷՀԳ-երը և ՀԱԷԿ-ի Գ-1-ը	Այո	-	17՛.1 P(t) 17՛.2 δ(t) 17՛.3 f(t)

18	N_4	Նորոգման մեջ է ՀԱԷԿ-Շահումյան 220 կՎ ԷՀԳ-ը $P_{\text{Հայ–Իր}} = P^{\text{հա2}}_{\text{Հայ–Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} =$ $= 1054 + 24 = 1078$ ՄՎտ	բնական	ՀԱԷԿ – Երևան ՋԷԿ ԱՏ 220 կՎ ԷՀԳ ՀԱԷԿ-ի մոտ	0.16 վրկ. անջատվում է ՀԱԷԿ – Երևան ՋԷԿ ԱՏ 220 կՎ ԷՀԳ-ն	Այո	-	18.1 P(t) 18.2 δ(t) 18.3 f(t)
19	N_4	Նորոգման մեջ է ՀԱԷԿ-Շահումյան 220 կՎ ԷՀԳ-ը $P_{\text{Հայ–Իր}} = P^{\text{հա2}}_{\text{Հայ–Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} =$ $= 1054 + 24 = 1078$ ՄՎտ	բացառ	ՀԱԷԿ – Երևան ՋԷԿ ԱՏ 220 կՎ ԷՀԳ ՀԱԷԿ-ի մոտ	0.16 վրկ. Երևան ՋԷԿ ԱՏ ե/կ-ում 0.35 վրկ. ՀԱԷԿ ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են ԱՏ 220/110, ՀԱԷԿ- Երևան ՋԷԿ ԱՏ և ՀԱԷԿ-Աշնակ 220 կՎ ԷՀԳ-երը և ՀԱԷԿ-ի Գ-2-ը	Ոչ (ՀԱԷԿ-ի կայունությունը խախտվում է)	Այո, անհրաժեշտ է ԱՀՊՍ -ի ժամանակը իջեցնել 0.35 –ից 0.3 վրկ. (տես հաշվարկ 19՛)	19.1 P(t) 19.2 δ(t) 19.3 f(t)
19՛	N_4	Նորոգման մեջ է ՀԱԷԿ-Շահումյան 220 կՎ ԷՀԳ-ը $P_{\text{Հայ–Իր}} = P^{\text{հա2}}_{\text{Հայ–Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} =$ $= 1054 + 24 = 1078$ ՄՎտ	բացառ	ՀԱԷԿ – Երևան ՋԷԿ ԱՏ 220 կՎ ԷՀԳ ՀԱԷԿ-ի մոտ	0.16 վրկ. Երևան ՋԷԿ ԱՏ ե/կ-ում 0.30 վրկ. ՀԱԷԿ ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են ԱՏ 220/110, ՀԱԷԿ- Երևան ՋԷԿ ԱՏ և ՀԱԷԿ-Աշնակ 220 կՎ ԷՀԳ-երը և ՀԱԷԿ-ի Գ-2-ը	Այո	-	19՛.1 P(t) 19՛.2 δ(t) 19՛.3 f(t)
20	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{\text{Հայ–Իր}} = P^{\text{հա2}}_{\text{Հայ–Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} =$ $= 1056 + 24 = 1080$ ՄՎտ	բնական	-	Անջատվում է Հրազդան ՋԷԿ (5 բլոկ)-ի ՇՏԳ 320 ՄՎտ և ԳՏԳ 165 ՄՎտ	Այո	-	20.1 P(t) 20.2 δ(t) 20.3 f(t)
21	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{\text{Հայ–Իր}} = P^{\text{հա2}}_{\text{Հայ–Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} =$ $= 1055 + 24 = 1074$ ՄՎտ	բացառ	Նաիրիտ 1 110 կՎ ԷՀԳ Երևան ՋԷԿ-ի մոտ	0.48 վրկ. Նաիրիտ 1 և 2 110 կՎ ԷՀԳ-երը	Ոչ (Երևանի ՋԷԿ-ը դուրս է գալիս)	Այո, ԿԽԿԱ-ի կիրառմամբ	21.1 P(t) 21.2 δ(t) 21.3 f(t)

Սցենար 1-ի շրջանակներում տարբեր ռեժիմային իրավիճակների համար իրականացված դինամիկ կայունության հաշվարկային արդյունքների վերլուծության արդյունքում բացահայտված խնդիրները և վերջիններիս կանխարգելմանն ուղղված միջոցառումների նկարագրությունը ներկայացվում են ստորև:

Հաշվարկ № 5-ում նորոգման մեջ է Հրազդան-Նորավան 400 կՎ երկշղթա ԷՀԳ-երից մեկը, տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Հրազդան-Նորավան 400 կՎ ԷՀԳ-ի մյուս շղթայում՝ Հրազդան ե/կ-ի մոտ: Անհաջող ԱԿՄ-ի արդյունքում տեղի է ունենում ԷԷՀ-ի կայունության խախտում: Դիտարկվող ԷՀԳ-երի շղթաներից մեկի անջատված լինելու պարագայում որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է Հայաստան-Իրան միջհամակարգային կապով փոխհոսքը նվազեցնել 250 ՄՎտ-ով՝ Բնականոն ռեժիմում 1072 ՄՎտ փոխհոսքի պարագայում (տես Հաշվ. № 5′):

Հաշվարկ № 9-ում նորոգման մեջ է Նորավան-Հերիս 400 կՎ ԷՀԳ-ն, տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Նորավան-Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ում՝ Նորավան ե/կ-ի մոտ: Անհաջող ԱԿՄ-ի արդյունքում տեղի է ունենում ԷԷՀ-ի կայունության խախտում: Որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է Հայաստան-Իրան միջհամակարգային կապով փոխհոսքը նվազեցնել 555 ՄՎտ-ով՝ նախնական ռեժիմում 1074 ՄՎտ փոխհոսքի պարագայում (տես Հաշվ. № 9′):

Հաշվարկ № 10-ում նորոգման մեջ է Նորավան-Հերիս 400 կՎ ԷՀԳ-ն, տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Նորավան-Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ում՝ Նորավան ե/կ-ի մոտ: Անջատվում է Նորավան-Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ն, սակայն տեղի է ունենում ԷԷՀ-ի կայունության խախտում: Որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է Հայաստան-Իրան միջհամակարգային կապով փոխհոսքը նվազեցնել 555 ՄՎտ-ով՝ նախնական ռեժիմում 1074 ՄՎտ փոխհոսքի պարագայում (տես Հաշվ. № 10′):

Հաշվարկ № 11-ում դիտարկվում է Բնականոն ռեժիմ՝ N_0 նախնական ռեժիմային իրավիճակ: Տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Հրազդան ՋԷԿ(5 բլոկ) – ՀրազդանՀԷԿ 220 կՎ ԷՀԳ-ում՝ Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) ե/կ-ի մոտ: Հաշվարկ № 11-ում դիտարկված վթարային իրավիճակում գործարկվում է ԱՀՊՍ, սակայն տեղի է ունենում Հրազդան ՋԷԿ (5 բլոկ)-ի կայունության խախտում և որպես հետևանք ԷԷՀ-ի կայունության խախտում: Որպես կանխարգելման միջոցառում

առաջարկվում է ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.25 վրկ. (տես Հաշվ. № 11′):

Հաշվարկ № 15-ում դիտարկվում է Բնականոն ռեժիմ՝ N_0 նախնական ռեժիմային իրավիճակ: Տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Մարաշ-Երևան ՋԷԿ ԱՏ 220 կՎ ԷՀԳ-ի՝ Երևան ՋԷԿ ԱՏ-ի մոտ: Հաշվարկ № 15-ում դիտարկված վթարային իրավիճակում գործարկվում է ԱՀՊՍ, սակայն ՀՇԳՑԷ (ՌԵՆԿՈ) ջերմային էլեկտրակայանի կայունությունը խախտվում է: Որպես կանխարգելիչ միջոցառում անհրաժեշտ է կիրառել ԿԽԿԱ:

Հաշվարկ № 17-ում դիտարկվում է Բնականոն ռեժիմ՝ N_0 նախնական ռեժիմային իրավիճակ: Տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ ՀԱԷԿ - Շահումյան 220 կՎ ԷՀԳ-ում՝ ՀԱԷԿ ե/կ-ի մոտ: Հաշվարկ № 17-ում դիտարկված վթարային իրավիճակում գործարկվում է ԱՀՊՍ, սակայն տեղի է ունենում ՀԱԷԿ-ի կայունության խախտում և որպես հետևանք նաև ԷԷՀ-ի կայունության խախտում: Որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.3 վրկ. (տես Հաշվ. № 17′):

Հաշվարկ № 19-ում նորոգման մեջ է ՀԱԷԿ-Շահումյան 220 կՎ ԷՀԳ-ն, տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ ՀԱԷԿ – Երևան ՋԷԿ ԱՏ 220 կՎ ԷՀԳ-ում՝ ՀԱԷԿ ե/կ-ի մոտ: Հաշվարկ № 19-ում դիտարկված վթարային իրավիճակում գործարկվում է ԱՀՊՍ, սակայն տեղի է ունենում ՀԱԷԿ-ի կայունության խախտում: Որպես կանխարգել-ման միջոցառում առաջարկվում է ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.3 վրկ. (տես Հաշվ. № 19′):

Հաշվարկ № 21-ում դիտարկվում է Բնականոն ռեժիմ՝ N_0 նախնական ռեժի-մային իրավիճակ: Տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Նաիրիտ-1 110 կՎ ԷՀԳ-ում՝ Երևան ՋԷԿ-ի մոտ: Անջատվում են Նաիրիտ 1 և 2 110կՎ ԷՀԳ-երը, սակայն Երևան ՋԷԿ-ի կայունությունը խախտվում է: Որպես կանխարգելիչ միջոցառում անհրաժեշտ է կիրառել ԿԽԿԱ:

Սցենար 2-ի համար ԷԷՀ-ի դինամիկ կայունության հաշվարկները իրականացվել են հիմք ընդունելով 2022 թ-ի Գարնան առավելագույն հաշվեկշռին համապատասխան ռեժիմը:

Ստորև աղյուսակում ներկայացված են **Սցենար 2**-ի համար դինամիկ կայունության հաշվարկային արդյունքները ԷԷՀ-ի տարբեր խոտորումների հետևանքով առաջացած ռեժիմային իրավիճակների համար:

Մասնավորապես աղյուսակում ներկայացված են ԷԷՀ-ի նախավթարային իրավիճակը, դիտարկվող պատահարի տարատեսակը, դինամիկ կայունության ապահովման համար անհրաժեշտ միջոցառումները:

Հաշվ N	ԷԷՀ-ի իրավիճակը		Դիտարկվող պատահարը N-1			Դինամիկ կայունության ապահովումը		
	Անվ.	Բնութագրումը	Տեսակը	կմ(3)-ի տեղը	կմ(3)-ի տևողությունը և անջ. տարրերը	Առանց միջոցառման կիրառման	Միջոցառման կիրառմամբ	Նկար
22	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + ΔP_{ան.տ} = 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բնական	Նորավան – Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. Նորավան-Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ը	Այո	-	22.1 P(t) 22.2 δ(t) 22.3 f(t)
23	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + ΔP_{ան.տ} = 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բացառ	Նորավան – Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. Ջուլֆա ե/կ-ում 0.3 վրկ. Նորավան ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են Նորավան-Ջուլֆա, Նորավան-Հրազդան 1 400 կՎ ԷՀԳ-երը, և AS1 400/220	Ոչ	Այո, անհրաժեշտ է ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.3 –ից 0.24 վրկ և անջատել Հայաստան-Վրաստան 350 ՄՎտ փոխհոսքը (տես հաշ. 23′)	23.1 P(t) 23.2 δ(t) 23.3 f(t)
23′		ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + ΔP_{ան.տ} = 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բացառ	Նորավան – Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. Ջուլֆա ե/կ-ում 0.24 վրկ. Նորավան ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են Նորավան-Ջուլֆա, Նորավան-Հրազդան 1 400 կՎ ԷՀԳ-երը, և AS1 400/220 Հայաստան-Վրաստան 350 ՄՎտ փոխհոսքը	Այո	-	23′.1 P(t) 23′.2 δ(t) 23′.3 f(t)

24	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{\text{Հայ}-\text{Իր}} = P^{\text{հաշ}2}_{\text{Հայ}-\text{Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} =$ $= 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{\text{Հայ}-\text{Վր}} = -350$ ՄՎտ	բացառ	Հրազդան-Նորավան 1 400 կՎ ԷՀԳ Հրազդան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. Նորավան ե/կ-ում 0.3 վրկ. Հրազդան ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են Հրազդան-Նորավան1, Հրազդան-Այրում1 400 կՎ ԷՀԳ-երը և AS1 400/220	Ոչ	Այո, անհրաժեշտ է ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.3 –ից 0.25 վրկ. և անջատել Հայաստան-Վրաստան 350 ՄՎտ փողհոսքը (տես հաշ. 24՛)	24.1 P(t) 24.2 δ(t) 24.3 f(t)
24՛	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{\text{Հայ}-\text{Իր}} = P^{\text{հաշ}2}_{\text{Հայ}-\text{Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} =$ $= 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{\text{Հայ}-\text{Վր}} = -350$ ՄՎտ	բացառ	Հրազդան-Նորավան 1 400 կՎ ԷՀԳ Հրազդան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. Նորավան ե/կ-ում 0.25 վրկ. Հրազդան ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են Հրազդան-Նորավան1, Հրազդան-Այրում1 400 կՎ ԷՀԳ-երը և AS1 400/220, Հայաստան-Վրաստան 350 ՄՎտ փոխհոսքը	Այո	-	24՛.1 P(t) 24՛.2 δ(t) 24՛.3 f(t)
25	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{\text{Հայ}-\text{Իր}} = P^{\text{հաշ}2}_{\text{Հայ}-\text{Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} =$ $= 1600 + 24 = 1624$ՄՎտ $P_{\text{Հայ}-\text{Վր}} = -350$ՄՎտ	բնական	Հրազդան-Նորավան 1 400 կՎ ԷՀԳ-ի Հրազդան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անհաջող ԱԿՄ $\frac{0.1 \text{ վրկ}}{\text{ԿՄ}} + \frac{2 \text{ վրկ}}{\text{դադար}} + \frac{0.1}{\text{ԿՄ}}$	Այո	-	25.1 P(t) 25.2 δ(t) 25.3 f(t)
26	N_1	Նորոգման մեջ է Հրազդան-Նորավան1 400 կՎ ԷՀԳ-ը $P_{\text{Հայ}-\text{Իր}} = P^{\text{հաշ}2}_{\text{Հայ}-\text{Իր}} + \Delta P_{\text{ան.տ}} =$ $= 1571 + 24 = 1595$ ՄՎտ $P_{\text{Հայ}-\text{Վր}} = -350$ ՄՎտ	բնական	Հրազդան-Նորավան 2 400 կՎ ԷՀԳ-ի Հրազդան ե/կ-ի մոտ	0.1 վրկ անհաջող ԱԿՄ $\frac{0.1 \text{ վրկ}}{\text{ԿՄ}} + \frac{2 \text{ վրկ}}{\text{դադար}} + \frac{0.1}{\text{ԿՄ}}$	Ոչ	Երբ նորոգման մեջ է Հրազդան-Նորավան1 400 կՎ ԷՀԳ-ը, ապա նախապես անհրաժեշտ է նվազեցնել Հայաստան-Իրան փոխհոսքը820 ՄՎտ-ով	26.1 P(t) 26.2 δ(t) 26.3 f(t)

							(տես հաշ. 26՛)	
26՛	N_1	Նորոգման մեջ է Հրազդան-Նորավան1 400 կՎ ԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 817 + 24 = 841$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = 0$ ՄՎտ	բնական	Հրազդան-Նորավան 2 400 կՎ ԷՀԳ-ի Հրազդան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անհաջող ԱԿՄ $\frac{0.1 \text{ վրկ}}{\text{ԿՄ}} + \frac{2 \text{ վրկ}}{\text{դադար}} + \frac{0.1}{\text{ԿՄ}}$	Այո	-	26՛.1 P(t) 26՛.2 δ(t) 26՛.3 f(t)
27	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բնական	Շինուհայր-Ագարակ1 220 կՎ ԷՀԳ –ի Շինուհայր ե/կ-ի մոտ	0.16 վրկ. Շինուհայր-Ագարակ1 220 կՎ ԷՀԳ-ը	Այո	-	27.1 P(t) 27.2 δ(t) 27.3 f(t)
28	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բնական	Շինուհայր-Ագարակ1 220 կՎ ԷՀԳ-ի Շինուհայր ե/կ-ի մոտ	0.16 վրկ. Ագարակ ե/կ-ում 0.35 վրկ Շինուայր ե/կ-ում (ԱՀՊՍ) Շինուհայր-Ագարակ1, Նորավան- Շինուհայր կամ Սպանդարյան-Շինուհայր 220 կՎ ԷՀԳ-ից մեկը և AS 125 ՄՎԱ 220/110	Այո	-	28.1 P(t) 28.2 δ(t) 28.3 f(t)
29	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բնական	Նորավան –Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անհաջող ԱԿՄ $\frac{0.1 \text{ վրկ}}{\text{ԿՄ}} + \frac{2 \text{ վրկ}}{\text{դադար}} + \frac{0.1}{\text{ԿՄ}}$	Ոչ	Այո, անհրաժեշտէԱԿՄժամանակը 2 վրկ-ից բարձրացնել 3 վրկ (տես հաշ. 29՛)	29.1 P(t) 29.2 δ(t) 29.3 f(t)

29’	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բնական	Նորավան –Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անհաջող ԱԿՄ $\frac{0.1 \text{ վրկ}}{\text{ԿՄ}} + \frac{3 \text{ վրկ}}{\text{դադար}} + \frac{0.1}{\text{ԿՄ}}$	Այո	-	29՛.1 P(t) 29՛.2 δ(t) 29՛.3 f(t)
30	N_2	Նորոգման մեջ է Նորավան – Հերիս 400 կՎ ԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1580 + 24 = 1604$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բնական	Նորավան -Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անհաջող ԱԿՄ $\frac{0.1 \text{ վրկ}}{\text{ԿՄ}} + \frac{2 \text{ վրկ}}{\text{դադար}} + \frac{0.1}{\text{ԿՄ}}$	Ոչ	Երբ նորոգման մեջ է Նորավան – Հերիս 400 կՎ ԷՀԳ-ը, ապա նախապես անհրաժեշտ է նվազեցնել Հայաստան-Իրան փոխհոսքը 1000 ՄՎտ-ով (տես հաշ. 30՛)	30.1 P(t) 30.2 δ(t) 30.3 f(t)
30՛	N_2	Նորոգման մեջ է Նորավան – Հերիս 400 կՎ ԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 642 + 24 = 666$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = 0$ ՄՎտ	բնական	Նորավան -Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անհաջող ԱԿՄ $\frac{0.1 \text{ վրկ}}{\text{ԿՄ}} + \frac{2 \text{ վրկ}}{\text{դադար}} + \frac{0.1}{\text{ԿՄ}}$	Այո	-	30՛.1 P(t) 30՛.2 δ(t) 30՛.3 f(t)
31	N_2	Նորոգման մեջ է Նորավան – Հերիս 400 կՎ ԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1580 + 24 = 1604$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բնական	Նորավան -Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անջատվում է Նորավան- Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ն	Ոչ	Երբ նորոգման մեջ է Նորավան – Հերիս 400 կՎ ԷՀԳ-ը, ապա նախապես անհրաժեշտ է նվազեցնել Հայաստան-Իրան փոխհոսքը 1000 ՄՎտ-ով (տես հաշ. 31՛)	31.1 P(t) 31.2 δ(t) 31.3 f(t)

31′	N2	Նորոգման մեջ է Նորավան – Հերիս 400 կՎ ԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 642 + 24 = 666$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = 0$ ՄՎտ	բնական	Նորավան -Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անջատվում է Նորավան- Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ն	Այո	-	31′.1 P(t) 31′.2 δ(t) 31′.3 f(t)
32	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բացառ	Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) - Հրազդան ՀԷԿ 220 կՎ ԷՀԳ Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) ե/կ-ի մոտ	0.16 վրկ. Հրազդան ՀԷԿ ե/կ-ում 0.35 վրկ. Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են Հրազդան ՋԷԿ (5 բլոկ)-Հրազդան ՀԷԿ, Հրազդան ՋԷԿ (5 բլոկ)-Վանաձոր2 ե/կ, Հրազդան ՋԷԿ(5 բլոկ)-Ջովունի ե/կ 220 կՎ ԷՀԳ-երը, AS1 400/220 և ԳՏԳ 165 ՄՎտ	Ոչ (Հրազդան ՋԷԿ (5 բլոկ)-ի կայունությունը խախտվում է)	Այո, անհրաժեշտ է ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 –ից 0.22 վրկ. (տես հաշ.32′)	32.1 P(t) 32.2 δ(t) 32.3 f(t)
32′	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բացառ	Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) - Հրազդան ՀԷԿ 220 կՎ ԷՀԳ Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) ե/կ-ի մոտ	0.16 վրկ. Հրազդան ՀԷԿ ե/կ-ում 0.22վրկ. Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են Հրազդան ՋԷԿ (5 բլոկ)-Հրազդան ՀԷԿ, Հրազդան ՋԷԿ (5 բլոկ)-Վանաձոր2 ե/կ, Հրազդան ՋԷԿ(5 բլոկ)-Ջովունի ե/կ 220 կՎ ԷՀԳ-երը, AS1 400/220 և ԳՏԳ 165 ՄՎտ	Այո	-	32′.1 P(t) 32′.2 δ(t) 32′.3 f(t)

33	N_3	Նորոգման մեջ է Ագարակ-Շինուայր1 220 կՎԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1595 + 24 = 1619$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բնական	Նորավան -Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. անջատվում է Նորավան- Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ն	Այո	-	33.1 P(t) 33.2 δ(t) 33.3 f(t)
34	N_3	Նորոգման մեջ է Ագարակ-Շինուայր1 220 կՎԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1595 + 24 = 1619$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բացառ	Նորավան -Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. Ջուլֆա ե/կ-ում 0.3 վրկ. Նորավան ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են Նորավան-Ջուլֆա, Նորավան-Հրազդան 1 400 կՎ ԷՀԳ-ները, և ԱՏ1 400/220	Ոչ	Երբ նորոգման մեջ է Ագարակ-Շինուհայր1 220 կՎ ԷՀԳ-ը, ապա նախապես անհրաժեշտ է նվազեցնել Հայաստան-Իրան փոխհոսքը 535 ՄՎտ-ով (տես հաշ. 34՛)	34.1 P(t) 34.2 δ(t) 34.3 f(t)
34՛	N_3	Նորոգման մեջ է Ագարակ-Շինուայր1 220 կՎԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1092 + 24 = 1116$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = 0$ ՄՎտ	բացառ	Նորավան -Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ի Նորավան ե/կ-ի մոտ	0.1 վրկ. Ջուլֆա ե/կ-ում 0.3 վրկ. Նորավան եկ-ում (ԱՀՊՍ) անջատվում են Նորավան-Ջուլֆա, Նորավան-Հրազդան 1 400 կՎ ԷՀԳ-ները, և ԱՏ1 400/220	Այո	-	34՛.1 P(t) 34՛.2 δ(t) 34՛.3 f(t)
35	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բնական	Մարաշ-Երևան ՋԷԿ 220 կՎ ԷՀԳ-ի Երևան ՋԷԿ ԱՏ-ի մոտ	0.16 վրկ. անջատվում է Մարաշ-Երևան ՋԷԿ 220 կՎ ԷՀԳ-ը	Այո	-	35.1 P(t) 35.2 δ(t) 35.3 f(t)

36	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ2}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բացառ	Մարաշ-Երևան ՋԷԿ ԱՏ 220 կՎ ԷՀԳ-ի Երևան ՋԷԿ ԱՏ-ի մոտ	0.16 վրկ. Մարաշ-ում 0.35 վրկ. Երևան ՋԷԿ ԱՏ-ում (ԱՀՊՍ) անջատվում են Մարաշ-Երևան ՋԷԿ ԱՏ, Երևան ՋԷԿ ԱՏ-Արարատ2 220 կՎ ԷՀԳ-ները և ԱՏ 220/110	Ոչ (ՀՇԳՑԷ Ռենկո -ն դուրս է գալիս)	Այո, ԿԽԿԱ-ի կիրառմամբ	36.1 P(t) 36.2 δ(t) 36.3 f(t)
37	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ2}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բնական	ՀԱԷԿ - Շահումյան 220 կՎ ԷՀԳ ՀԱԷԿ ե/կ-ի մոտ	0.16 վրկ. ՀԱԷԿ-Շահումյան 220 կՎ ԷՀԳ-ը	Այո	-	37.1 P(t) 37.2 δ(t) 37.3 f(t)
38	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ2}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բացառ	ՀԱԷԿ - Շահումյան 220 կՎ ԷՀԳ ՀԱԷԿ ե/կ-ի մոտ	0.16 վրկ. Շահումյան եկ-ում 0.35 վրկ. ՀԱԷԿ եկ-ում (ԱՀՊՍ) անջատվում են ՀԱԷԿ-Շահումյան, ՀԱԷԿ-Արարատ2, ՀԱԷԿ-Աշնակ 2 220 կՎ ԷՀԳ-երը և ՀԱԷԿ-ի Գ-1-ը	Ոչ (ՀԱԷԿ-ի կայունությունը խախտվում է)	Այո, անհրաժեշտ է ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 –ից 0.29 վրկ. (տես հաշ. 38՛)	38.1 P(t) 38.2 δ(t) 38.3 f(t)
38՛	N0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ2}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բացառ	ՀԱԷԿ - Շահումյան 220 կՎ ԷՀԳ ՀԱԷԿ եկ-ի մոտ	0.16 վրկ. Շահումյան ե/կ-ում 0.35 վրկ. ՀԱԷԿ ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են ՀԱԷԿ-Շահումյան, ՀԱԷԿ-Արարատ2, ՀԱԷԿ-Աշնակ 2 220 կՎ ԷՀԳ-երը և ՀԱԷԿ-ի Գ-1-ը	Այո	-	38՛.1 P(t) 38՛.2 δ(t) 38՛.3 f(t)
39	N4	Նորոգման մեջ է ՀԱԷԿ-Շահումյան 220 կՎ ԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ2}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1596 + 24 = 1620$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բնական	ՀԱԷԿ – Երևան ՋԷԿ ԱՏ 220 կՎ ԷՀԳ ՀԱԷԿ-ի մոտ	0.16 վրկ. անջատվում է ՀԱԷԿ – Երևան ՋԷԿ ԱՏ 220 կՎ ԷՀԳ-ն	Այո	-	39.1 P(t) 39.2 δ(t) 39.3 f(t)

40	N_4	Նորոգման մեջ է ՀԱԷԿ-Շահումյան 220 կՎ ԷՀԳ-ը $P_{Հայ-Իր} = P^{հաշ2}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1596 + 24 = 1620$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բացառ	ՀԱԷԿ – Երևան ՋԷԿ ԱՏ 220 կՎ ԷՀԳ ՀԱԷԿ-ի մոտ	0.16 վրկ. Երևան ՋԷԿ ԱՏ ե/կ-ում 0.35 վրկ. ՀԱԷԿ ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են ԱՏ 220/110, ՀԱԷԿ- Երևան ՋԷԿ ԱՏ և ՀԱԷԿ-Աշնակ 1 220 կՎ ԷՀԳ-երը և ՀԱԷԿ-ի Գ-2-ը	Ոչ (ՀԱԷԿ-ի կայունությունը խախտվում է)	Այո, անհրաժեշտ է ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 –ից 0.27 վրկ. (տես հաշ.40՛)	40.1 P(t) 40.2 δ(t) 40.3 f(t)
40՛	N_4	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ2}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1596 + 24 = 1620$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բացառ	ՀԱԷԿ – Երևան ՋԷԿ ԱՏ 220 կՎ ԷՀԳ ՀԱԷԿ-ի մոտ	0.16 վրկ. Երևան ՋԷԿ ԱՏ ե/կ-ում 0.27 վրկ. ՀԱԷԿ ե/կ-ում (ԱՀՊՍ) անջատվում են ԱՏ 220/110, ՀԱԷԿ- Երևան ՋԷԿ ԱՏ և ՀԱԷԿ-Աշնակ 220 կՎ ԷՀԳ-երը և ՀԱԷԿ-ի Գ-2-ը	Այո	-	40՛.1 P(t) 40՛.2 δ(t) 40՛.3 f(t)
41	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ2}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բնական	-	Անջատվում է Հրազդան ՋԷԿ (5 բլոկ)-ի ՇՏԳ 320 ՄՎտ և ԳՏԳ 165 ՄՎտ	Այո	-	41.1 P(t) 41.2 δ(t) 41.3 f(t)
42	N_0	ԷԷՀ-ի բոլոր տարրերը բնականոն ռեժիմում են $P_{Հայ-Իր} = P^{հաշ2}_{Հայ-Իր} + \Delta P_{ան.տ} =$ $= 1600 + 24 = 1624$ ՄՎտ $P_{Հայ-Վր} = -350$ ՄՎտ	բացառ	Նաիրիտ 1 110 կՎ ԷՀԳ Երևան ՋԷԿ-ի մոտ	0.48 վրկ. Նաիրիտ 1 և 2 110 կՎ ԷՀԳ-ները	Ոչ (Երևանի ՋԷԿ-ը դուրս է գալիս)	Այո, ԿԽԿԱ-ի կիրառմամբ	42.1 P(t) 42.2 δ(t) 42.3 f(t)

Սցենար 2-ի շրջանակներում տարբեր ռեժիմային իրավիճակների համար իրականացված դինամիկ կայունության հաշվարկային արդյունքների վերլուծության արդյունքում բացահայտված խնդիրները և վերջիններիս կանխարգելմանն ուղղված միջոցառումների նկարագրությունը ներկայացվում է ստորև:

Հաշվարկ № 23-ում դիտարկվում է Բնականոն ռեժիմ՝ N_0 նախնական ռեժիմային իրավիճակ: Տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Նորավան-Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ում՝ Նորավան ե/կ-ի մոտ: Հաշվարկ № 23-ում դիտարկված վթարային իրավիճակում գործարկվում է ԱՀՊՍ, սակայն տեղի է ունենում ԷԷՀ-ի կայունության խախտում: Որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.3 վրկ.-ից 0.24 վրկ. և անջատել Հայաստան-Վրաստան 350 ՄՎտ փոխհոսքը (տես Հաշվ. № 23′):

Հաշվարկ № 24-ում դիտարկվում է Բնականոն ռեժիմ՝ N_0 նախնական ռեժիմային իրավիճակ: Տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Հրազդան-Նորավան 400 կՎ երկշղթա ԷՀԳ-ից մեկի վրա՝ Հրազդան ե/կ-ի մոտ:Հաշվարկ № 24-ում դիտարկված վթարային իրավիճակում գործարկվում է ԱՀՊՍ, սակայն տեղի է ունենում ԷԷՀ-ի կայունության խախտում: Որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.3 վրկ.-ից 0.25 վրկ. և անջատել Հայաստան-Վրաստան 350 ՄՎտ փոխհոսքը (տես Հաշվ. № 24′):

Հաշվարկ № 26-ում նորոգման մեջ է Հրազդան-Նորավան 400 կՎ երկշղթա ԷՀԳ-երից մեկը, տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Հրազդան-Նորավան 400 կՎ ԷՀԳ-ի մյուս շղթայում՝ Հրազդան ե/կ-ի մոտ: Անհաջող ԱԿՄ-ի արդյունքում տեղի է ունենում ԷԷՀ-ի կայունության խախտում: Դիտարկվող ԷՀԳ-երի շղթաներից որևիցե մեկի անջատված լինելու պարագայում որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է Հայաստան-Իրան միջհամակարգային կապով փոխհոսքը նախապես նվազեցնել 820 ՄՎտ-ով՝ Բնականոն ռեժիմում 1,595 ՄՎտ փոխհոսքի պարագայում, իսկ Հայաստան-Վրաստան 350 ՄՎտ փոխհոսքը անջատել (տես Հաշվ. № 26′):

Հաշվարկ № 29-ում դիտարկվում է Բնականոն ռեժիմ՝ N_0 նախնական ռեժիմային իրավիճակ: Տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Նորավան-Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ում՝ Նորավան ե/կ-ի մոտ: Անհաջող ԱԿՄ-ի արդյունքում տեղի է ունենում ԷԷՀ-ի

կայունության խախտում: Որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է ԱԿՄ-ի ժամանակը 2 վրկ.-ից բարձրացնել 3 վրկ. (տես Հաշվ. № 29′):

Հաշվարկ № 30-ում նորոգման մեջ է Նորավան-Հերիս 400 կՎ ԷՀԳ-ն, տեղի է ունենում $ԿՄ^{(3)}$ Նորավան-Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ում՝ Նորավան ե/կ-ի մոտ: Անհաջող ԱԿՄ-ի արդյունքում տեղի է ունենում ԷԷՀ-ի կայունության խախտում: Որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է Հայաստան-Իրան միջհամակարգային կապով փոխհոսքը նախապես նվազեցնել 1000 ՄՎտ-ով՝ նախնական ռեժիմում 1604 ՄՎտ փոխհոսքի պարագայում, իսկ Հայաստան-Վրաստան 350 ՄՎտ փոխհոսքը անջատել (տես Հաշվ. № 30′):

Հաշվարկ № 31-ում նորոգման մեջ է Նորավան-Հերիս 400 կՎ ԷՀԳ-ն, տեղի է ունենում $ԿՄ^{(3)}$ Նորավան-Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ում՝ Նորավան ե/կ-ի մոտ: Անջատվում է Նորավան-Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ն, սակայն տեղի է ունենում ԷԷՀ-ի կայունության խախտում: Որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է Հայաստան-Իրան միջհամակարգային կապով փոխհոսքը նախապես նվազեցնել 1000 ՄՎտ-ով՝ նախնական ռեժիմում 1604 ՄՎտ փոխհոսքի պարագայում, իսկ Հայաստան-Վրաստան 350 ՄՎտ փոխհոսքը անջատել (տես Հաշվ. № 31′):

Հաշվարկ № 32-ում դիտարկվում է Բնականոն ռեժիմ՝ N_0 նախնական ռեժիմային իրավիճակ: Տեղի է ունենում $ԿՄ^{(3)}$ Հրազդան ՋԷԿ(5 բլոկ) – ՀրազդանՀԷԿ 220 կՎ ԷՀԳ-ում՝ Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) ե/կ-ի մոտ: Հաշվարկ № 32-ում դիտարկված վթարային իրավիճակում գործարկվում է ԱՀՊՍ, սակայն տեղի է ունենում Հրազդան ՋԷԿ (5 բլոկ)-ի կայունության խախտում: Որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.22 վրկ. (տես Հաշվ. № 32′):

Հաշվարկ № 34-ում նորոգման մեջ է Ագարակ-Շինուայր 220 կՎ երկշղթա ԷՀԳ-երից մեկը, տեղի է ունենում $ԿՄ^{(3)}$ Նորավան-Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ում՝ Նորավան ե/կ-ի մոտ: Հաշվարկ № 34-ում դիտարկված վթարային իրավիճակում գործարկվում է ԱՀՊՍ, սակայն տեղի է ունենում ԷԷՀ-ի կայունության խախտում: Որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է Հայաստան-Իրան միջհամակարգային կապով փոխհոսքը նախապես նվազեցնել 535 ՄՎտ-ով՝ նախնական ռեժիմում 1619 ՄՎտ փոխհոսքի պարագայում, իսկ Հայաստան-Վրաստան 350 ՄՎտ փոխհոսքը անջատել (տես Հաշվ. № 34′):

Հաշվարկ № 36-ում դիտարկվում է Բնականոն ռեժիմ՝ N_0 նախնական ռեժիմային իրավիճակ: Տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Մարաշ-Երևան ՋԷԿ ԱՏ220 կՎ ԷՀԳ-ի՝ Երևան ՋԷԿ ԱՏ-ի մոտ: Հաշվարկ № 36-ում դիտարկված վթարային իրավիճակում գործարկվում է ԱՀՊՍ, սակայն ՀՇԳՑԷ (ՌԵՆԿՈ) ջերմային կայանի կայունությունը խախտվում է: Որպես կանխարգելիչ միջոցառում անհրաժեշտ է կիրառել ԿԽԿԱ:

Հաշվարկ № 38-ում դիտարկվում է Բնականոն ռեժիմ՝ N_0 նախնական ռեժիմային իրավիճակ: Տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ ՀԱԷԿ - Շահումյան 220 կՎ ԷՀԳ-ում՝ ՀԱԷԿ ե/կ-ի մոտ: Հաշվարկ № 38-ում դիտարկված վթարային իրավիճակում գործարկվում է ԱՀՊՍ, սակայն տեղի է ունենում ՀԱԷԿ-ի կայունության խախտում: Որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.29 վրկ. (տես Հաշվ. № 38′):

Հաշվարկ № 40-ում նորոգման մեջ է ՀԱԷԿ-Շահումյան 220 կՎ ԷՀԳ-ն, տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ ՀԱԷԿ – Երևան ՋԷԿ ԱՏ 220 կՎ ԷՀԳ-ում՝ ՀԱԷԿ ե/կ-ի մոտ: Հաշվարկ № 40-ում դիտարկված վթարային իրավիճակում գործարկվում է ԱՀՊՍ, սակայն տեղի է ունենում ՀԱԷԿ-ի կայունության խախտում: Որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.27 վրկ. (տես Հաշվ. № 40′):

Հաշվարկ № 42-ում դիտարկվում է Բնականոն ռեժիմ՝ N_0 նախնական ռեժիմային իրավիճակ: Տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Նաիրիտ-1 110 կՎ ԷՀԳ-ում՝ Երևան ՋԷԿ-ի մոտ: Անջատվում են Նաիրիտ 1 և 2 110կՎ ԷՀԳ-երը, սակայն Երևան ՋԷԿ-ի կայունությունը խախտվում է: Որպես կանխարգելիչ միջոցառում անհրաժեշտ է կիրառել ԿԽԿԱ:

Ռելեական պաշտպանության և հակավթարային ավտոմատիկայի նախադրվածքների երկարաժամկետ ծրագրով նախատեսված ռեժիմներին համապատասխանության ստուգում

Սցենար 1-ի և **Սցենար 2**-ի շրջանակներում իրականացվել են ԷԷՀ-ի տարբեր խոտորումների մոդելավորման, դինամիկ կայունության հաշվարկների իրականացման և վերլուծության աշխատանքներ՝ երկարաժամկետ ծրագրի շրջանակներում զարգացումների հետևանքով նոր ռեժիմային իրավիճակներում ռելեական պաշտպանության և հակավթարային ավտոմատիկայի նախադրվածքների համապատասխանության վերստուգման և անհրաժեշտության դեպքում միջոցառումների առաջարկման նպատակով:

Սցենար 1-ի շրջանակներում իրականացված դինամիկ կայունության հաշվարկների վերլուծության արդյունքում մշակվել են հետևյալ առաջարկությունները՝

- ✓ Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) ե/կ-ում (220կՎ հաղորդաձող) ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.25 վրկ. (տես Հաշվ. № 11′),
- ✓ Հաշվարկ № 15-ում դիտարկված վթարային իրավիճակում գործարկվում է ԱՀՊՍ, սակայն ՀՇԳՑԷ (ՌԵՆԿՈ) ջերմային էլեկտրակայանի կայունությունը խախտվում է: Որպես կանխարգելիչ միջոցառում անհրաժեշտ է կիրառել ԿԽԿԱ,
- ✓ ՀԱԷԿ ե/կ-ում (220կՎ հաղորդաձող) ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.3 վրկ. (տես Հաշվ. № 17′ և Հաշվ. № 19′),
- ✓ Հաշվարկ № 21-ում դիտարկված վթարային իրավիճակում անջատվում են Նաիրիտ 1 և 2 110կՎ ԷՀԳ-երը, սակայն Երևան ՋԷԿ-ի կայունությունը խախտվում է: Որպես կանխարգելիչ միջոցառում անհրաժեշտ է կիրառել ԿԽԿԱ:

Սցենար 2-ի շրջանակներում իրականացված դինամիկ կայունության հաշվարկների վերլուծության արդյունքում մշակվել են հետևյալ առաջարկությունները՝

- ✓ Նորավան ե/կ-ում (400 կՎ հաղորդաձող) ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.3 վրկ.-ից 0.24 վրկ. (տես Հաշվ. № 23′),

- ✓ Հրազդան ե/կ-ում (400 կՎ հաղորդաձող) ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.3 վրկ.-ից 0.25 վրկ. (տես Հաշվ. № 24′),
- ✓ Հաշվարկ № 29-ում դիտարկված վթարային իրավիճակում տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Նորավան-Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ում՝ Նորավան ե/կ-ի մոտ: Անհաջող ԱԿՄ-ի արդյունքում տեղի է ունենում ԷԷՀ-ի կայունության խախտում: Որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է ԱԿՄ-ի ժամանակը 2 վրկ.-ից բարձրացնել 3 վրկ. (տես Հաշվ. № 29′),
- ✓ Հրազդան ՋԷԿ (5 բլոկ) ե/կ-ում (220կՎ հաղորդաձող) ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.22 վրկ. (տես Հաշվ. № 32′),
- ✓ Հաշվարկ № 36-ում դիտարկված վթարային իրավիճակում տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Մարաշ-Երևան ՋԷԿ ԱՏ 220 կՎ ԷՀԳ-ի՝ Երևան ՋԷԿ ԱՏ-ի մոտ, որի արդյունքում գործարկվում է ԱՀՊՍ, սակայն ՀՇԳՑԷ (ՌԵՆԿՈ) ջերմային կայանի կայունությունը խախտվում է: Որպես կանխարգելիչ միջոցառում անհրաժեշտ է կիրառել ԿԽԿԱ,
- ✓ ՀԱԷԿ ե/կ-ում (220կՎ հաղորդաձողերի համակարգ 1 (տես Հաշվ. № 38)) ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.29 վրկ. (տես Հաշվ. № 38′),
- ✓ ՀԱԷԿ ե/կ-ում (220կՎ հաղորդաձողերի համակարգ 2 (տես Հաշվ. № 40)) ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.27 վրկ. (տես Հաշվ. № 40′),
- ✓ Հաշվարկ № 42-ում դիտարկված վթարային իրավիճակում տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Նաիրիտ-1 110 կՎ ԷՀԳ-ում՝ Երևան ՋԷԿ-ի մոտ: Անջատվում են Նաիրիտ 1 և 2 110կՎ ԷՀԳ-ները, սակայն Երևան ՋԷԿ-ի կայունությունը խախտվում է: Որպես կանխարգելիչ միջոցառում անհրաժեշտ է կիրառել ԿԽԿԱ:

Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հաղորդման ցանցի 2020-2024թթ-ի զարգացման ծրագիր

Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հաղորդման ցանցի 2020-2024թթ-ի զարգացման ծրագրի (այսուհետև՝ Ծրագիր) նպատակն է դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ ԷԷՀ-ի զարգացումների արդյունքում գնահատել հնարավոր խնդիրները և խոչնդոտները համակարգի բնականոն և անխափան զարգացման համար, գնահատել ԷԷՀ-ի պահվածքը զարգացումների ներքո և անհրաժեշտության դեպքում մշակել միջոցառումներ և առաջարկություններ, ԷԷՀ-ի հետագա շահագործման և զարգացման գործընթացը նվազագույն ծախսումներով ապահովելու համար՝ ԷԷՀ-ի կայուն, հուսալի և անվտանգ շահագործման պայմաններում:

Ծրագրի մշակումը «ԷԳՀԻ» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (ներկայիս՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն) և «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի կողմից տրամադրած ելակետային տեղեկատվության հիման վրա: Ծրագրի մշակման շրջանակներում օգտագործվել է նաև ՀԾԿՀ-ում և ՀՎԷԷ հիմնադրամում առկա ելակետային տեղեկատվությունը: Մասնավորապես տրամադրվել է 2020-2024թթ-ի ընթացքում պլանավորվող զարգացումների, այն է՝ ՀՀ ԷԷՀ մուտք գործող ջերմային և այլընտրանքային աղբյուրներով՝ արև, քամի նոր հզորությունների, հաղորդման ցանցի վերազինման և զարգացման ծրագրերի, ՀՀ ԷԷՀ-ում շահագործման մեջ գտնվող էլեկտրակայանների պլանային վերանորոգման գրաֆիկների և հզորության ու էլեկտրաէներգիայի կանխատեսումային հայտերի, Հայաստան-Իրան և Հայաստան-Վրաստան 400 կՎ և 500 կՎ միջհամակարգային կապերի և վերջիններիս շահագործման համար անհրաժեշտ ե/թ-ների մասով առկա հարաչափերի վերաբերյալ տեղեկատվության և շահագործման հանձնման ժամանակացույցերի, ՀՀ ԷԷՀ-ի էլեկտրաէներգիայի ներքին սպառման ծավալների փոփոխման տենդենցների վերաբերյալ տեղեկատվությունը (Հավելված 1):

Ստորև աղյուսակներում ներկայացված են ՀՀ ԷԷՀ-ում 2019թ-ի դրությամբ գործող (ՓՀԷԿ-երի մասով) և 2020-2024թթ-ին պլանավորվող էլեկտրա-

կայանների դրվածքային հզորությունները և կանխատեսվող էլեկտրաէներգիայի արտադրանքը ըստ տարիների:

Համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայան (Ռենկո)

2020		2021		2022		2023		2024	
ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ
-	-	-	-	250	2120	250	2120	250	2120

Փոքր ՀԷԿ

2020		2021		2022		2023		2024	
ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ	ՄՎտ	մլն. կՎտ.ժամ
396	1000	404	1050	411	1100	417	1120	423	1170

Արևային ֆոտովոլտային էլեկտրակայաններ

Տարի	հզորություն/ մլն կՎտ.ժ	Մինչև 1 ՄՎտ	Մինչև 5 ՄՎտ	ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ ՓԲԸ/ Մասրիկ-1	Թալին	Մասրիկ-2	Գագարին	Դաշտադեմ	Մերձավան
2020	հզորություն ՄՎտ	10	100	-	-	-	-	-	-
	էլ. Էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	17	170	-	-	-	-	-	-
2021	հզորություն ՄՎտ	10	100	55	-	-	-	-	-
	էլ. Էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	17	170	120	-	-	-	-	-
2022	հզորություն ՄՎտ	10	100	55	10	15	17	10	7
	էլ. Էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	17	170	120	22	30	25	13	11
2023	հզորություն կՎտ	10	100	55	10	15	17	10	7
	էլ. Էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	17	170	120	22	30	25	13	11
2024	հզորություն ՄՎտ	10	100	55	10	15	17	10	7
	էլ. Էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	17	170	120	22	30	25	13	11

Հողմային էլեկտրակայան

Տարի	հզորություն/ մլն կՎտ.ժ	ԲԷՑ ՓԲԸ/ Լոռի-1	էներգոտեխնիկա ՓԲԸ/ էներգոտեխնիկա-1	ՍՈԼԱՐՍԻՍ ՓԲԸ/ Արգեստ	ԶՈԴ ՈՒԻՆԴ ՓԲԸ/ Զոդ Ուինդ	Արաց ՓԲԸ/ Քաջարան	Աքսիոնա Էներգիա Գլոբալ Էս.Էլ
2020	հզորություն ՄՎտ	2,64	0.02	4	1,3	0,25	-
	էլ. էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	3	0.02	9,9	3,5	0,06	-
2021	հզորություն ՄՎտ	2,64	0.02	4	1,3	0,25	-
	էլ. էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	3	0.02	9,9	3,5	0,06	-
2022	հզորություն ՄՎտ	2,64	0.02	4	1,3	0,25	200
	էլ. էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	3	0.02	9,9	3,5	0,06	600
2023	հզորություն կՎտ	2,64	0.02	4	1,3	0,25	200
	էլ. էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	3	0.02	9,9	3,5	0,06	600
2024	հզորություն ՄՎտ	2,64	0.02	4	1,3	0,25	200
	էլ. էներգիայի արտադրանք մլն կՎտ.ժ	3	0.02	9,9	3,5	0,06	600

Հայաստան-Իրան 400կՎ միջհամակարգային կապը գտնվում է շինարարության փուլում, վերջինիս շահագործման հանձնումը համաձայն կանխատեսումների պլանավորվում է 2021թ-ից (հնարավոր է հետաձգվի մինչև 2022թ.):

Հայաստան-Վրաստան (350 ՄՎտ դրվածքային հզորությամբ հաստատուն հոսանքի սարք) միջհամակարգային կապը գտնվում է պլանավորման փուլում, վերջինիս շահագործման հանձնումը համաձայն կանխատեսումների պլանավորվում է 2022թ-ից:

Հայաստան-Իրան և Հայաստան-Վրաստան նոր միջհամակարգային կապերի և նոր հզորությունների հարաչափերի և ՀՀ ԷԷՀ-ին միացման էլեկտրական սխեմաների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծրագրի հաշվարկային մասում:

2020-2024թթ-ի երկարաժամկետ ծրագրի կանխատեսումային պլանից հնարավոր շեղումները.

Ծրագրի մշակման ավարտական փուլում ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՀԾԿՀ-ի նախնական տեղեկատվության համաձայն պլանավորվում է նոր լիցենզիաների տրամադրում ևս 120 ՄՎտ գումարային հզորությամբ մինչև 5 ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանների կառուցման նպատակով: Սակայն վերջիններիս իրականացման ժամանակացույցների, տեղանքների և դրվածքային հզորությունների վերաբերյալ որևիցե տեղեկատվություն այս ծրագրի մշակման ավարտի դրությամբ չկա, հետևաբար ծրագրի շրջանակներում իրականացվող հաշվարկային գործընթացներում ներգրավելը վերջիններիս անորոշության հետևանքով անհնարին է: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ՀՀ ԷԷՀ-ի համար իրականացված բազմաթիվ ռեժիմային հետազոտությունները ցույց են տվել, որ ՀՀ ԷԷՀ-ի հաղորդման ցանցը հանդիսանալով բավականին հզոր և ունենալով ըստ տարրերի թողունակության որոշակի պաշար, ընդունակ է հաղորդել համակարգին միացված համեմատաբար փոքր հզորությամբ էլեկտրակայանների արտադրանքը առանց էական ուժեղացման միջոցառումների անհրաժեշտության, սակայն Ցանցային կանոններով նախատեսված երկարաժամկետ ծրագրի վերանայման գործընթացի շրջանակներում արևային կայանների դրվածքային հզորությունների, տեղանքի և միացման կետերի վերաբերյալ ստույգ տեղեկատվության առկայության պարագայում հնարավոր կլինի հետագայում ստույգ գնահատել վերջիններիս ազդեցությունը ՀՀ ԷԷՀ-ի ռեժիմների վրա և անհրաժեշտության դեպքում մշակել հաղորդման ցանցի տեղային ուժեղացման միջոցառումների ծրագիրը:

Հնարավոր են ժամանակացույցի շեղումներ Հայաստան-Իրան 400կՎ միջհամակարգային կապի մասով, ինչը պայմանավորված է նրանով, որ 400 կՎ ե/թ-ների շինարարությունը դեռ սկսված չէ: Համաձայն «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի նոր կանխատեսման Հայաստան-Իրան 400 կՎ նոր կապը շահագործման կարող է հանձնվել 2022թ-ին, այսինքն նախապես ներկայացված ժամանակացույցից մեկ տարի շեղումով: Քանի որ, երկարաժամկետ ծրագրի մշակման շրջանակներում իրականացվել են լայնածավալ հաշվարկային գործընթացներ 2020-2024թթ-ի

բոլոր հաշվեկշիռների համար և որպես ծանրագույն ռեժիմներ առավել մանրակրկիտ դիտարկվել են 2024թ-ի ռեժիմները իրենց խնդրահարույց N-1 ռեժիմային իրավիճակներով, ապա Հայաստան-Իրան 400 կՎ միջհամակարգային կապի ըստ շահագործման հանձնման ժամանակացույցի շեղումը չի կարող առաջացնել որևիցե խնդիր մշակված ծրագրի արդյունքների արդիականության և կիրառելիության մասով:

Համաձայն «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի տրամադրած կանխատեսման՝ 400 կՎ ե/թ-ներից մեկը պետք է կառուցվեր Հրազդանում, սակայն տվյալ աշխատանքի ավարտական փուլում «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի նոր կանխատեսումների համաձայն վերջինիս փոխարեն նախատեսվում է 400 կՎ ե/թ-ի կառուցումը Դդմաշենում: Եթե հաշվի առնենք այն, որ ՀՀ ԷԷՀ-ի պարագայում համակարգի կայուն, հուսալի և անվտանգ աշխատանքի վրա հիմնականում ազդեցություն են ունենալու 400 կՎ ցանցի միջհամակարգային և ներհամակարգային ԷՀԳ-երը (համաձայն «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի կողմից տրամադրած նոր տեղեկատվության 400 կՎ ԷՀԳ-երի հարաչափերի մասով որևիցե փոփոխություն չկա) և միևնույն ժամանակ այն հանգամանքը, որ Հրազդան և Դդմաշեն 400 կՎ ե/թ-ների միջև էլեկտրական հեռավորությունը միմյանցից զգալի չէ, ապա այս մասով իրականացված հետազոտությունները չեն կորցնում իրենց արդիականությունը և կիրառելիությունը: Սակայն ներկայիս ծրագրի հետագայում վերանայման շրջանակներում (Ցանցային կանոններում ներկայացված պահանջներին համաձայն) այս հարցին պետք է անդրադառնալ կրկին: Սա պայմանավորված է նրանով, որ տվյալ ծրագրի վերանայման ժամանակ կարող են ի հայտ գալ նոր հանգամանքներ պլանավորվող 400 կՎ ցանցի տեխնիկական հարաչափերի, ե/թ-ների տեղանքի և այլ անհրաժեշտ տեղեկատվության մասով:

ՀՀ ԷԷՀ-ի 2020-2024թթ-ի երկարաժամկետ ծրագրի մշակման շրջանակներում հիմնարար տեսանկյունից դիտարկվել է ԷԷՀ-ի զարգացման երկու սցենար՝ **Սցենար 1** և **Սցենար 2**: **Սցենար 1**-ի հիմքում ընկած է Հայաստան-Իրան 400 կՎ միջհամակարգային կապը, **Սցենար 2**-ի հիմքում՝ նաև Հայաստան-Վրաստան (350 ՄՎտ դրվածքային հզորությամբ հաստատուն հոսանքի սարք) միջհամակարգային կապը:

Յուրաքանչյուր սցենարը տարանջատվում է նաև ըստ ՀՀ ԷԷՀ-ի էլեկտրա-էներգիայի ներքին սպառման կանխատեսումների, այսպես կոչված դեպքերի՝ բազային և լավատեսական:

ՀՀ ԷԷՀ-ի Էլեկտրաէներգիայի ներքին սպառման կանխատեսումները մշակվել են «ԷԳՀԻ» ՓԲԸ-ում մշակված հատուկ մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են ռազմավարական կառավարման և ռեգրեսիոն վերլուծության տեսությունների մեթոդները: Մոդելի հիմքում ընկած են հետևյալ մոտեցումները և նախնական տեղեկատվությունը՝

- ՀՀ զարգացումները բնորոշող մակրոտնտեսական ցուցանիշների ռետրո-սպեկտիվ (պատմական) տվյալները՝ ՀՆԱ, բնակչության քանակ, ՀՆԱ-ում տնտեսության ոլորտների մասնաբաժին և այլն,
- Էլեկտրաէներգիայի սպառման ռետրոսպեկտիվ (պատմական) տվյալները ըստ ՀՀ տնտեսության ոլորտների (աղբյուրը՝ ՀՀ ՀԾԿՀ),
- Հավաքագրած տեղեկատվության համեմատական վերլուծություն և էլեկ-տրաէներգիայի պահանջարկի վրա դրանց ազդեցության աստիճանի որոշում:

Էլեկտրաէներգիայի պահանջարկի գնահատումն իրականացվել է ըստ տնտեսության ոլորտների՝ արդյունաբերություն, ծառայություններ, տրանսպորտ, գյուղատնտեսություն և բնակչություն, հիմք ընդունելով 2003-2017թթ-ի ռետրո-սպեկտիվ (պատմական) տվյալները:

Դիտարկվել է ՀՆԱ-ի փոփոխման կանխատեսման երկու դեպք՝

- **բազային**՝ ՀՆԱ-ի փոփոխությունը պահպանում է ՀՀ ռետրոսպեկտիվ (պատմական) միտումը,
- **լավատեսական**՝ ՀՆԱ-ի փոփոխությունը պահպանում է ՀԲ-ի կողմից մինչև 2020թ. կանխատեսվող տարեկան 4% մակարդակը:

Ստորև ներկայացված է 2020-2024թթ-ի ՀՀ ԷԷՀ-ի էլեկտրաէներգիայի ներքին սպառման կանխատեսումը բազային և լավատեսական դեպքերի համար՝

W, մլն. կՎտժ	2020	2021	2022	2023	2024
բազային	6,426.3	6,452.9	6,477.5	6,500.3	6,521.4
լավատեսական	6,674.6	6,799.7	6,928.1	7,060.1	7,195.8

2020-2024թթ-ի ՀՀ ԷԷՀ-ի էլեկտրաէներգիայի ներքին սպառման տարեկան աճի կանխատեսումները տոկոսային հարաբերակցությամբ բազային և լավատեսական դեպքերի համար ներկայացված են աղյուսակում՝

Էլեկտրաէներգիայի տարեկան աճ, %	2020	2021	2022	2023	2024
բազային	0.44	0.42	0.38	0.35	0.32
լավատեսական	1.86	1.87	1.89	1.91	1.92

2020-2024թթ-ի ՀՀ ԷԷՀ-ի էլեկտրաէներգիայի ներքին սպառման կանխատեսման մաթեմատիկական մոդելի՝ անալիտիկ արտահայտությունների, ելակետային տվյալների և արդյունքների ստացման գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ծրագրի հաշվարկային մասում:

2020-2024թթ-ին Հայաստան-Իրան միջհամակարգային կապերով ՀՀ ԷԷՀ-ից դեպի Իրանի ԷԷՀ հաղորդման ենթակա էլեկտրաէներգիայի կանխատեսվող ծավալները ըստ բազային և լավատեսական դեպքերի ներկայացված են ստորև աղյուսակում՝

W, մլն. կՎտժ	2020	2021	2022	2023	2024
բազային	1,534.13	5,843.26	6,231.61	6,724.23	6,604.61
լավատեսական	1,442.05	5,685.71	5,918.51	6,206.19	5,974.18

Լավատեսական դեպքում դեպի Իրանի ԷԷՀ Էլեկտրաէներգիայի կանխատեսվող արտահանման ծավալների նվազեցումը բազային դեպքի համեմատ պայմանավորված է լավատեսական դեպքում ՀՀ ԷԷՀ-ում էլեկտրաէներգիայի ներքին սպառման ծավալների բազային դեպքի համեմատ մեծ լինելու հանգամանքով:

Այսպիսով, ծրագրի մշակման շրջանակներում դիտարկվել են հետևյալ սցենարները ըստ ներքին սպառման դեպքերի՝

սցենար	ՀՀ ԷԷՀ-ի էլեկտրաէներգիայի ներքին սպառման դեպքեր
Սցենար 1	բազային
Սցենար 1	լավատեսական
Սցենար 2	բազային


Էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման հաշվեկշիռները ըստ էլեկտրաէներգիայի ներքին սպառման կանխատեսումների՝ բազային և լավատեսական, մանրակրկիտ աղյուսակային տեսքով ներկայացված են ծրագրի Հավելված 2-ում:

Ծրագրի մշակման շրջանակներում կազմվել են հզորության հաշվեկշիռներ ըստ դիտարկվող ժամանակահատվածի՝ սեզոնների, ամիսների, օրական ժամային ռեժիմների: Վերջիններիս գնահատման և վերլուծության արդյունքում ընտրվել են ԷԷՀ-ի վրա առավել ազդեցության տեսանկյունից ռեժիմները (հզորության հաշվեկշիռները): Ի դեպ ընտրությունը իրականացվել է ըստ դիտարկվող ժամանակահատվածի՝ տարիների, սեզոնների, ամիսների առավելագույն, կիսապիկային և նվազագույն ռեժիմներին համապատասխանող ժամերի, հաշվի առնելով՝

- դիտարկված ժամանակահատվածի համար էլեկտրակայանների կողմից ներկայացված պլանային վերանորոգման ամսական կտրվածքով ժամանակացույցները և տնօրինելի հզորության հայտերը,
- ՀՀ ԷԷՀ-ի հզորության ներքին առավելագույն և նվազագույն պահանջարկները,
- Հայաստան-Իրան և Հայաստան-Վրաստան նոր միջհամակարգային կապերով հոսքերի առավելագույն և նվազագույն ռեժիմները,
- Այլընտրանքային աղբյուրներով էլեկտրակայանների մասնակցությունը ՀՀ ԷԷՀ-ի օրական կիսապիկային ռեժիմներում:

Արդյունքում **Սցենար 1**-ի բազային և լավատեսական դեպքերի և **Սցենար 2**-ի բազային դեպքի համար ըստ 2020-2024թթ-ի տարիների մշակվել են ՀՀ ԷԷՀ-ի հզորության հաշվեկշիռները, որոնք հիմք են ընդունվել ծրագրի մշակման համար հաշվարկներում և հետազոտություններում (մանրամասները հասանելի են ծրագրի հաշվարկային մասում):

Ծրագրի իրականացման գրաֆիկական արտապատկերումը ներկայացված է ստորև՝


ՀՀ ԷԷՀ-ի երկարաժամկետ պլանավորման 2020-2024 թթ ծրագրի կառուցվածքը
Սցենար 1
Սցենար 2
ՀՀ ներքին սպառում (բազային)
ՀՀ ներքին սպառում (լավատեսական)
ՀՀ ներքին սպառում (բազային)
ԿՌ հաշվարկ
ԿՄ հաշվարկ
ԴԿ հաշվարկ
ԿՌ հաշվարկ
ԿՌ հաշվարկ
ԿՄ հաշվարկ
ԴԿ հաշվարկ
Ջրմեր Գարուն Ամառ Աշուն
Առավելագույն Գիսասպիկային Նվազագույն
Ջրմեր, Գարուն Ամառ, Աշուն (առավելագույն)
Ամառ (առավելագույն)
Ջրմեր (առավելագույն)
Գարուն (առավելագույն)
Գարուն (առավելագույն)
Գարուն (առավելագույն)
Ծանցի բեռնախտան աշխատանք
N-1 հաշվարկ
ԷէԿ-ների հերթերության պահպանման ապահովման կարգավորման աշխատանք
ԷէԿ-ների գերաբեռնման պահպանման կարգավորման աշխատանք
Ց-ֆ կ.մ. հաղորդիչների ընթացման
N-1 հաշվարկ (ընտրովի դեպքերի համար)
ԷէԿ-ի կառուցման գնահատման
Ամառային ժամանակահատվածում ջրային ռեսուրսների առկայության գնահատման
Ծանցի բեռնախտան աշխատանք
N-1 հաշվարկ
ԷէԿ-ների հերթերության պահպանման կարգավորման աշխատանք
ԷէԿ-ների գերաբեռնման պահպանման կարգավորման աշխատանք
Ց-ֆ կ.մ. հաղորդիչների ընթացման
N-1 հաշվարկ (ընտրովի դեպքերի համար)
ԷէԿ-ի կառուցման գնահատման
Ամառային ժամանակահատվածում ջրային ռեսուրսների առկայության գնահատման, ներառյալ վնասատու տեսակների կենսաբանական
Հաշվարկային ռեժիմների՝ հոսքաբաշխումների վերլուծություն
Լարման ռեժիմների վերլուծություն
Հաղորդող ցանցի զարգացման և հզորացման միջոցառումների մշակում
Նոր կամ վերակառուցվող տեղակայանքների ազդեցությունը ԷԷՀ-ի ռեժիմների վրա

Գրաֆիկական արտապատկերման համաձայն ծրագրի մշակման համար իրականացվել են բազմաթիվ Բնականոն և Վթարային ռեժիմների մոդելավորում և հաշվարկ, արդյունքների վերլուծություն և միջոցառումների մշակում: Իրականացվել են բազմաթիվ Բնականոն ռեժիմային հաշվարկներ, N-1 Վթարային ռեժիմների հաշվարկներ, ստատիկ և դինամիկ կայունության հաշվարկներ, ՀՀ ԷԷՀ-ի էլեկտրակայանների առաջնային, երկրորդային, երրորդային և սառը պահուստների հաշվարկներ, լարման ռեժիմների հաշվարկներ, ԿՄ$^{(3)}$ ռեժիմների հաշվարկներ, նոր կամ վերակառուցվող տեղակայանքների առկայության դեպքում վերջիններիս ԷԷՀ-ի վրա ազդեցության գնահատում՝ ԷԷՀ-ի պահվածքի ուսումնասիրություն և այլն:

Ուստի վերը նշված ուսումնասիրությունների իրականացման նպատակով դիտարկված սցենարներից յուրաքանչյուրի համար ըստ 2020-2024թթ-ի տարիների, ամիսների, առավելագույն, կիսապիկային և նվազագույն ռեժիմների մշակվել են հզորության հաշվեկշիռներ, որոնք ներառում են 2020-2024թթ-ի ժամանակահատվածում ՀՀ ԷԷՀ-ի ներքին և միջհամակարգային կապերի ռեժիմներով պայմանավորված հնարավոր կանխատեսումային ռեժիմային իրավիճակները: Դրանցից յուրաքանչյուրի համար իրականացվել է N-1 Վթարային ռեժիմային իրավիճակների մոդելավորում և հազարավոր հաշվարկներ: Հաշվարկների արդյունքում բացահայտված խնդրահարույց ռեժիմային իրավիճակները առանձնացվել են և ենթարկվել են մանրակրկիտ ուսումնասիրության, որի հիման վրա անհրաժեշտության դեպքում մշակվել են հաղորդման ցանցի ուժեղացման և թույլատրելի ռեժիմների ապահովման և կառավարման համար նվազագույն ծախսումներով միջոցառումներ՝ ՀՀ ԷԷՀ-ի հուսալի և անվտանգ աշխատանքի ապահովման ներքո:

ՀՀ ԷԷՀ-ի 2020թ-ի ռեժիմները նմանատիպ են 2019թ-ի դրությամբ ռեժիմներին և չեն պարունակում ուշադրության արժանի յուրահատկություններ: Սա պայմանավորված է նրանով, որ 2020թ-ի ընթացքում համաձայն կանխատեսումային պլանի չի նախատեսվում զգալի ծավալներով նոր հզորությունների մուտք ՀՀ ԷԷՀ կամ նոր միջհամակարգային կապերի շահագործման հանձնում: ՀՀ ԷԷՀ նոր հզորությունների մուտքը պլանավորվում է մասամբ 2021թ-ից և զգալի 2022թ-ից:

ՀՀ ԷԷՀ-ի 2020-2024թթ-ի զարգացումներով պայմանավորված մշակվել են հաղորդման ցանցի ուժեղացման հետևյալ միջոցառումները՝

- «Լիճք» 220/110/38.5 կՎ ԱՏ ե/թ-ում 2019թ-ի դրությամբ առկա 2x63 ՄՎԱ հզորությամբ ԱՏ՝
  - *I տարբերակ*. համալրել ևս 2x63 ՄՎԱ ԱՏ-ով՝ արդյունքում ունենալով ենթակայանում 4x63 ՄՎԱ ԱՏ-ներ,
  - *II տարբերակ*. Փոխարինել 2x63 ՄՎԱ ԱՏ-ները 2x125 ՄՎԱ ԱՏ-ով:

  «Լիճք» ե/թ-ի Նորոգման և Վթարային N-1 հնարավոր ռեժիմային իրավիճակների տեսանկյունից նպատակահարմար է *I տարբերակը*, քանի որ Վթարային անջատման պարագայում ենթակայանը կապահովի գումարային մինչև 189 ՄՎԱ հզորությամբ թողունակություն, իսկ ենթակայանում Նորոգման մեջ գտնվող մեկ ԱՏ-ի և միաժամանակ Վթարային անջատված մեկ ԱՏ-ի պարագայում գումարային թողունակությունը կկազմի 126 ՄՎԱ՝ ինչը հնարավորություն կտա ապահովելու ենթակայանի աշխատունակությունը նման ռեժիմային իրավիճակներում: *II տարբերակի* պարագայում կարելի է դիտարկել միայն կամ Նորոգման կամ Վթարային N-1 անջատման դեպքերը, արդյունքում ապահովելով ենթակայանի 125 ՄՎԱ թողունակություն: *II տարբերակի* ընտրությունը *I-ի տարբերակի* փոխարեն կարող է պայմանավորված լինել միայն 4x63 ՄՎԱ ԱՏ-ների ե/թ «Լիճք»-ում ֆիզիկապես նախատեսման անհնարությամբ:
- «Աշնակ» 220/110/10.5 կՎ 1x63 ՄՎԱ հզորությամբ ԱՏ ե/թ-ը առաջարկվում է համալրել ևս մեկ 63 ՄՎԱ հզորությամբ ԱՏ-ով: Սա պայմանավորված է «Աշնակ» ե/թ-ի ԱՏ-ի որոշ ձմեռային առավելագույն ռեժիմներում Վանաձոր2-Գյումրի2 և Գյումրի2-Աշնակ ԷՀԳ-ի Նորոգման և Վթարային անջատման դեպքում գերբեռնման ռեժիմներով:
- «Դմաշեն» 400 կՎ ԱՏ ե/թ-ում առաջարկվում է նախատեսել երկու 500 ՄՎԱ ԱՏ՝ մեկի փոխարեն: Սա պայմանավորված է նրանով, որ Հայաստան-Իրան 400 կՎ կապի առկայության պարագայում արդեն իսկ որոշ նախնական ռեժիմային իրավիճակներում՝ ձմռան, գարնան և ամռան ռեժիմներում, տեղի են ունենում ԱՏ-ի գերբեռնման դեպքեր:

- Հայաստան-Վրաստան հաստատուն հոսանքի սարքով նոր միջհամակարգային կապի առկայության պարագայում Դդմաշեն ԷՀԳ-ի Նորոգման կամ Վթարային անջատման N-1 ռեժիմային իրավիճակներում հնարավոր են Այրում ե/թ-ի հարակից 220 կՎ ցանցի տարրերի գերբեռնման դեպքեր: Խնդրի լուծման նպատակով առաջարկվում է կամ նախատեսել Դդմաշեն 400 կՎ ԷՀԳ-ի երկրորդ շղթան կամ ապահովել ԷԷՀ-ի թույլատրելի ռեժիմները հաստատուն հոսանքի սարքով հաղորդվող հոսքերի կարգավորման (իջեցման) միջոցով:
- ՀՀ ԷԷՀ-ի հաղորդման ցանցի տարբեր Նորոգման և Վթարային ռեժիմներում 55 ՄՎտ դրվածքային հզորությամբ Մասրիկ արևային կայանի հուսալի և անխափան աշխատանքի ապահովման և հաղորդման ցանցի առանձին ցանցային տեղամասերի գերբեռնումներից խուսափելու համար առաջարկվում է իրականացնել հաղորդման ցանցի ուժեղացման հետևյալ միջոցառումները՝

Հաղորդման ցանցի վիճակ 2019թ-ի դրությամբ						**Ուժեղացման միջոցառում**	
ՕԳ-ի հարակից ԵԿ-ների անվանումները		**ՕԳ-ի անվանումը**	**ՕԳ-ի մակնիշը**	**ՕԳ (կՄ)**	**ՕԳ-ի շղթանեի քանակը**	**ՕԳ-ի մակնիշը**	**ՕԳ-ի շղթաների քանակը**
ՕԳ-ի ելքային ԵԿ-ի անվանում	**ՕԳ-ի մուտքային ԵԿ-ի անվանում**						
1	2	3	4	5	6	7	8
ԵԿ «ՍևանՀԷԿ»	ԵԿ «Ծովագյուղ»	ՕԳ «Կապուտակ»	ԱՍ-150	12.4	1	ԱՍ-150	2
ԵԿ «ԾովագյուղՔ»	Ճ1	ՕԳ «Կապուտակ»	ԱՍ-150	31.8	1	ԱՍ-150	2
Ճ1	ԵԿ «Շորժա»	ՕԳ «Կապուտակ»	ԱՍ-150	1.8	1	ԱՍ-150	2
Ճ1	Ճ2	ՕԳ «Կապուտակ»	ԱՍ-150	52.3	1	ԱՍ-150	2
Ճ2	ԵԿ «Մասրիկ»	ՕԳ «Կապուտակ»	ԱՍ-150	8	1	ԱՍ-150	2
ԵԿ «Սոթք»	ԵԿ «Ծովինար»	ՕԳ «Փարվանա»	ԱՍ-150	39.1	1	ԱՍ-150	2
ԵԿ «Սոթք»	ԵԿ «Վարդենիս»	ՕԳ «Սոթք»	ԱՍ-150	15.8	1	ԱՍ-150	2
ԵԿ «Վարդենիս»	ԵԿ «Ծովինար»	ՕԳ «Ոսկեհատ»	ԱՍ-150	22.1	1	ԱՍ-150	2
ԵԿ «Ծովինար»	ԵԿ «Լիճք»	ՕԳ «Ոսկեհատ»	ԱՍ-150	26.8	1	ԱՍ-150	2
ԵԿ «Ծովինար»	ԵԿ «Լիճք»	ՕԳ «Փարվանա»	ԱՍ-150	27.2	1	ԱՍ-150	2

Միջոցառման արդյունքում առաջարկվում է «Կապուտակ», «Փարվանա», «Սոթք», «Ոսկեհատ» ԷՀԳ-երի համար նախատեսել երկրորդ շղթաները: Տվյալ միջոցառման իրականացման համար մոտավոր ծախսերը կկազմեն $29,035,428 ԱՄՆ: Ծախսերը հաշվարկվել են ՀՀ ներքին շուկայական գներով, սակայն քանի որ իրական ծախսերի մեծությունը կախված է բազմաթիվ ելակետային տվյալներից՝ ԷՀԳ-ի հետագծի տեղանքից, հենասյուների տիպից և քանակից և այլ անհրաժեշտ տեղեկատվությունից, հետևաբար իրական ծախսերը հայտնի կդառնան միայն նախագծային աշխատանքների արդյունքում:

ՀՀ ԷԷՀ-ի վերը նշված ուժեղանցման միջոցառումները այն գործընթացներն են, որոնք անհրաժեշտ են ՀՀ ԷԷՀ-ի հուսալի և անվտանգ շահագործման համար: Սակայն ԷԷՀ-ի տարբեր ռեժիմային իրավիճակներում՝ Նորոգման և N-1 Վթարային անջատման ռեժիմներում ԷԷՀ-ի նվազագույն ծախսումներով շահագործման համար դիտարկվել են բազմաթիվ ռեժիմային իրավիճակներ և ռեժիմների կարգավորման մոտեցումներ՝ ՀՀ ԷԷՀ-ի կայունության ապահովման, հուսալի և անվտանգ շահագործման համար (Հաշվարկային մանրամասները ներկայացված են ծրագրի հաշվարկային մասում և Հավելվածներ 3 և 5-ում):

Ծրագրի մշակման համար իրականացված բազմաթիվ լարման և ռեակտիվ հզորության ռեժիմների վերլուծությունները ցույց են տվել, որ ԷԷՀ-ի 400 կՎ ցանցի առկայության դեպքում լարման և ռեակտիվ հզորության ռեժիմների արդյունավետ կարգավորման պարագայում որևիցե խնդիրներ լարման կարգավորման և ռեակտիվ հզորության ռեժիմների ապահովման մասով չեն առաջանա: Սա պայմանավորված է նրանով, որ 400 կՎ ԷՀԳ-ների առկայության պարագայում ռեակտիվ հզորության պակասորդային ռեժիմներ ՀՀ ԷԷՀ-ում չեն լինելու: Սակայն անկախ ԷԷՀ-ի զարգացումներից և 400 կՎ ցանցի առկայությունից ՀՀ ԷԷՀ-ի լարման ռեժիմների օրական կարգավորումը պետք է իրականացվի ՀՀ ԷԷՀ-ի ջերմային և հիդրո էլեկտրակայանների գեներատորների ԷԷՀ-ի լարման և ռեակտիվ հզորության ռեժիմների կարգավորման գործընթացներում ներգրավմամբ: Միևնույն ժամանակ սեզոնային բնույթ կրող լարման կարգավորման

գործընթացը անհրաժեշտ է իրականացնել ՀՀ ԷԷՀ-ի 220 կՎ և բարձր լարման հաղորդման ցանցի ԱՏ ե/թ-ների ԱՏ-ների ելուստների կարգավորման միջոցով, իսկ 110, 35, 6(10), 0.4 կՎ բաշխիչ ցանցերում 110/35/6(10) կՎ սնող, 35/6(10) կՎ բաշխիչ և 6(10)/0.4 կՎ սպառողական ե/թ-ների տրանսֆորմատորների ելուստների կարգավորման և սպառողներին հնարավոր մոտ ռեակտիվ հզորության կոմպենսացիայի միջոցառումների շարունակական իրականացման միջոցով (Հաշվարկային մանրամասները ներկայացված են ծրագրի հաշվարկային մասում և Հավելված 4-ում):

Ծրագրի մշակման շրջանակներում իրականացվել են ՀՀ ԷԷՀ-ի 110-400 կՎ ցանցի $ԿՄ^{(3)}$ ռեժիմների հաշվարկման գործընթացներ՝ հիմք ընդունելով **Սցենար 1**-ի և **Սցենար 2**-ի կանխատեսումային հաշվեկշիռներով պայմանավորված ռեժիմները: Հաշվեկշիռների ընտրությունը իրականացվել է էլեկտրակայանների և այլ էլեկտրասարքվածքների ԷԷՀ-ի ռեժիմներում առավելագույն քանակով մասնակցության սկզբունքից ելնելով $ԿՄ^{(3)}$ հոսանքների առավելագույն արժեքներով ռեժիմների ՀՀ ԷԷՀ-ի վրա ազդեցության գնահատման համար: Հաշվարկների նպատակն էր ստուգել ՀՀ ԷԷՀ-ի պլանավորվող զարգացումների ներքո շահագործման մեջ գտնվող կոմուտացիոն սարքավորումների՝ տվյալ դեպքում անջատիչների, $ԿՄ^{(3)}$ ռեժիմներով պայմանավորված հոսանքներին դիմակայելու ընդունակությունը՝ համաձայն ԷԷՀ-ի հուսալիության և անվտանգության ցուցանիշների կողմից ներկայացվող պահանջների: $ԿՄ^{(3)}$ ռեժիմների հաշվարկների արդյունքների վերլուծության համաձայն, ՀՀ ԷԷՀ-ի կանխատեսումային զարգացումների պայմաններում ԷԷՀ-ի հաղորդման ցանցի ե/թ-ներում 2019թ-ի դրությամբ շահագործման մեջ գտնվող անջատիչների հարաչափերը բավարար են դիմակայելու ԷԷՀ-ի Վթարային ռեժիմներում առաջացող $ԿՄ^{(3)}$ հոսանքներին (Հաշվարկային մանրամասները ներկայացված են ծրագրի հաշվարկային մասում և Հավելված 6-ում):

Ինչ վերաբերում է ՀՀ ԷԷՀ-ի հաշվեկշռում գտնվող, 2019թ-ի դրությամբ պարբերաբար շահագործվող և համակարգի սառը պահուստ հանդիսացող հին տնտեսապես ոչ շահավետ էներգաբլոկերով Հրազդան ՋԷԿ-ի 2020-2024թթ-ի զարգացումների ներքո հաշվեկշռից (շահագործումից) դուրս բերմանը կամ պահպանմանը, ապա Հայաստան-Իրան 400 կՎ միջհամակարգային կապի և

ՀՇԳՑԷ (Ռենկո) ջերմային էլեկտրակայանի ՀՀ ԷԷՀ-ին միացման պարագայում Հրազդան ՋԷԿ-ի հետագա շահագործումն իր հին տնտեսապես ոչ շահավետ էներգաբլոկերով դառնում է ոչ արդիական: Սա պայմանավորված է նրանով, որ ՀՀ «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի մոտեցումների համաձայն Հայաստան-Իրան 220 կՎ և 400 կՎ միջհամակարգային կապերը անհրաժեշտության դեպքում հանդիսանալու են նաև որպես պահուստային հզորության աղբյուր (նաև սառը պահուստ) ՀՀ ԷԷՀ-ի համար, իսկ նոր 250 ՄՎտ հզորությամբ ՀՇԳՑԷ (Ռենկո) ջերմային էլեկտրակայանը՝ բազիսում աշխատող հուսալի և ՀՀ ԷԷՀ-ում տարբեր ռեժիմային իրավիճակներում հզորության հնարավոր պակասորդային ռեժիմների փոխհատուցող էլեկտրակայան: Սա հիմավորվում է նաև նրանով, որ ՀՀ ԷԷՀ-ի 2020-2024թթ-ի համար մշակված հզորության հաշվեկշիռներում և դիտարկված տարբեր ռեժիմային իրավիճակներում չի առաջացել Հրազդան ՋԷԿ ԲԲԸ-ի հին էներգաբլոկերի գործարկման անհրաժեշտություն:

ՀՀ ԷԷՀ-ի Հայաստան-Իրան 220 կՎ և 400 կՎ միջհամակարգային կապի ըստ ստատիկ կայունության սահմանի որոշմանն ուղղված բազմաթիվ ռեժիմային հաշվարկների արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ նշված կտրվածքի տարբեր կապերի առկայության պարագայում՝ Նորոգման և N-1 Վթարային ռեժիմային իրավիճակներում, Հայաստան-Իրան կապի թողունակությունը երկարատև թույլատրելի ռեժիմներում կտատանվի 330-1,924 ՄՎտ տիրույթում, իսկ կարճատև թույլատրելի ռեժիմներում՝ 513-2,217 ՄՎտ (մանրամասները հասանելի են ծրագրի հաշվարկային մասում):

Հետազոտություններ են իրականացվել նաև Հայաստան-Վրաստան հաստատուն հոսանքի սարքով միջհամակարգային կապի ըստ ստատիկ կայունության սահմանային արժեքի որոշման ուղղությամբ: Պետք է նշել, որ այն սահմանափակվում է հաստատուն հոսանքի սարքի 350 ՄՎտ դրվածքային հզորությամբ: Սակայն, եթե անտեսվի տվյալ սահմանափակումը, ապա Հայաստան-Վրաստան հաստատուն հոսանքի սարքով միջհամակարգային կապով ստատիկ կայունության առավելագույն արժեքը կկազմի 1,200 ՄՎտ՝ Հայաստանի ԷԷՀ-ից դեպի Վրաստանի ԷԷՀ փոխհոսքի հաղորդման դեպքում, և 1,000 ՄՎտ՝ Վրաստանի ԷԷՀ-ից դեպի Հայաստանի ԷԷՀ փոխհոսքի հաղորդման դեպքում:

Ծրագրի մշակման շրջանակներում իրականացված ՀՀ ԷԷՀ-ի դինամիկ կայունության հաշվարկային արդյունքների վերլուծության համաձայն տարբեր Նորոգման և Վթարային N-1 ռեժիմային իրավիճակներում (խոտորումներով պայմանավորված) առաջանալու են Հայաստան-Իրան և Հայստան-Վրաստան միջհամակարգային կապերով հոսքերի կարգավորման անհրաժեշտություններ, ինչպես նաև որոշ ռեժիմային իրավիճակներում ՀՀ ԷԷՀ-ի էլեկտրակայանների ռեժիմների կարգավորման անհրաժեշտություն՝ ՀՀ ԷԷՀ-ի նվազագույն ծախսումներով հուսալի և անվտանգ շահագործման համար (մանրամասները հասանելի են ծրագրի հաշվարկային մասում և Հավելված 7-ում):

ՀՀ ԷԷՀ-ի ռելեյական պաշտպանության և հակավթարային ավտոմատիկայի ՀՀ ԷԷՀ-ի 2020-2024թթ-ի զարգացումներին համապատասխանեցնելու համար մշակվել են հետևյալ միջոցառումները ըստ դիտարկված սցենարների՝

Սցենար 1-ի մասով՝

- ✓ Հրազդան ՋԷԿ (5 բլոկ)-ի ե/կ-ում (220կՎ հաղորդածող) ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.25 վրկ. (տես Հաշվ. № 11′),
- ✓ Հաշվարկ № 15-ում դիտարկված վթարային իրավիճակում գործարկվում է ԱՀՊՍ, սակայն ՀՇԳՑԷ (ՌԵՆԿՈ) ջերմային էլեկտրակայանի կայունությունը խախտվում է: Որպես կանխարգելիչ միջոցառում անհրաժեշտ է կիրառել ԿԽԿԱ,
- ✓ ՀԱԷԿ-ի ե/կ-ում (220կՎ հաղորդածող) ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.3 վրկ. (տես Հաշվ. № 17′ և Հաշվ. № 19′),
- ✓ Հաշվարկ № 21-ում դիտարկված վթարային իրավիճակում անջատվում են Նաիրիտ 1 և 2 110կՎ ԷՀԳ-ները, սակայն Երևան ՋԷԿ-ի կայունությունը խախտվում է: Որպես կանխարգելիչ միջոցառում անհրաժեշտ է կիրառել ԿԽԿԱ:

Սցենար 2-ի մասով՝

- ✓ Նորավան ե/կ-ում (400 կՎ հաղորդածող) ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.3 վրկ.-ից 0.24 վրկ. (տես Հաշվ. № 23′),
- ✓ Հաշվարկ № 29-ում դիտարկված վթարային իրավիճակում տեղի է ունենում ԿՄ$^{(3)}$ Նորավան-Ջուլֆա 400 կՎ ԷՀԳ-ում՝ Նորավան ե/կ-ի մոտ:

Անհաջող ԱԿՄ-ի արդյունքում տեղի է ունենում ԷԷՀ-ի կայունության խախտում: Որպես կանխարգելման միջոցառում առաջարկվում է ԱԿՄ-ի ժամանակը 2 վրկ.-ից բարձրացնել 3 վրկ. (տես Հաշվ. № 29′),

- ✓ Հրազդան ՋԷԿ (5 բլոկ)-ի ե/կ-ում (220կՎ հաղորդածող) ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.22 վրկ. (տես Հաշվ. № 32′),
- ✓ Հաշվարկ № 36-ում դիտարկված վթարային իրավիճակում տեղի է ունենում ԿՄ(3) Մարաշ-Երևան ՋԷԿ ԱՏ 220 կՎ ԷՀԳ-ի՝ Երևան ՋԷԿ ԱՏ-ի մոտ, որի արդյունքում գործարկվում է ԱՀՊՍ, սակայն ՀԾԳՑԷ (ՌԵՆԿՈ) ջերմային կայանի կայունությունը խախտվում է: Որպես կանխարգելիչ միջոցառում անհրաժեշտ է կիրառել ԿԽԿԱ,
- ✓ ՀԱԷԿ-ի ե/կ-ում (220կՎ հաղորդածողերի համակարգ 1 (տես Հաշվ. № 38)) ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.29 վրկ. (տես Հաշվ. № 38′),
- ✓ ՀԱԷԿ-ի ե/կ-ում (220կՎ հաղորդածողերի համակարգ 2 (տես Հաշվ. № 40)) ԱՀՊՍ-ի ժամանակը իջեցնել 0.35 վրկ.-ից 0.27 վրկ. (տես Հաշվ. № 40′),
- ✓ Հաշվարկ № 42-ում դիտարկված վթարային իրավիճակում տեղի է ունենում ԿՄ(3) Նաիրիտ-1 110 կՎ ԷՀԳ-ում՝ Երևան ՋԷԿ-ի մոտ: Անջատվում են Նաիրիտ 1 և 2 110կՎ ԷՀԳ-ները, սակայն Երևան ՋԷԿ-ի կայունությունը խախտվում է: Որպես կանխարգելիչ միջոցառում անհրաժեշտ է կիրառել ԿԽԿԱ:

Հաշվարկային մանրամասները հասանելի են ծրագրի հաշվարկային մասում և Հավելված 7-ում:

ԷԷՀ-ի ստատիկ և դինամիկ կայունության ապահովման նկատառումներից ելնելով առաջարկվում է ՀՀ ԷԷՀ-ի ստացիոնար և անցումային ռեժիմներում հուսալիության և անվտանգության ցուցանիշների վերահսկման, համակարգի ճկունության և կառավարելիության աստիճանի բարձրացման համար ՀՀ ԷԷՀ-ում ներդնել ԷԷՀ-ի հուսալիության և անվտանգության ցուցանիշների, անցումային ռեժիմների հարաչափերի մոնիթորինգի և թույլատրելի ռեժիմների ապահովման, ինչպես նաև հուսալի և արդյունավետ կառավարման համակարգերը (WAMS):

2020-2024թթ-ի ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար իրականացվել են ՀՀ ԷԷՀ-ի առաջնային, երկրորդային, երրորդային պահուստ-

ների հաշվարկներ՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր տարվա համար առավել ծանրաբեռնված ըստ ՀՀ ԷԷՀ-ի արտադրող էլեկտրակայանների և ներքին սպառման հզորության ռեժիմները (հաշվեկշիռները):

ՀՀ ԷԷՀ-ի 2020-2024թթ-ի համար անհրաժեշտ հզորության պահուստների արժեքները ամփոփ տեսքով ներկայացված են ստորև աղյուսակում:

ՀՀ ԷԷՀ-ի ըստ 2020-2024թթ-ի տարիների հաշվարկված հզորության պահուստների արժեքները (ՄՎտ)

տարի	$\Delta P_{պ}^{I}$	$\Delta P_{պ}^{II}$	$\Delta P_{պ}^{III}$	$\Delta P_{պ}^{III*}$
2020	19.4	31.93	56.2	166.2
2021	22.8	31.25	55.2	220.2
2022	26.4	31.25	55.2	255.2
2023	25.9	31.93	56.2	256.2
2024	25.0	31.38	55.4	255.4

*-ՀՀ ԷԷՀ-ի երրորդային պահուստն է հաշվի առած նաև ՀՀ ԷԷՀ-ի այլընտրանքային աղբյուրներով՝ արև և քամի, էլեկտրակայանների կողմից առաջացրած չպլանավորված գեներացիայի կորուստը:

Աղյուսակից երևում է, որ ըստ 2020-2024թթ-ի տարիների ՀՀ ԷԷՀ-ի համար առաջնային, երկրորդային և երրորդային պահուստների արժեքները գրեթե անփոփոխ են, բացառությամբ 2020թ և 2021թ առաջնային պահուստների արժեքների մասով, ինչը պայմանավորված է ՀՀ ԷԷՀ-ի այդ թվականների դրությամբ ոչ զգալի զարգացումներով՝ նոր հզորությունների ոչ զգալի մուտքով և էլեկտրաէներգիայի ներքին սպառման ոչ զգալի աճով: ՀՀ ԷԷՀ-ի երրորդային պահուստների ($\Delta P_{պ}^{III*}$) տարբերությունը ըստ տարիների պայմանավորված է այլընտրանքային աղբյուրներով էլեկտրակայանների մուտքով ՀՀ ԷԷՀ և երրորդային պահուստի արժեքների հաշվարկին կիրառված մոտեցումներով (մանրամասները ներկայացված են ծրագրի հաշվարկային մասում):

ԷԷՀ-ի հզորության սառը պահուստը նախատեսված է համակարգում ամենախոշոր էներգաբլոկի վթարային անջատումը փոխհատուցելու համար (տես ՀՀ ԷԷՀ-ի Հուսալիության և Անվտանգության ցուցանիշները):

Հզորության սառը պահուստի ցուցանիշներն են.

1) հզորության սառը պահուստի մեծությունը պետք է բավարարի ԷԷՀ-ի ամենախոշոր էներգաբլոկի անսպասելի վթարային անջատման դեպքում անջատված հզորությունը փոխհատուցելու համար:

2) հզորության սառը պահուստը պետք է մատուցվի պատահարից հետո՝ առավելագույնը 9 ժամվա ընթացքում:

Արտադրող էլեկտրակայանների միջև հզորության անհրաժեշտ պահուստի վերաբաշխումը և սառը պահուստի (էլեկտրակայանի կամ էներգաբլոկի) նախատեսման գործընթացը իրականացնում է ՀՀ «ԷԷՀՕ» ՓԲԸ-ն ՀՀ ԷԷՀ-ի համար հիմնվելով առաջնային, երկրորդային և երրորդային պահուստների հաշվարկային արժեքների վրա՝ ռեժիմների իր պլանավորման ժամանակ, ինչպես նաև ՀՀ ԷԷՀ-ի սառը պահուստի նախատեսման իր մոտեցումների հիման վրա:

Ամփոփելով, հարկ է նշել, որ ՀՀ ԷԷՀ-ի 2020-2024թթ-ի կանխատեսումային զարգացման գործընթացը, որի արդյունքում պլանավորվում է նոր հզորությունների, Հայաստան-Իրան 400 կՎ և Հայաստան-Վրաստան հաստատուն հոսանքի սարքով միջհամակարգային կապերի նախատեսումը, կնպաստի ՀՀ ԷԷՀ-ի աշխատանքի հուսալիության ու անվտանգության և ՀՀ էներգետիկ ռազմավարության անկախության բարձրացմանը: Դա հիմնականում պայմանավորված կլինի՝

- ✓ Հայաստան-Իրան 400 կՎ միջհամակարգային կապի առկայությամբ, ինչը կնպաստի Հայաստանի և Իրանի ԷԷՀ-ի միջև կապի ուժեղացմանը և հետևաբար ՀՀ ԷԷՀ-ի ռեժիմների կառավարելիության բարձրացմանը,
- ✓ ՀՀ ԷԷՀ-ի ստատիկ և դինամիկ կայունության սահմանի բարձրացմամբ և ներհամակարգային խնդիրների դիմակայման արդյունավետության բարձրացմամբ,
- ✓ Բազիսում աշխատող հզորությունների ավելացմամբ պայմանավորված ՀՀ ԷԷՀ-ի վթարայնության աստիճանի նվազմամբ և պահուստի մեծացմամբ, ԷԷՀ-ի մանևրայնության բարձրացմամբ,
- ✓ ՀՀ ԷԷՀ-ի էներգետիկ շուկայի ազատականացման գործընթացի շրջանակներում արդյունավետության և մրցունակության բարձրացմամբ,
- ✓ ՀՀ ԷԷՀ-ում նոր արտադրող հզորությունների ի հայտ գալով ՀՀ էներգետիկ ռազմավարության անկախության բարձրացմամբ:

Այսպիսով, 2020-2024թթ. ՀՀ ԷԷՀ-ի պլանավորվող զարգացումների և ներկայացված ծրագրում մշակված ուժեղացման միջոցառումների, Բնականոն, Նորոգման և Վթարային ռեժիմային իրավիճակներում ռեժիմների նախապես և ճկուն պլանավորման, ինչպես նաև ընթացիկ արդյունավետ կառավարման պարագայում, զգալիորեն կբարձրանա ՀՀ ԷԷՀ-ի կայունության և հուսալիության աստիճանը, կուժեղանա էլեկտրական կապը հարևան պետությունների՝ Իրանի և Վրաստանի ԷԷՀ-երի հետ, հնարավորություն ընձեռելով ՀՀ ԷԷՀ-ի ոչ միայն կայունության, հուսալիության բարձրացման և վթարայնության աստիճանի նվազեցման, այլ նաև հարևան պետությունների հետ շուկայական հարաբերությունների խորացման, էներգետիկ շուկայի ազատականացման գործընթացում մրցունակության բարձրացման՝ ի նպաստ ՀՀ տնտեսության զարգացման և հայ ժողովրդի բարեկեցության ապահովման:

Հավելված 1

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

2020-2024 թթ. ընթացքում նոր տեղադրվող կամ փոխարինվող տրանսֆորմատորների (ավտոտրանսֆորմատորների) պարամետրեր

Աղյուսակ 2

Տրանսֆորմատոր (ավտոտրանսֆորմատոր)	ТДЦ-280000/220-41
Ենթակայան	
Միացման սխեմա և խումբ	$Y_{H/D}$-11
Փաթույթների անվանական հզորություն, ՄՎԱ	ВН-280 НН-280
Փաթույթների անվանական լարումներ, կՎ	ВН-242 НН15,75
Ճյուղավորումների լարումներ, կՎ	Չկան ճյուղավորումներ (РПН)
Փաթույթների անվանական հոսանքներ, կԱ	ВН-0,668 НН-10,264
Փաթույթների կարճ միացման լարումներ, %	11,2
Փաթույթների կարճ միացման հզորթության կորուստներ, կՎտ	769,3
Պարապ ընթացքի հոսանք, %	0,072
Պարապ ընթացքի հզորության կորուստ, կՎտ	117,73

2020-2024 թթ. ընթացքում կայաններում նոր տեղադրվող կամ փոխարինվող տուրբինների, գեներատորների և գրգռման համակարգերի պարամետրեր

Աղյուսակ 3

Գեներատոր և տուրբին	
Գեներատորի տիպ	ТВВ-220-2Е43
Արտադրող գործարան	"Электросила"
Գեներատորի անվանական հզորություն, ՄՎտ	236
Գեներատորի հզորության գործակից $\cos\varphi$	0,85
Պտտման արագություն, պտտ/րոպե	3000
Գեներատորի GD^2, տմ^2	
Տուրբինի GD^2, տմ^2	
Տիպ	
Տուրբինի անվանական հզորություն, ՄՎտ	
Ստատորի անվանական լարում, կՎ	15750
Ստատորի անվանական հոսանք, Ա	10180
Ստատորի ակտիվ դիմադրություն, Օհմ	
Գեներատորի ռեակտիվ դիմադրություններ	
X_d, հմ	2,45
X_q, հմ	
X_d', հմ	0,3
X_d'', հմ	0,197
X_q'', հմ	
X_1, հմ	
X_2, հմ	0,24
X_0, հմ	0,117
X_d, Օհմ	
X_q, Օհմ	
X_d', Օհմ	
X_d'', Օհմ	
X_q'', Օհմ	
X_1, Օհմ	
X_2, Օհմ	
X_0, Օհմ	

Ժամանակի հաստատուններ	
T_{d0}, վրկ	7,57
T_d', վրկ	1,76
T_d'', վրկ	0,02
T_{q0}'', վրկ	
T_q'', վրկ	
P-Q' դիագրամ	
Գրգռման տիպ	
Գրգռիչի տիպ	
Գրգռման համակարգի անվանական հզորություն, կՎտ	
Գրգռման համակարգի անվանական լարում, Վ	
Գրգռման համակարգի անվանական հոսանք, Ա	
Գրգռման համակարգ	
Գրգռման տիպ	Տրիստրային ինքնագրգռումով
Գրգռիչի տիպ	СТС-2П-380-2800-2,5 УХЛ4
Գրգռման համակարգի անվանական հզորություն, կՎտ	
Գրգռման համակարգի անվանական լարում, Վ	380
Գրգռման համակարգի անվանական հոսանք, Ա	2800
Ուժեղացման պատիկություն (кратность форсировки)	2,5
• ըստ լարման, հմ	2,0
• ըստ հոսանքի, հմ	20
Ուժեղացման տևողություն (длительность форсировки) , վրկ	

• հմ- հարաբերական միավոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2020-2024թթ. նախատեսված տուրբագեներատորների պլանային վերանորոգումների ժամանակացույցը

անվանումը	2020	2021	2022	2023	2024
Տուրբագեներատոր թիվ3	հիմնական	ընթացիկ	ընթացիկ	ընթացիկ	հիմնական
Տուրբագեներատոր թիվ4	հիմնական	ընթացիկ	ընթացիկ	ընթացիկ	հիմնական

Աղյուսակում հաշվի են առնված 2018թ. թիվ 3 գեներատորի փոխարինման և 2019թ. թիվ 4 գեներատորի նախնական փոխարինման աշխատանքները:

Ներկայացվել է 08.10.2018թ.:

СОГЛАСОВАНО
Главный инженер ЗАО "ААЭК"
_____ А.Р. Григорян
"02" 11 2018 г

УТВЕРЖДАЮ
Генеральный директор ЗАО "ААЭК"
_____ Варданян М.Г.
"03" 11 2018г.

Перспективный график останова Блока №2 Армянской АЭС с 2020г. по 2024год

N п/п	Планируемое время останова блока для работ связанных с ремонтом, модернизацией и продлением срока эксплуатации		Год ремонта
	Дата с__ по__	продолжительность	
1	4	5	6
1.	01.05-12.09	135	2020
2.	20.04-03.06	45	2021
3.	20.04-03.06	45	2022
4.	20.04.-03.06	45	2023
5.	20.04-23.06.	65	2024

Примечание:

1. Настоящий график носит предварительный характер и может быть откорректирован

ЗГИР М.С.Карапетян

НОППР О.Г.Геворкян

C:\Users\armtan.georgi\Desktop\ГГ\ остов.гибок\ ПЛПР-2018 - копия.doc

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ «ՀՍՑԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020թ. (ըստ ամիսների)

№	Անվանումներ	Չափի միավոր	Ընդամենը 2020թ.	այդ թվում՝ ըստ ամիսների												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր		հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
				01-31	01-29	01-31	01-30	01-31	01-30	01-31	01-31	01-12	13-30	01-31	01-30	01-31
1.	հզորություն առավելագույն	ՄՎտ		*420*	*415*	*410*	*400*	*0*	*0*	*0*	*0*	*0*	*400*	*410*	*415*	*420*
	նվազագույն			*140*	*140*	*140*	*140*						*140*	*140*	*140*	*140*
2.	Էլեկտրական էներգիայի արտադրությունը	մլն. կՎտժ	*2 283,4*	*312,5*	*288,8*	*305,0*	*288,0*	*0,0*	*0,0*	*0,0*	*0,0*	*0,0*	*172,8*	*305,0*	*298,8*	*312,5*
3.	Էլեկտրական էներգիայի օգտակար սպառումը	մլն. կՎտժ	*2 107,5*	*288,8*	*266,7*	*281,3*	*265,1*	*0,0*	*0,0*	*0,0*	*0,0*	*0,0*	*159,6*	*281,3*	*275,9*	*288,8*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ «ՀԱԾԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թվականից 2024 թվականը ընկած ժամանակահատվածը՝ ըստ ամիսների

№	Անվանումներ	Չափի միավոր	Ընդամենը 2021թ.	այդ թվում՝ ըստ ամիսների															
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ		մայիս	հունիս		հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր			դեկտեմբեր
				01 - 31	01-28	01-31	01-19	20-30	01-31	01-03	04 - 30	01-31	01-31	01-30	01-31	01-14	15-18	16-30	01-31
1.	հզորություն առավելագույն	ՄՎտ		420	415	410	400	0	0	0	390	385	385	390	400	410	210	0	420
	նվազագույն			140	140	140	140				140	140	140	140	140	140	70		140
2.	Էլեկտրական էներգիայի արտադրություն	մլն.. կՎտժ	2 953,2	312,5	278,9	305,0	182,4	0,0	0,0	0,0	252,7	286,4	286,4	280,8	297,6	137,8	20,2	0,0	312,5
3.	Էլեկտրական էներգիայի օգտակար առաքում	մլն.. կՎտժ	2 727,0	288,8	257,5	281,3	167,9	0,0	0,0	0,0	233,9	264,9	264,9	259,9	273,9	127,1	18,1	0,0	288,8

№	Անվանումներ	Չափի միավոր	Ընդամենը 2022թ.	այդ թվում՝ ըստ ամիսների															
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ		մայիս	հունիս		հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր			դեկտեմբեր
				01 - 31	01-28	01-31	01-19	20-30	01-31	01-03	04-30	01-31	01-31	01-30	01-31	01-14	15-18	19-30	01-31
1.	հզորություն առավելագույն	ՄՎտ		420	415	410	400	0	0	0	390	385	385	390	400	410	210	0	420
	նվազագույն			140	140	140	140				140	140	140	140	140	140	70		140
2.	Էլեկտրական էներգիայի արտադրությունը	մլն.. կՎտժ	2 953,2	312,5	278,9	305,0	182,4	0,0	0,0	0,0	252,7	286,4	286,4	280,8	297,6	137,8	20,2	0,0	312,5
3.	Էլեկտրական էներգիայի օգտակար առաքում	մլն.. կՎտժ	2 727,0	288,8	257,5	281,3	167,9	0,0	0,0	0,0	233,9	264,9	264,9	259,9	273,9	127,1	18,1	0,0	288,8

№	Անվանումներ	Չափի միավոր	Ընդամենը 2023թ.	այդ թվում՝ ըստ ամիսների															
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ		մայիս	հունիս		հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր			դեկտեմբեր
				01 - 31	01-28	01-31	01-19	20-30	01-31	01-03	04-30	01-31	01-31	01-30	01-31	01-14	15-18	19-30	01-31
1.	հզորություն առավելագույն	ՄՎտ		420	415	410	400	0	0	0	390	385	385	390	400	410	210	0	420
	նվազագույն			140	140	140	140				140	140	140	140	140	140	70		140
2.	Էլեկտրական էներգիայի արտադրությունը	մլն.. կՎտժ	2 953,2	312,5	278,9	305,0	182,4	0,0	0,0	0,0	252,7	286,4	286,4	280,8	297,6	137,8	20,2	0,0	312,5
3.	Էլեկտրական էներգիայի օգտակար առաքում	մլն.. կՎտժ	2 727,0	288,8	257,5	281,3	167,9	0,0	0,0	0,0	233,9	264,9	264,9	259,9	273,9	127,1	18,1	0,0	288,8

№	Անվանումներ	Չափի միավոր	Ընդամենը 2024թ.	այդ թվում՝ ըստ ամիսների															
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ		մայիս	հունիս		հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր			դեկտեմբեր
				01 - 31	01-28	01-31	01-19	20-30	01-31	01-23	24-30	01-31	01-31	01-30	01-31	01-14	15-18	19-30	01-31
1.	հզորություն առավելագույն	ՄՎտ		420	415	410	400	0	0	0	390	385	385	390	400	410	210	0	420
	նվազագույն			140	140	140	140				140	140	140	140	140	140	70		140
2.	Էլեկտրական Էներգիայի արտադրությունը	մլն.. կՎտժ	2 775,9	312,5	288,8	305,0	182,4	0	0	0	65,5	286,4	286,4	280,8	297,6	137,8	20,2	0,0	312,5
3.	Էլեկտրական էներգիայի օգտակար առաքում	մլն.. կՎտժ	2 563,0	288,8	266,7	281,3	167,9	0	0	0	60,7	264,9	264,9	259,9	273,9	127,1	18,1	0,0	288,8

Գլխավոր Ճարտարագետ Ա. Գրիգորյան

Կատարող ՇՊՏԲ ԱՁ Ք. Ստեփանյան

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Հրազդան-5»

2020-2024թթ. ընթացքում ընկերության էներգաօբյեկտներում 220, 110 կՎ լարման միացությունների և գեներատորների ՌՊԱ սարքվածքների նոր թվային ՄՊ սարքվածքներով փոխարինման ժամանակացույց ըստ տարեթվերի

Էներգաօբյեկտի անվանումը	Միացությունը	Նոր պաշտպանության տեղադրման ժամկետը	Ծանոթություն
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Հրազդան-5» հիմնարկ	«ՊՇԵԿ-2» 220կՎ օ.գ. հիմնական և պահուստային պաշտպանությունները	2020թ.	Համաձայն ԷԷՀՕ 26.04.2018թ. №01-12/231 առաջադրանքի
	«Գուգարք-2» 220կՎ օ.գ. հիմնական և պահուստային պաշտպանությունները	2020թ.	Համաձայն ԷԷՀՕ 26.04.2018թ. №01-12/231 առաջադրանքի

2020-2024թթ. ընթացքում կայաններում նոր տեղադրվող կամ փոխարինվող տուրբինների, գեներատորների և գրգռման համակարգերի պարամետրերը*

Գործող գրգռման համակարգ	
Գրգռման տիպ	CTH-380-3900-2E-УХЛ4
Գրգռիչի տիպ	BT4000-2
Գրգռիչի անվանական հզորություն, կՎտ	3100
Գրգռիչի անվանական լարում, Վ	560
Գրգռիչի անվանական հոսանք, Ա	3200
Ուժեղացման պատիկություն (кратность форсировки)	
• Ըստ լարման, հմ	2
• Ըստ հոսանքի, հմ	2
Ուժեղացման տևողություն (длительность форсировки), վրկ	20

Գործող գրգռման համակարգում փոփոխվող թվային ղեկավարման սարքի (СУТ) տեխնիկական տվյալներ Իմպուլսների ձևավորման համակարգ IFM-150 "Basler Electric"	
Սնուցման լարում	120VAC
Դիապազոն	32 մինչև 132VAC
Հաճախականություն	50 Hz
Սնուցման հաստատուն լարում	125 VDC
Դիապազոն	90 մինչև 150 VDC
Ղեկավարող ազդանշան	-10 մինչև +10 VDC
Աշխատանքային ջերմաստիճան	-40 մինչև +60°C
Ինտերֆեյս	RS-232
Ծառայության ժամկետը	20 տարի
Իմպուլսների ուժեղացման համակարգ (սարքի տիպը 9261400127 "Basler Electric")	
Հաստատուն հոսանքի մուտք նոմինալ լարում	125±10% VDC
Աշխատանքային դիապազոն	90 մինչև 150 VDC
Մուտքային հզորություն	12W
Փոփոխական հոսանքի մուտք	120±10% VAC
Աշխատանքային դիապազոն	85 մինչև 132 VAC
Հաճախականություն	50 Hz
Աշխատանքային ջերմաստիճան	-40 մինչև +60°C

* աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2020թ. ընթացքում:

«Գազպրոմ - Արմենիա» ՓԲԸ «Հրազդան 5» հիմնարկի տուրբոգեներատորների կանխատեսվող նորոգումների ժամանակացույց **2020-2024թ.թ.**

Ագրեգատի անվանումը	Նորոգման տեսակը	Տարի				
		2020թ.	2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.
Շոգետուրբինային գեներատոր	Ընթացիկ 1	-	Մայիս	-	Օգոստոս	Մարտ
	Ընթացիկ 2	Հոկտեմբեր	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Հոկտեմբեր	Հոկտեմբեր
	Միջին	Հունիս-Հուլիս	-	-	-	-
	Հիմնական	-	-	Մայիս-Հուլիս	-	-
Գազատուրբինային գեներատոր*	"A"(ընթացիկ)	-	-	-	-	-
	"B"(միջին)	-	-	-	-	-
	"C"(հիմնական)	Հունիս-Հուլիս	-	-	-	-

* Գազատուրբինային ագրեգատի նորոգումները կատարվում են էկվիվալենտ 9000 ժամը լրանալուց հետո:

ԱՏԲ պետ Ա. Ավթանդիլյան

ԿՏԱ պետ Ռ. Ռաֆյան

ԷԱ պետ Ռ. Միքայելյան

«Գազպրոմ - Արմենիա» ՓԲԸ «Հրազդան 5» հիմնարկի հզորության հաշվեկշռի և էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսումները 2020-2024թ.թ. համար՝

Ամիսներ		2020թ.													
		1	2	3	4	5	6	7		8	9	10	11		12
Ամսաթիվ		1-31	1-29	1-31	1-30	1-31	1-30	ԱՆ 2	2-31	1-31	1-30	1-31	ԸՆ 1	13-30	1-31
								8-30	1-23				1-12		
1	Շոգեգազային ԼԷԿ-երթերի պայմանագրային հզորության, այդ թվում՝	440	440	440	440	440	440	0	0	440	440	440	0	440	440
1,1	Շոգետուրբին	300	300	300	300	300	300	0	0	300	300	300	0	300	300
1,2	Գազային տուրբին	140	140	140	140	140	140	0	0	140	140	140	0	140	140
2	Պլանային նորոգման հանվող հզորությունները, այդ թվում՝	0	0	0	0	0	0	440	440	0	0	0	440	0	0
2,1	Շոգետուրբին	0	0	0	0	0	0	300	300	0	0	0	300	0	0
2,2	Գազային տուրբին	0	0	0	0	0	0	140	140	0	0	0	140	0	0
3	Գումարային սահմանափակումներ, այդ թվում՝	0	0	0	0	40	80	0	0	100	100	60	0	0	0
3,1	Բնակլիմայական պայմաններից հզորության սահմանափակումներ	0	0	0	0	40	80	0	0	100	100	60	0	0	0
4	Տեղրինելի հզորություն կոնդենսացիոն ռեժիմում	440	440	440	440	400	360	0	0	340	340	380	440	0	440	440
5	Էլ. էներգիայի արտադրություն, մլն. կՎտժ	275	248	275	266	223	45	0	0	43	190	205	262	0	144	262

Էլ. էներգիայի արտադրության ծավալները գնահատված են՝ էներգահամակարգի կողմից նախորդ տարիներին առաջադրված բեռնավորման 75%...84% պայմաններից ելնելով:

2021թ.															
Ամիսներ		1	2	3	4	5		6	7	8	9		10	11	12
Ամսաթիվ		1-31	1-28	1-31	1-30	1-10	ընդ 1 11-31	1-30	1-31	1-31	ընդ 2 1-12	13-30	1-31	1-30	1-31
1	Հոգեզգային էներգաբլոկի պարամետրային հզորություն, այդ թվում՝	440	440	440	440	440	0	440	440	440	0	440	440	440	440
1,1	Շոգետուրբին	300	300	300	300	300	0	300	300	300	0	300	300	300	300
1,2	Գազային տուրբին	140	140	140	140	140	0	140	140	140	0	140	140	140	140
2	Պլանային նորոգման հանվող հզորությունները, այդ թվում՝	0	0	0	0	0	440	440	440	0	440	0	0	0	0
2,1	Շոգետուրբին	0	0	0	0	0	300	300	300	0	300	0	0	0	0
2,2	Գազային տուրբին	0	0	0	0	0	140	140	140	0	140	0	0	0	0
3	Գումարային սահմանափակումներ, այդ թվում՝	0	0	0	0	40	0	80	100	50	0	60	0	0	0
3,1	Բնակլիմայական պայմաններից հզորության սահմանափակումներ	0	0	0	0	40	0	80	100	50	0	60	0	0	0
4	Տեղինելի հզորություն կոնդենսացիոն ռեժիմում	440	440	440	440	400	0	360	340	390	0	380	0	440	440
5	Էլ. Էներգիայի արտադրություն, մլն. կՎտժ	275	248	275	266	72	0	194	190	190	0	116	262	253	262

Էլ. էներգիայի արտադրության ծավալները գնահատված են՝ էներգահամակարգի կողմից նախորդ տարիներին առաջադրված բեռնավորման 75%...84% պայմաններից ելնելով

		2022													
Ամիսներ		1	2	3	4	5	6	7		8	9	10		11	12
Ամսաթիվ		1-31	1-28	1-31	1-30	ՀՆ 2			18-31	1-31	1-30	Ընդ 2	13-31	1-30	1-31
						1-31	1-30	1-17				1-12			
1	Շոգեգազային էներգաբլոկի պայմանագրային հզորություն, այդ թվում՝	440	440	440	440	0	0	0	440	440	440	0	440	440	440
1,1	Շոգետուրբին	300	300	300	300	0	0	0	300	300	300	0	300	300	300
1,2	Գազային տուրբին	140	140	140	140	0	0	0	140	140	140	0	140	140	140
2	Պլանային նորոգման հանվող հզորությունները, այդ թվում՝	0	0	0	0	440	440	440	0	0	0	440	0	0	0
2,1	Շոգետուրբին	0	0	0	0	300	300	300	0	0	0	300	0	0	0
2,2	Գազային տուրբին	0	0	0	0	140	140	140	0	0	0	140	0	0	0
3	Գումարային սահմանափակումներ, այդ թվում՝	0	0	0	0	0	0	0	100	50	60	0	0	0	0
3,1	Բնաշրջմայական պայմաններից հզորության սահմանափակումներ	0	0	0	0	0	0	0	100	50	60	0	0	0	0
3,2	Սարքավորումների մաշվածությամբ պայմանավորված սահմանափակումներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
4	Տնօրինելի հզորություն կոնդենսացիոն ռեժիմում, այդ թվում՝	440	440	440	440	0	0	0	340	390	380	0	440	440	440
5	Էլ. էներգիայի արտադրություն, մլն. կՎտժ	275	248	275	266	0	0	0	80	190	205	0	161	253	262
Էլ. էներգիայի արտադրության ծավալները գնահատված են՝ էներգահամակարգի կողմից նախորդ տարիներին առաջադրված բեռնավորման 75%...84% պայմաններից ելնելով															

2023թ.															
	Ամիսներ	1	2	3	4	5	6	7	8		9	10		11	12
	Ամսաթիվ	1-31	1-28	1-31	1-30	1-31	1-30	1-31	ԸՆ 1 1-20	21-31	1-30	ԸՆ 2 1-12	13-31	1-30	1-31
1	Շոգեգազային էներգաբլոկի պայմանագրային հզորություն, այդ թվում՝	440	440	440	440	440	440	440	0	440	440	0	440	440	440
1,1	Շոգետուրբին	300	300	300	300	300	300	300	0	300	300	0	300	300	300
1,2	Գազային տուրբին	140	140	140	140	140	140	140	0	140	140	0	140	140	140
2	Պլանային նորոգման հանվող հզորությունները, այդ թվում՝	0	0	0	0	0	0	0	440	0	0	440	0	0	0
2,1	Շոգետուրբին	0	0	0	0	0	0	0	300	0	0	300	0	0	0
2,2	Գազային տուրբին	0	0	0	0	0	0	0	140	0	0	140	0	0	0
3	Գումարային սահմանափակումներ, այդ թվում՝	0	0	0	0	40	80	100	0	50	60	0	0	0	0
3,1	Բնակլիմայական պայմաններից հզորության սահմանափակումներ	0	0	0	0	40	80	100	0	50	60	0	0	0	0
3,2	Սարքավորումների մաշվածությամբ պայմանավորված սահմանափակումներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
4	Տնօրինելի հզորություն կոնդենսացիոն ռեժիմում, այդ թվում՝	440	440	440	440	400	360	340	0	390	380	0	440	440	440
5	Էլ. էներգիայի արտադրություն, մլն. կՎտժ	275	248	275	266	223	194	190	0	61	205	0	144	253	262

Էլ. էներգիայի արտադրության ծավալները գնահատված են՝ էներգահամակարգի կողմից նախորդ տարիներին առաջադրված բեռնավորման 75%...84% պայմաններից ելնելով

	2024թ.												
Ամիսներ	1	2	3	4	5	6	7	8	9	10		11	12
Ամսաթիվ	1-31	1-28	ԸՆ 1 1-20	21-31	1-31	1-31	1-30	1-31	1-30	1-30	ԸՆ 2 1-12	13-31	1-30	1-31
1 Շոգեգազային էներգաբլոկի պայմանագրային հզորություն, այդ թվում՝	440	440	0	440	440	440	440	440	440	440	0	440	440	440
1,1 Շոգետուրբին	300	300	0	300	300	300	300	300	300	300	0	300	300	300
1,2 Գազային տուրբին	140	140	0	140	140	140	140	140	140	140	0	140	140	140
2 Պլանային նորոգման հանվող հզորությունները, այդ թվում՝	0	0	440	0	0	0	0	0	0	0	440	0	0	0
2,1 Շոգետուրբին	0	0	300	0	0	0	0	0	0	0	300	0	0	0
2,2 Գազային տուրբին	0	0	140	0	0	0	0	0	0	0	140	0	0	0
3 Գումարային սահմանափակումներ, այդ թվում՝	0	0	0	0	40	80	100	100	50	60	0	0	0	0
3,1 Բնակլիմայական պայմաններից հզորության սահմանափակումներ	0	0	0	0	40	80	100	100	50	60	0	0	0	0
4 Տեղծինելի հզորություն կոնդենսացիոն ռեժիմում, այդ թվում՝	440	440	0	0	400	360	340	340	390	380	0	440	440	440
5 Էլ. Էներգիայի արտադրություն, մլն. կՎտժ	275	248	0	98	266	223	194	190	190	205	0	144	253	262

1. Շոգեգազային Էներգաբլոկի տեխնիկական նվազագույն հզորությունը՝ 280 ՄՎտ
2. Շոգեգազային էներգաբլոկի հզորության զարգացման և նվազեցման արագությունը 3 ՄՎտ/րոպե
3. Շոգեգազային էներգաբլոկի հզորության զարգացման և նվազեցման արագությունը վթարային պայմաններում 8-10 ՄՎտ/րոպե

ԱՏԲ պետ Հ. Ալթունեիլյան

12.12.1

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի պայմանագրային և տնօրինելի հզորությունները 2024թվականի համար

ՄՎտ

N	Ամիսներ	1	2	3	4			5	6	7	8		9		10	11	12
	Ամսաթիվ	1-31	1-28	1-31	1-13	14-20	21-30	1-31	1-30	1-31	1-3	4-31	1-22	23-30	1-31	1-30	1-31
1	Պայմանագրային հզորություն	227	227	227	227	0	227	227	227	227	227	0	0	227	227	227	227
2	Պլանային նորոգման հանվող հզորությունները	0	0	0	0	227	0	0	0	0	0	227	227	0	0	0	0
3	Գումարային սահմանափակումներ, այդ թվում	12	16	19	15	0	15	22	25	30	30	0	0	25	18	13	12
3.1	Բնակլիմայական պայմաններից հզորության սահմանափակումներ	8	12	15	15	0	15	22	25	30	30	0	0	25	18	10	8
3.2	Ջերմային բեռնվածքով պայմանավորված սահմանափակումներ	4	4	4	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	3	4
4	Տնօրինելի հզորություն կոնդենսացիոն ռեժիմում	219	215	212	212	0	212	205	202	197	197	0	0	202	209	217	219
5	Տնօրինելի հզորություն ջերմաֆիկացիոն ռեժիմում	215	211	208	212	0	212	205	202	197	197	0	0	202	209	214	215
6	Էլ. Էներգիայի արտադրություն [մլն. կՎտժ]	160,0	141,8	154,8	117,0			152,5	145,4	146,6	14,2		38,8		155,5	154,1	160,0

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի պայմանագրային և տնօրինելի հզորությունները 2020 թվականի համար

ՄՎտ

N	Ամիսներ	1	2	3	4			5	6	7	8	9			10	11	12
	Ամսաթիվ	1-31	1-28	1-31	1-12	13-19	20-30	1-31	1-30	1-31	1-31	1-6	7-13	14-30	1-31	1-30	1-31
1	Պայմանագրային հզորություն	227	227	227	227	0	227	227	227	227	227	227	0	227	227	227	227
2	Պլանային նորոգման հանվող հզորությունները	0	0	0	0	227	0	0	0	0	0	0	227	0	0	0	0
3	Գումարային սահմանափակումներ, այդ թվում	12	16	19	15	0	15	22	25	30	30	25	0	25	18	13	12
3.1	Բնակլիմայական պայմաններից հզորության սահմանափակումներ	8	12	15	15	0	15	22	25	30	30	25	0	25	18	10	8
3.2	Ջերմային բեռնվածքով պայմանավորված սահմանափակումներ	4	4	4	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	3	4
4	Տնօրինելի հզորություն կոնդենսացիոն ռեժիմում	219	215	212	212	0	212	205	202	197	197	202	0	202	209	217	219
5	Տնօրինելի հզորություն ջերմաֆիկացիոն ռեժիմում	215	211	208	212	0	212	205	202	197	197	202	0	202	209	214	215
6	Էլ. էներգիայի արտադրություն [մլն. կՎտժ]	160,0	141,8	154,8	117,0			152,5	145,4	146,6	146,6	111,5			155,5	154,1	160,0

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի պայմանագրային և տնօրինելի հզորությունները 2021 թվականի համար

ՄՎտ

N	Ամիսներ	1	2	3	4	5			6	7	8	9			10	11	12
	Ամսաթիվ	1-31	1-28	1-31	1-30	1-9	10-16	17-31	1-30	1-31	1-31	1-5	6-12	13-30	1-31	1-30	1-31
1	Պայմանագրային հզորություն	227	227	227	227	227	0	227	227	227	227	227	0	227	227	227	227
2	Պլանային նորոգման հանվող հզորությունները	0	0	0	0	0	227	0	0	0	0	0	227	0	0	0	0
3	Գումարային սահմանափակումներ, այդ թվում	12	16	19	15	22	0	22	25	30	30	25	0	25	18	13	12
3.1	Բնակլիմայական պայմաններից հզորության սահմանափակումներ	8	12	15	15	22	0	22	25	30	30	25	0	25	18	10	8
3.2	Ջերմային բեռնվածքով պայմանավորված սահմանափակումներ	4	4	4	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	3	4
4	Տնօրինելի հզորություն կոնդենսացիոն ռեժիմում	219	215	212	212	205	0	205	202	197	197	202	0	202	209	217	219
5	Տնօրինելի հզորություն ջերմաֆիկացիոն ռեժիմում	215	211	208	212	205	0	205	202	197	197	202	0	202	209	214	215
6	Էլ. Էներգիայի արտադրություն [մլն. կՎտժ]	160,0	141,8	154.8	152,6		118,1		145,4	146,6	146.6		111,5		155,5	154,1	160,0

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի պայմանագրային և տնօրինելի հզորությունները 2022 թվականի համար

ՄՎտ

N	Ամիսներ	1	2	3	4			5	6	7	8	9			10	11	12
	Ամսաթիվ	1-31	1-28	1-31	1-10	11-17	18-30	1-31	1-30	1-31	1-31	1-4	5-11	6-30	1-31	1-30	1-31
1	Պայմանագրային հզորություն	227	227	227	227	0	227	227	227	227	227	227	0	227	227	227	227
2	Պլանային նորոգման հանվող հզորությունները	0	0	0	0	227	0	0	0	0	0	0	227	0	0	0	0
3	Գումարային սահմանափակումներ, այդ թվում	12	16	19	15	0	15	22	25	30	30	25	0	25	18	13	12
3.1	Բնակլիմայական պայմաններից հզորության սահմանափակումներ	8	12	15	15	0	15	22	25	30	30	25	0	25	18	10	8
3.2	Ջերմային բեռնվածքով պայմանավորված սահմանափակումներ	4	4	4	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	3	4
4	Տնօրինելի հզորություն կոնդենսացիոն ռեժիմում	219	215	212	212	0	212	205	202	197	197	202	0	202	209	217	219
5	Տնօրինելի հզորություն ջերմաֆիկացիոն ռեժիմում	215	211	208	212	0	212	205	202	197	197	202	0	202	209	214	215
6	Էլ. Էներգիայի արտադրություն (մլն. կՎտժ)	160,0	141,8	154,8	117,0			152,5	145,4	146,6	146,6	111,5			155,5	154,1	160,0

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող Էներգաբլոկի պայմանագրային և տեղծինելի հզորությունները 2023 թվականի համար

ՄՎտ

N	Ամիսներ	1	2	3	4			5	6	7	8	9			10	11	12
	Ամսաթիվ	1-31	1-28	1-31	1-15	17-23	24-30	1-31	1-30	1-31	1-31	1-3	4-10	11-30	1-31	1-30	1-31
1	Պայմանագրային հզորություն	227	227	227	227	0	227	227	227	227	227	227	0	227	227	227	227
2	Պլանային նորոգման հանվող հզորությունները	0	0	0	0	227	0	0	0	0	0	0	227	0	0	0	0
3	Գումարային սահմանափակումներ, այդ թվում	12	16	19	15	0	15	22	25	30	30	25	0	25	18	13	12
3.1	Բնակլիմայական պայմաններից հզորության սահմանափակումներ	8	12	15	15	0	15	22	25	30	30	25	0	25	18	10	8
3.2	Ջերմային բեռնվածքով պայմանավորված սահմանափակումներ	4	4	4	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	3	4
4	Տեղծինելի հզորություն կոնդենսացիոն ռեժիմում	219	215	212	212	0	212	205	202	197	197	202	0	202	209	217	219
5	Տեղծինելի հզորություն ջերմաֆիկացիոն ռեժիմում	215	211	208	212	0	212	205	202	197	197	202	0	202	209	214	215
6	Էլ. Էներգիայի արտադրություն [մլն. կՎտժ]	160,0	141,8	154,8	117,0			152,5	145,4	146,6	146,6	111,5			155,5	154,1	160,0

«Հրազդէկ» ԲԲԸ

«ՀրազԷԿ» ԲԲԸ-ի **2020-2024թթ.** ըստ ամիսների հզորության հաշվեկշռի և էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսումները

		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	Գումարա-յին
2020	Հզորություն, ՄՎտ	400	400	335.5	200	200	200	400	400	333.3	400	400	400	4068.8
	Արտադրանք, մլն.կՎտ.ժ	90	80	40	0	0	0	0	0	0	0	50	90	350
2021	Հզորություն, ՄՎտ	400	400	367.74	366.67	400	400	400	303.2	366.67	367.74	400	400	4572.02
	Արտադրանք, մլն.կՎտ.ժ	90	70	40	0	0	0	0	0	0	0	50	90	340
2022	Հզորություն, ՄՎտ	400	400	367.74	366.67	400	400	200	309.7	366.67	367.74	400	400	4378.52
	Արտադրանք, մլն.կՎտ.ժ	90	70	40	0	0	0	0	0	0	0	50	90	340
2023	Հզորություն, ՄՎտ	400	400	367.74	366.67	400	400	400	400	366.67	367.74	400	400	4668.82
	Արտադրանք, մլն.կՎտ.ժ	90	70	40	0	0	0	0	0	0	0	50	90	340
2024	Հզորություն, ՄՎտ	400	400	335.5	400	400	400	400	303.2	400	335.5	400	400	4574.2
	Արտադրանք, մլն.կՎտ.ժ	90	80	40	0	0	0	0	0	0	0	50	90	350

Ներկայացվել է 15.10.2018թ:

2020-2024 թվականների ընթացքում ընկերության էներգաօբյեկտներում 220,110կՎ լարման միացությունների և գեներատորների ՌՊԱ սարքվածքների նոր թվային ՄՊ սարքվածքներով փոխարինման ժամանակացույց ըստ տարեթվերի

Աղյուսակ 1

Էներգաօբյեկտի անվանումը	Միացությունը	Նոր ռելեական պաշտպանության տեղադրման ժամկետը	Ծանոթություն
«ՀրազՋԷԿ» 220կՎ ԲԲՍ	ՕԳ «Գուգարք-1»	2021	
	ՕԳ «Մարաշ»	2020	
	ՕԳ «Նորադուզ»	2021	
	ՕԳ «ՊՇԷԿ-1»	2021	
	ՕԳ «Կենտրոն»	2020	
	Միջպողային անջատիչ	2020	
	Շրջանցիկ անջատիչ	2021	
«ՀրազՋԷԿ» 110կՎ ԲԲԵ	ՕԳ «Ախթամար»	2023	
	ՕԳ «Հանքավան»	2023	
	ՕԳ «Տարոն»	2022	
	Միջպողային անջատիչ	2022	
	Շրջանցիկ անջատիչ	2022	

2020-2024 թվականների ընթացքում ընկերության էներգաօբյեկտներում 220,110կՎ լարման միացությունների և գեներատորների անջատիչների, հոսանքի, լարման տրանսֆորմատորների և պարպիչների փոխարինման ժամանակացույց ըստ տարեթվերի

Աղյուսակ 2

Էներգաօբյեկտի անվանումը	Միացությունը	Հոսանքի, լարման տր-ի և անջատիչների տեղադրման ժամկետը	Ծանոթություն
«Հրազդէկ» 220կՎ ԲԲՍ	Բլոկ №№ 1, 2, 3	2020	
	ՕԳ «Մարաշ»	2020	
	ՕԳ «Կենտրոն»	2020	
	ՕԳ «Գուգարք»	2021	
	ՕԳ «ՊՇԷԿ»	2021	
	ՕԳ «Նորադուզ»	2021	
	Միջ.դողային անջատիչ	2020	
	Շրջանցիկ անջատիչ	2021	
	220կՎ I, II հավ. դողերի լար. տր-ր	2020	
«Հրազդէկ» 110կՎ ԲԲՆ	ՕԳ «Հանքավան»	2023	
	ՕԳ «Տալուն»	2022	
	ՕԳ «Ախթամար»	2023	
	Միջդողային անջատիչ	2022	
	Շրջանցիկ անջատիչ	2022	
	110կՎ I, II հավ. դողերի լար. տր-ր	2022	

«Հ ա ս տ ա տ ու մ եմ»

«ՀրազԶԷԿ» ԲԲԸ
ԳՏՏ – գլխավոր ճարտարագետ
_____ Ա.Վ.Մնացականյան
«03» ____10_____2018թ.

«ՀրազԶԷԿ» ԲԲԸ հիմնական սարքավորումների
2020-2024թթ. կանխատեսվող նորոգումների
Ժամանակացույց

Սարք.-ների անվանումը	Սարքավորումների տեսակը	2020թ	2021թ	2022թ	2023թ	2024թ
Բլոկ 1	Կ-200-130 ՏԳՄ-104Ս	ընթացիկ	միջին	ընթացիկ	ընթացիկ	միջին
Բլոկ 2	Կ-200-130 ՏԳՄ-104Ս	միջին	ընթացիկ	ընթացիկ	ընթացիկ	ընթացիկ
Բլոկ 3	Կ-200-130 ՏԳՄ-104Ս	ընթացիկ	ընթացիկ	հիմնական	ընթացիկ	ընթացիկ
Բլոկ 4	Կ-200-130 ՏԳՄ-104Ս	հիմնական	ընթացիկ	ընթացիկ	ընթացիկ	ընթացիկ

ԳՃՏ նորոգման գծով Տ. Մարտիրոսյան

Ժամանակացույց

«ՀրազԷԿ» ԲԲԸ հիմնական սարքավորումների
2020թ. կանխատեսվող նորոգումների

Սարք.-ների անվանումը	Սարքավորումների տեսակը	2020թ.											
		Ըստ ամիսների											
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Բլոկ 1	Կ-200-130 ՏԳՄ-104Մ			Ը 2÷6 (120)						Ը 7÷12 (120)			
Բլոկ 2	Կ-200-130 ՏԳՄ-104Մ				Մ 1÷30 (720)						Ը 19÷23 (120)		
Բլոկ 3	Կ-200-130 ՏԳՄ-104Մ			Ը 16÷20 (120)						Ը 21÷25 (120)			
Բլոկ 4	Կ-200-130 ՏԳՄ-104Մ					Հ 1÷91 (744)	Հ 1÷30 (720)						Ը 14÷18 (120)

Ը - ընթացիկ նորոգում
Մ - միջին մորոգում
Հ - հիմնական նորոգում

ԳՏՏ նորոգման գծով Տ. Մարտիրոսյան

Ժամանակացույց

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ հիմնական սարքավորումների
2021թ. կանխատեսվող նորոգումների

Սարք.-ների անվանումը	Սարքավորումների տեսակը	2021թ.											
		Ըստ ամիսների											
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
